



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20066

28199-197
-93

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
==== ею. =====

20 03

- Русские
- 5) Если у вас имеется в доме заразный бо
заявите об этом в библиотеку при
книги.

КОГДА КНИГА ВЗЯТА

47 21/2

80 4/5

№ 303. 3.

Центральная Служба Управления
ИДЕНТИФИКАЦИИ 1936 Г.
№ _____

891.99-192

ՆՈՐ

5745
590

543-93

ԵՐԳԱՐԱՆ

ԿՍՄ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ


66

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՈՑ
ԵՒ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԱԾՈՅ

ՍԿԱՆԱ, ԵՍՈՍՋՆՈՅ ՏԱՐԵՂԱՐՁԷ

ԱՍ. ՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԻՆՁ ՅԱՅԺՄՍ



ՈՒԹԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱԷՔ ԳԱՎԱՅԵԱՆ

— 1872 —

706

3258-ԱԳ

ՅԱՌԱՉԱՐԱՆ



Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՅ

ԳՐԱՎԱՃԱՍ

ՅՈՎՍԷՓ ԳՎՎԱՅԵԱՆ



410
41
40

Ամեն Ազգ ամեն ժամանակ իւր բանաստեղծութիւնն և իւր երգիչներն ունեցեր է, որք իրենց ապրած ժամանակին հանդամանաց համեմատ հասարակութեան զգացման թարգման կանգնելով երգեր կամ ողբացեր են ժողովրդեան մը, ազգի մը բաղբը կամ թշուառութիւնը: Աւստի իմաստունք մեծ կարեւորութիւն կրնծայեն երգերու, և ազգի մը պատմական ճշգրիտ և կենդանի նկարագիրը կը համարին զանոնք:

Ի հարկէ մեր ազգն ալ ունեցեր է իւր ազգային կեանքը քնարներու վրայ երգող բանաստեղծներ, որոնց ամենէն ընտրելազոյն և հնազոյններէն հազիւ մէկ քանի պատառիկ ազատեր են ժամանակին ամենամախ ժանեաց ձեռքէն մեր Խորենացի քերթողահօր չնորհիւ, իսկ վերջին դարերու համար երգերու նշանաւոր հաւաքածոյ մը չէ հնար ընծայել ազգին, բաց ՚ի անոնցմէ որ ասդիս անդին դանաղան գրոց անկիւնները ցրել կը զտնուին:

Շատ տարի չկայ, որ Բեդրսպուրիի Տփիսիսու մէջ ազգային երգոց հաւաքածոյներ հրատարակուեցան, որոնք բոլորն ալ վերջին ժամանակի գործեր են. բայց և այնպէս գովելի և բազմօգուտ աշխատութիւն:

Երանի՛ թէ ուրիշներն ալ, աւելի Հայաստան
աշխարհին զանազան գաւառներն երդուած եր-
գերն հաւաքէին և սպագրութեամբ ՚ի լոյս ըն-
ծայէին ՚ի վայելս բանասիրաց :

Այսու մտօք ՚ի լոյս ընծայուեցաւ այս եր-
գարանը՝ որ գլխաւորապէս մօտ տարիներս Տաճ-
կաստանի և Ռուսաստանի մէջ յօրինուած բա-
նաստեղծական երգոց հաւաքածոյ մ'է, ուրկից
սպագայ բանասիրութիւնը մեծապէս լոյս պիտի
առնէ մեր ժամանակները հասարակաց վրայ աի-
րող զգացմանց և գաղափարաց վրայ :

Յ. Գ. ԳԱՎԱՅԵԱՆ

ՆՈՐ

Ե Ր Գ Ա Ր Ա Ն



ԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ա՛ն Հայաստան, Հայաստան,
Ընդէր կորուսեր տէրըդ .
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերըդ :

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր .
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ո՛չ հանքերիդ պէս հանքեր :

Հողըդ պողաբեր՝ աղնիւ,
Քարերըդ ողջ ակունք են .
Գետերըդ լիքն անթիւ,
Կարմրախայտ ձկունք են :

Լերինքըդ ծաղիկ հաղած՝
Իբր հարսնացեալ օրերդ .
Եղջերուքըդ վաստակած,
Ի՞նչ շահ որ չունիս որսորդ :

Այգեացիք ամեն մէկն ,
Էր դրախտ եղեմական .
Բայց անբաղդութեան տէգն ,
Խղեաց լարրդ կենսական :

Թող՝ թշնամիք բերկրին ,
Մեր աչաց արտասուքով .
Յուսամ՝ երկար չի մնան ,
Նրանք էլ ուրախ հոգւով :

Աստուած ամենադէտ է ,
Անսահման արդարադատ .
Անաչառութեամբ դիտէ ,
Լաւին լաւ տալ , վատին վատ :

Ես եմ Սէյաթի կինն ,
Մաղաթեան տոհմի Ոսկին .
Հայրենեաց կաթողինն ,
Հաւատացէ՛ք իմ խօսքին :

1838 մայիս 28 'ի Վայոց ձորն .

ՏԻՒՆ ՄԱՂԱԹԵԱՆՑ (1)



(1) Ոսկի Յովսէփեան անուն : Է սա բարեպաշտուհի ամուսինն ազգային բարձրագուշ երգչի Տ. Պետրոսի տէր Յովսէփեան Մաղաթեանց . Սէյեաթ մակամուսնելոյ : Երանի թէ Հոյսատան շատ ունենար այդպիսի կաթողիքն հայրենեաց և ուսումնաւ տենչ տիկնայք :

ԵՄԿ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24

Արեք Հայկազունք , յառաջ ընթանանք ,
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք .
Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոչեց ,
Նոր հոգի , նոր կեանք Անոր պարգեւեց :
Եկե՛ք բարեկամք , առ բարձրեալն Աստուած՝
Ուղղենք մեր մտաթանք սուրբ սրտէ բղխած .
Կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն :

Ձրկանք , բռնութիւն , վատթար վարչութեան ,
Բերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան .
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց ,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ ,
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեղ :
Կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն :

Պնջեց ամենայն կարծիք անձնական ,
Խեղդեց ամենայն ձայն անհատական .
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին ,
Առաջնորդ լինել գործոց ազգային :

Մյն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի ,
 Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի .
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայերս անարգված՝ դրկեց բարձրացուց ,
 Մարդկային կոչման մեղ արժանացուց .
 Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած ,
 Մարդկութեան երկրորդ նշանն է դրած :
 Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք ,
 Անոր յարգ տալով ապրինք ու երգենք .
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Դուն ալ Հայաստան , սիրուն Հայրենիք ,
 Ալ այսուհետեւ մի սրգար լռիկ .
 Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ ,
 Զքեղ հարս կուզեն տեսնել զարդարեալ :
 Ալ մի լար մայրիկ , լացդ 'ի պար փոխէ ,
 Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ .
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայեր , միանանք մեր մօրն հետ օրհնենք ,
 Զանոնք , որ մեզի տուին սուրբ օրէնք .
 Սահմանադրութեան բարեաց փոխանակ ,
 Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ :

Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան ,
 Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան .

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. ԱՐՂԱՅԱՆ

Ե Ր Գ

Ա Չ Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Ազատ Աստուածն այն օրից ,
 Երբ հաճեցաւ շունչ փչել .
 Իմ հողանիւթ շինուածքին ,
 Կենդանութիւն պարգեւել :

Ես անբարբառ մի մանուկ ,
 Երկու ձեռքս պարզեցի .
 Եւ իմ անզօր թեւերով ,
 Ազատութիւն գրկեցի :

Մինչ գիշերը անհանգիստ ,
 Օրօրոցում կապկապած .
 Լալիս էի անդադար ,
 Մօրս քունը խանգարած :

Խնդրում էի նորանից ,
 Բազուկներս արձակել .
 Ես այն օրից ուխտեցի ,
 Ազատութիւնը սիրել :

Թո՛թով լեզուիս մինչ կապերը ,
 Արձակուեցան բայուեցան .
 Մինչ ճնողքս իմ ձայնից ,
 Խնդացին ու բերկրեցան :

Նախկին խօսքն որ ասացի ,
 Չէր հայր կամ մայր , կամ այլ ինչ .
 Ազատութիւն , դուրս թուա ,
 Իմ մանկական բերանից :

« Ազատութիւն , ինձ կրկնեց ,
 Ճակատագիրը վերելից .
 « Ազատութեան դու զինուոր ,
 Կամիս գրվիլ այս օրից :

Ո՛հ , փշոտ է ճանապարհդ ,
 Բեզ շատ փորձանք կ'սպասէ .
 Ազատութիւն սիրողին ,
 Այս աշխարհս խիստ նեղ է » :

— Ազատութիւն , — գոչեցի , —
 Թող որոտայ իմ գլխին .
 Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,
 Թող դաւ դնէ թշնամին :

Ես մինչ 'ի մահ , կախաղան ,
 Մինչեւ անարգ մահու սիւն .
 Պիտի դուամ պիտ' կրկնեմ ,
 Անդադար , ԱՅՍՏՈՒԹԻ՛ԻՆ (1) :

ՆՈՒԱԳ

ՉՈՐՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

Ահա յերկնից ժպտի Աստուած քաղցր առ մեզ ,
 Մինչ ձիթենեաց ոստ 'ի ձեռին գանք ճանդէս .
 Ուխտ 'ի բազին սիրոյ՝ դնենք ս՛հ սիրտք մեր ,
 Իղձք մեր թուչին թո՛ղ 'ի լուսոյ կամարներ :

Ամպերուն մէջէն ,
 Կիզանուաղ ասաղեր .
 Պրտակ մեզ սիրեն ,
 Ու զուարթ նայուածքներ :

Սանճնք Արամեան օ՛ն առէք 'ի նուազ ,
 ՉՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵ՛Ն՝ Հայուն յոյս ու փառք :

(1) Տես Հիւսիսափայլ, 1859, Թիւ 9:

Ե Ր Գ

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան,
ի սէր յաւերժ միութեան.

Ձի վայելուչ որդիք Հայկեան,
Մէկտեղ հրճուին և ջնձան:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Վերցուր աչքըդ յերկնից կամար,
Փայլի հեռուն ասող մի պայծառ.
Եւ դու,՝ Հայ, զարթիր, սիրտ առ,
Հայոց բաղդըն ալ չէ խաւար:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ, մի արիւն:

Քաւ է այսչափ բաժանում,
Ըլլամք ուրախ և խնդում.
Նախանձ, վրէժ, ձեզ թողում,
Անդունդք և վիհք անհատնում:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ'ալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ, Հայաստան,
Տես որդիք քո միանան:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ինչ և ընեմք, ինչ կերպ առնեմք,
Ո՞չք գիտաց թէ մեք Հայ եմք.
Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմք,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ո՞ր բռնաւոր ո՞ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի սիրեր.
Ազգիդ օգուտն ու բարիքներ,
Սիրոյ գահն է յերկինս 'ի վեր:

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ա. Մ. Գ. Շրախարաւ



Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բար-
ձուստ երկնածեմ՝
Հայոց բաղդին հեծեալ 'ի կառս բարձր դռնէ
ղուարթադէմ

Հղօր պատդամ՝
Ի վերուստ դամ՝
Միութիւն, Հայք,
Եւ նոր ձեզ կեանք :

Տրտնեն ուժգին և լանջք և սիրտք,
Խաղայ արիւն 'ի թինք 'ի թինք՝
Մեղք կաթէ Սուրբ սէրն 'ի խինդ,
ՅԱռաքինոյն 'ի Հայու սիրտ :

Սիրաբոբոք համբոյր բղխեն,
Արտասուածոր աչիւնք ցօղեն :

Արիք Հայկազունք,
Ի սէր փութասցուք՝
Եռանդուն մատիք՝
Ի համբոյր հեղիկ :
Տուք համբոյր մի եւս,
Բացէք զձեր թելս .
Տուք համբոյր մի եւս,
Սիրոյ է պարգեւս :

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք,
Անմահութեան սիրուն սերունդք .
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին,
Մեզ են վկայ երկիր երկին :

Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ 'ի շան-
թից ահարկու,
Այլ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ
կենսատու .

Երկին երկիր՝
Կան 'ի յակճիւ .
Ընդ Հայ ազգիս՝
Բիւր հրաշալիս :

Բացցին անդունդք սեաւ, անյատակ,
Ծածկել զբաղդին հին յիշատակ .
Տիեզերաց բացցին մատեանք,
Անդէն դրոշմել Հայոց պարծանք .
Կեցցէ Հայոց սէր պանծալի .
Բերող փառաց նախանձելի :

Արիք Հայկազունք,
Ի սէր փութասցուք եւն, եւն :

Գ. ԱՊՏՈՒՂԱԿ



ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ

ԱՌ ՀԱՅԱԶԳԻ ՈՄՆ

ՈՐ ԳՆԱՑԵԱԼ ԷՐ ՆՄԱ Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անի քաղաք նստէր՝ կուլայ ,
Չկայ ըսող՝ մի լայ , մի լայ .
Կըսես քիչ է , թո՛ղ , մնայ՝ լայ ,
Ա՛խ , երբ լսեմ՝ մի լայ , մի լայ :

Շատ ցաւերով կայրիմ տապիմ ,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ .
Որ խղճալոյն գայ մօտենայ ,
Հիչ չէ ըսէ մի լայ , մի լայ :

ՅՈՐԴՈՐԱԿ

Ա՛խ Հայ տղայ , խղճս ինծի ,
Տես թէ քո Անին ինչպէս է .
Հերիք ես լամ դու չգթաս ,
Չէ՛ քո անին ախոս է :

Ա՛խ ու վախով օրերս անցաւ ,
Լալէն աչքերս կուրացաւ .
Որբ մնալն ինձ վիճակեցաւ ,
Բախաս բնաւ զիս մուռացաւ :

Կորուցեր եմ թագաւորներ ,
ժողովեր եմ գլխաւս քէօռ բուվեր .
Որք միշտ կերգեն « Անին անցաւ ,
Անին անտէր աւերեցաւ » :

Անին իմ շատ մարդաբնակ ,
Մնացեր եմ դառն աւերակ .
Իմ լացն իմ կոծն իմ աղաղակ ,
Անտէր որբերու նմանակ :

Երբեմն էի շատ աննման ,
Հայոց քաղաքն Արեւելեան .
Աւերեր եմ սեփահատակ ,
Նստեր կուլամ , ես միայնակ :

Եկար տեսար դարձեր կերթաս ,
Լալով կըսես « Բարեւո՛ւ ճաս » .
Աստուած սիրես չ՛մոռանաս ,
Մասիս սարին երբ մօտենաս :

Ըսես իմ քաջ Արարատին ,
« Երբեք կուլայ քո ինչն Անին » .
Կ'ըսէ , երբ աւետիք կ'ըտաս ,
Թէ՛ « Ե՛՛ս Անի հերիք է լա՛ » :

Նոր բնար Հայաստանի . 'ի Մոսկուս .

ՀԱՅՍՏԷՐ ՈՄՆ



Առ ընկալ 'ի գիրկդ, մայրդ Հայաստան,
 Զորդիս քո սիրուն զրուեալ աստ և անդ .
 Տես՝ Բնչպէս սիրովդ և քու կարօտովդ ք
 վառուած բորբոքած քու տեսող զանկան :

ՅՈՐԴՈՐԱԿ

Արի կաց ուրեմն, ով մայր Հայաստան,
 Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան :

Օն զրահաւորիմք, ո՛վ որդիք Հայկեան,
 Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան .
 Զօրանանք սիրով և սուրբ միութեան՝
 Ըլլանք ախոյեան ընդդէմ թշնամեաց :

ՅՈՐԴՈՐԱԿ

Հապա դորձելու ժամանակն հասաւ,
 Հայրենասիրին կայ փառք անդրրաւ :

Ս Պ Պ ՓԱՓԱՋԵԱՆ



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

Արեք Հայկայ քաջ սերունդք,
 Թորդամայ վեհ զաւակունք .
 Թեւ թեւ մտած առնունք պար,
 Եւ բարեւենք այս ախունք :
 Բարեւենք քաղցր երգերով,
 Մեք միացեալ սուրբ սիրով .
 Ուխտենք մնալ մինչ յմահ,
 Ազգանուէր սրտերով :

Ուխտենք ո՛վ Հայեր,
 Մի՛նչի՛ն և Մէր :

Եկէք եղբարք միաբան,
 Մի սիրտ ըլլանք անբաժան .
 Առաջնորդէ մեզ Օրէն,
 Քաջակիրթ ազգաց նման :
 Այս միութեան մեր վկայ,
 Թող աշխարհի որոտայ .
 Դարուց 'ի դարս յիշատակ,
 Տարեդարն այս ներկայ :
 Ուխտենք ո՛վ Հայեր,
 Մի՛նչի՛ն և Մէր :

Չար նախանձու վատ կիրքեր ,
 Ալ չք պղծ են մեր սիրտեր ,
 Ի բաց 'ի բաց թշնամանք ,
 Առնունք սերս համբոյրներ :
 Ընկեր գրնկեր թող գրկէ ,
 Եւ իւր սրտին կցորդէ .
 Զերմ արտասուաց կաթիլներ ,
 Ուխտիցը վկայ դուէ :
 Ուխտենք ո՛վ Հայեր ,
 Մեռնի՛նք և Մեր :

Մօր մեր թշուառ կաթոգին ,
 Հայրենեաց տխուր ոգին .
 Տեսնէ զմեզ սուբբ սիրով ,
 Ու չ'հեծէ լալագին :
 Զուարթ դէմքով մեր վրայ ,
 Հայտ ակնարկէ ու խնդայ .
 Մատուներն 'ի լար քաղցրալուր ,
 Ընդ մեզ երգէ ու ցնծայ :
 Ուխտենք ո՛վ Հայեր ,
 Մեռնի՛նք և Մեր :

Ելէ , ողջոյն դիւցազանց ,
 Նուիրական դամբանաց .
 Աւետեւով թող սփռէ ,
 Ծաղկանց փունջեր հետն առած :

Ողջոյն ընդ ձեզ դիւցազունք ,
 Պաշտելի քաղցր ածխնք ,
 Աւետեւ՝ Մեր Մեռնի՛նք :
 Զոր ուխտեն արդ Հայկազունք ,
 Ուխտենք ո՛վ Հայեր ,
 Մեռնի՛նք և Մեր :

Կ. ԱՅԻՐԱՅԱՆ

ԽՄԲԵԱԿՆ

(Ի ՆԵՐՔՈՒՍ ՍԿՍԵԱԼ)

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ ,
 փշրին տակաւ , մինչդեռ սիրոյ համբուրիւ .
 Ուխտեմք 'ի Մեր եզբօր՝ զկեանս դնել գրաւ :
 Օ՛ն անդր 'ի մէնջ՝ այր ընկերին լարել դաւ :

Սրացաւ 'ի մէնջ բազդն անհամբոյր ,
 Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր .
 Եղբայր զեղբայր՝ գգուէ թիւով ,
 Ճօխն աղքատին մատչի Գթով : Գ
 Էանց գիշեր՝ արդ առաւօտ ,
 Ի ցող ժպտի՞՞ Մասեաց արօտ ,
 Եւ վառ 'ի վառ շողշողելով ,
 Լոյսն արեգին ծրխայ 'ի ծով :

Հայ պանծալ Հայոց վեհ բաղդին վրան .
 Վեհ քաջազունք .
 Ի գլուխ պրսակ ,
 Ի յաղթանակ :
 Առեալ նուագս ,
 Սրաքս արագս .
 Օ՛ն փութասցուք ,
 Օ՛ն երգեսցուք :
 Սէր և գութ ,
 Մեր պրսակ .
 Առ մեր բաղդ ,
 Հրաւիրակ :
 Տնծասցեն ,
 Որք լրսեն .
 Թէ՛ « ուր Հայ ,
 Ձիք՝ անդ վայ » :

ԵՂԻԱՅԱՐ ՄԵՆԻՔԵԱՆ

Ի ՀԱՆԴԵՍ

ԱՌՍՁԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
 ԱՁԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արթնցիւր ո՛ Հայ , նոր արշալուսով ,
 Տես ծագումն արփուոյն պայծառ երեսով .
 Դարձած տարեւոր զուարթ չրջանէն ,

Գայ պանծալ Հայոց վեհ բաղդին վրան .
 Պճնել զճակատ Սահմանադրութեան ,
 Ի փառս սիրատենջ Հայ ոգւոյն փեմ .
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն ,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Ե՛կ Արեւելեան խրախճանաց ֆնար ,
 Բաղխէ կնտնտոցդ ՚ի թել սիրահար .
 Ծշմարիտ Հայուն չրթանց հետ երգել ,
 Օրս մեծ տարեդարձ օրէնսդրութեան :
 Հասնի արձագանքդ Հարցըդ գերեզման ,
 Ազգային ազատ Սահմանադրութեան .
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն ,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Ո՛ր Հայ մոռնալով յիշատակդ արդար ,
 Կրնայ ուրանալ պարգեւեներդ հազար .
 Դո՛ւ լով մխիթար Հայ սրտից տխուր ,
 Դո՛ւ Ազատութեան սկիզբն և պաշտպան .
 Իրաւանց ծորան , Սիրոյ կերպարան :
 Օրէնք Ազգութեան Սահման երկնատուր .
 Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն ,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Բնութեան ամենէն գեղեցիկ ամիս ,
 Ծնաւ քեզ անձկով ծաղկապսակ Մայիս .
 Օրօրոցի մէջ ամբողջ մէկ տարի ,

Հայեր կզկզալով դառն հողմոց բերան .
Քայց գգուելով ձեռք Ազգասիրական ,
Հասուցին փառաց աւուրս տօնելի .

Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն ,
Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Արդ 'ի բաց մեզմէ սեւ թշնամութիւն ,
Մերձենամք 'ի պերճ Սահմանադրութիւն .
Տալ սիրոյ համբոյր ճակտին Հայկազնեան ,
Եւ 'ի փառս Ազգիս , Հայրենեաց միակ .
Ուխտել միշտ մնալ ազատ թելին տակ ,
Մազթել կալ հաստատ մինչ աւուրց վախճան .

Կեցցէ Միութեան Սիրոյ կենսատուն ,
Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Օն հապա եղբարք Սահմանադրական ,
Պարենք թեւ 'ի թեւ մէկ սիրտ մէկ բերան .
Եւ դու զարկ սիրոյ թելերդ ո՞քնար ,
Որ երբեմն տխուր հեծէիր ցաւօք .

Օն ազատութիւն . ցնծութեան փառօք ,
Երդէ քապրանուագ մեզ հետ ծախահար .
Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն ,
Ի շնորհս օՍՄԱՆԵԱՆ պետութեան արթուն :

Ն. Ս. ՄԵՂՈՒՆԵԱՆ



ԱՒԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա.Ռ.

Հ Ա Յ Տ Ղ Ա Յ

Ահա աղաւնին ,
Նոյեան տապանին :

Թռած Մասեաց մառախլապատ երկինքէն ,
Հրաւեր կարդայ ազատութեան Հայրենեաց .
Ասէս անդին թափառական Հայերուն ,
Չայն աւետեաց Հայաստանի բերանէն .
Ողջն կուտայ Հայոց , ողջն նոր փառաց ,
Հերիք կրսէ այսչափ հարիւր տարուան քուն :

Օն այք ,

Մեր Հայրենեաց հրաւիրակին .

Ականջ ,

Չի պառգամ է այս երկնային :

Արթնութիւն արդ պանդուխտ Հայեր ,
Հասաւ կանցնի Հայոց օրեր .
Առէք ողջոյնս ազատութեան ,
Ողջն սիրոյ եղբայրութեան .
Վերջ վիճակի դերութեան ձեր ,
Յերկնից Հայոց այս է պատուէր :

Դարերէ 'ի վեր արիւն արցունքով ,
Թռաւ Հայրենեաց քաղցր աւերակներ .

Թուշող հրեշտակն ալ ահա՛ ինձ ընկեր ,
 Վկայ է խօսքիս խնդում երեսով :

(ՀՐԵՇՏԱԿՆ)

Այո՛ այո՛ Հայ տղաք ,
 Վկայ ես ձեր հրեշտակ .
 Հայաստանի նոր գարնան ,
 Ծաղիունքն ահա՛ ձեզ կուտամ :

Օ՛ն արդ քորք և եղբարք որդիք դիւցազանց ,
 Զեա թռչներ գարնան գեղ դայլայլիկով .
 Սուրանք փոյթ՝ գիրկ հայրենի փառաց :

Հոս թողունք հոս ,
 Վատթար սրտեր .
 Հեա առնունք սէր ,
 Հոս թողունք հոս .
 Ատելութիւն ,
 Ոտիսն Հայուն .
 Հոս թողունք հոս :

Ազգերնիս մէկ , լեզունիս մէկ , հաւատքնիս մէկ ,
 Հայրենիք մէկ , հայրերնիս մէկ , փառքերնիս
 մէկ .

Ինչո՞ւ չքլայ սրտերնիս մէկ :

Եւ արդ հոս ՚ի սեւ կրից զինաթափ ,
 Ամենքս ալ հաւասար Հայ եղբայր .

Մեր զէնքը խաչն ՚ի կուրծս վառ ՚ի վառ ,
 Օն զհեա հրեշտակիս ծափ ՚ի ծափ :

Զարնենք տաւիղ ոսկի քնար ,
 Սրբենք դառն ցաւի աչեր .

Աշխոյժ ՚ի սիրտ , ձայն վար ու վեր ,

Ապրի Հայոցս Աւետարեր .
 Ուրախութիւն այս Հայոց դար :

Օն պար խաղ ,
 Մէն մ՛ի ձախ .
 Մէն մ՛ի յաջ ,
 Ետ յառաջ ,

Ուրախութիւն այս Հայոց դար :

ՆԵՐՍԷՍ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Ի ՇԱԽԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ

ՎՐԷԺՔ

Բամբ . . . որոտան բարձուստ բոմբիւնք ,
 յԱյրարատեան դաշտն ՚ի վայր .

Արի արանց արիւն յեռանդն առատանան ՚ի
 հրազայր :

Հրաւերք հայրենեաց հռչակին նդհանուր ,
 Հողիք Հայկազանց բորբոքին ՚ի հուր .

Որք երկնաւորին պատկին էք կարօտ ,
Որք երկնաւորին փառաց երկնայորդ :

Հայ՝ օն արի արանց մանկունք ,
Հայրենավրէժքդ Հայկազունք .
Հայ՝ օն 'ի զէն գունդազունդ ,
Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ .
Ի զէն 'ի վրէժ , օն անդր յառաջ ,
Ի զէն 'ի վրէժ , մի ձախ մի յաջ :

Օ՛ն անդր յառաջ ,
Մի ձախ մի յաջ ,
Օ՛ն անդր յառաջ .
Յառաջ , յառաջ .
Հայ՝ օն , յառաջ :

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին
բարբառք մարտադոռ .
Դառնադոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն
'ի շեփոր :

Շարժեն հրեշտակք թեւս լուսադողգոջս ,
Ճիւաղք 'ի ճիք սուր կայտունն 'ի դըժոխս .
Շունդն շանթառաք զեթերօք փարի ,
Սարսափինն սանդարք 'ի խօլ խառարի :
Հայ՝ օն արի արանց մանկունք եւայլն :

Մամիկոնեան սաւառնեցաւ գրօշուն յայերս
գող ծալ ծալ ,

Ի ճակատուց 'ի թշնամեաց՝ սա ոչ զխտաց յու-
րաստ կալ .

Հեծեալ հրանըժոյգ վեհին վահանայ ,
Վըրէժ կանչէ արեան կարմիր վարդանայ .
Փռնչեալ բոցաշունչ գափր 'ի գարշապար ,
Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար :
Հայ՝ օն արի արանց մանկունք եւայլն :

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց
Արամայ ,
Գոռան կորգրիք , Մասիք սարսեն , հռնչեն
սահանք երասխայ .
Ի գոռ 'ի գոռ՝ տալ բիւրուցն սոնատրոփ ,
Տատանին դաշտակք , յառնէ շինդն ապշոպ .
Կռուփ առ կռուփ կոփեն կմբրեայք , տէգ առ
տէգ ,
Դղորդ առնուն տարերք կորովեայն 'ի վէգ ,
Հայ՝ օն արի արանց մանկունք եւայլն :



Ի Հ Ա Ն Դ Ի Ս Ի

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ ,
Զայն ողջունելու ելէք Հայ զաւակք :

Անցան սեւ օրեր , օրեր մահահատ ,
 Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ .
 Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց ,
 Սիրոյ գրօշակով եկաւ զարգարուած :

Որ փայլի Արեւ սուրբ Հայաստանի ,
 Որ Հայ Ազգութիւնն փառօք վերածնի .
 Կեցցեն անձնուէր որդիք Հայկազունք ,
 Կեցցէ Ազգային Սահմանադրութիւն :

Կաթիլ մ'արտասուք հեղունք աննախանձ ,
 Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց .
 Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ ,
 Ի նպատ Ազգիս յուսոյն ապագայ .
 Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք ,
 Կրօնի Հայրենեաց և Ազգի սիրոյն :

Որ փայլի Արեւ . . . եւն :

Հայեր , միանանք , կ'ընենք առաթուր ,
 Ամեն ուժ և նենգ , պարիսպներ ամուր .
 Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միութիւն ,
 'ի Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն .
 Հազա խրախուսինք , կուրծք տանք անվեհեր ,
 Ընկճենք կործանենք , ամեն արդեւրճներ :

Որ փայլի Արեւ . . . եւն :

Ինիմք սիրտ արի , ողի եռանդուն ,
 Ժառանգ մնացած բազուկ աննրկուն .
 Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք ,
 Ամեն նախատինք զն փութով ջնջենք .
 Սնան Հայութեան կանգնենք յաղթանակ ,
 Հայոց Մօր ճակատին հիւսնք պերճ պսակ :
 Որ փայլի Արեւ . . . եւն :

Ս. Գ. Գ. ՓԱՔԱՅԱՆ

ԱՐՏԱՒԱԶԴ

Ի Վ Ի Հ Ն Մ Ա Ս Ե Ա Յ

Գարունն էր կենացս դեռ ,
 Երկինք ինձ նայէր հայտ .
 Ինձի համար ձորն լեռ ,
 Կ'ծաղկէր և դալար դաշտ :

Թագն էր զարդն իմ վարսիս ,
 Բաջայ մէջ էի պերճ .
 Շուտ զիս զրկեց Մասիս ,
 Փառքիս վազ հասաւ վերջ . . . :

Հեծայ 'ի սեռա իմ վեհ ,
 Անցայ լուրջ մարդերէ .
 Որսալ 'ի գինայ դեհ ,
 Յիւ և պարարտ երէ :

Ողջուն լերինք ու ձոր ,
 Ողջին տունն ծառեր .
 Անշունչ նիւթերն բոլոր ,
 Լեզու էին առեր :

Բարէ , յանկարծ կասեաց ,
 Ոտք իմ աշխոյժ սեւոյս .
 Կալան զիս քաջք Մասեաց ,
 Տարան ՚ի վեհն անլոյս :

Փախաւ , թռաւ արեւս ,
 Ողբայ զիս , Սաթինիկ .
 Առ իմ վերջին բարեւս ,
 Ազնիւ իմ Հայրենի :

Ինչու բոլոր մարդիկ ,
 Ինձի դէմ են ելեր .
 Ինչո՞ւ այնպէս սաստիկ ,
 Կ'գոռան մրճեր , սալեր :

Անղերժ եմ իմ կապէս ,
 Ի զուր Ազգս կ'խորհի .
 Կրնայ հեղ մ'ինձի պէս ,
 Վախճան տալ աշխարհի :

Անէծք կը կապեն զիս ,
 Շընիկս , զուր կը մաշես :

Սկուադ , զանուր վզիս ,
 Կապեց հայր Արտաշէս :

Խիստ , խիստ են հօր մ'անէծք ,
 Դառն են և ահագին .
 Անով կըլլան ո՞ մեծք ,
 Ոչ ինչ փառք ձեր թագին :



Մ Ա Ն Ո Ւ Կ

ԵՒ

ԱՐՏՈՒՏԻԿ

1. Դարանամուտ կամ վաղուց ես լռուիկ ,
 Եւ ոչ դիւրով քեզ բերի ձեռք հիմիկ .
 Պէտք է երգես իմ սիրուն Արտուտիկ ,
 Որ դու տաս սրբտիս զուարթ քու դայլայլիկ :
 Մի՞ դողար ՚ի տես վանդակիս անել ,
 Ծաղիօք եմ պատած ես անոր թերեր .
 Դու քեզ մարդերու կրնաս մէջ կարծել ,
 Երգէ ինձի հետ թըռչնիկ սիրաւեր :

2. Երբ դայնոր դարուն բընութեան նոր ոյժ ,
 Եւ մեղի պայծառ օրերու տայ յոյս .
 Դողտրիկ մարմանդին մէջէն ձայնդ անոյշ ,

Չամբիծ քու սիրոյդ կը աօնէ զիննոյս :
 Այլ իմ քովս այժմիկ ընդէր կաս լրուած ,
 Կա՛ Մինչ ես ձայնովս եմ քեզ աղերսարկու .
 Ա՛հ , դուցէ ես քու ձայնիկ չեմ լրուած ,
 Թող ես փորձ փորձեմ , զ՛ն երդէ և դու .
 Կա՛ Ո՛հ , դուցէ ես քու անուն չեմ ուսած ,
 Թող ես փորձ փորձեմ , զ՛ն երդէ և դու :

3. Վախ , այսքան աղերս չը գըրաին շնորհ ,
 Եւ դու կաս մնաս միշտ խուլ ու պապանձ .
 Արդ թրուիր գնա՛ հաւիկդ ապաշնորհ ,
 Չ՛ուզեմ քեզ ընել գերի իմ կամաց :
 Բայց խիստ հովանեաց տակ մէյմ՛որ նետուխ ,
 Ա՛ն երդերդ խսկոյն ու հեշտ զուարթիքդ .
 Ձի անտառներո՛ւ տեսնեմ պէտք ունիս ,
 Ար զազատութիւն երգես անդորրիկ :

Ն. ՌՈՒՄԵՆԱՆ

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Ի Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Դու նոր Հայրենիք , դեռ նոր ազգութիւն ,
 Դարուս շնորհիւ պարտք և իրաւունք .
 Մահման և կշիւ թոթովել որ գիտցանք ,
 Ո՛վ Հայաստանի պանդուխտ զաւակունքս :

Կրնանք արդ զոհել կրնանք ամեն բան ,
 Անձնական կրից մատնել անխընայ .
 Եւ Օտարին շահն Ազգին փաստդ ,
 Ո՛վ կրնայ խնդրել , որ այն եղևուն Հայ :

Չգոյշ , ո՛վ Հայեր , զգոյշ կենանք միշտ ,
 Քանզի ազգադաւ սլանան նետեր .
 Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու ,
 Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ :

Միութիւնն ըլլայ զբրահ անվտանգ ,
 Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ .
 Այլոց միջամուտ ներենք ո՛չ երբէք ,
 Ազատ ու հաւսար , ամենքս ալ եղբայր :

Հեռատես , զգոյշ և դործն անդուլ ,
 Ազգային կամաց հրպատակ անխօս .
 Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը ,
 Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն :

Ու երիտասարդութիւնն ըլլայ աննրկուն ,
 Անտէր ախոյեան Ազգին իրաւանց .
 Ու թող ծերութիւնն հսկէ լրջամիտ ,
 Հայոց բազըն ու Արեւ յուսով ողջունել :

Ս. Գ. Պ. ՓԱՓԱՉԱՆՆ



Գ Ա Տ Ր Ի Լ

Ա. ՁԵԻ

ՁԵՌՔ ՁԵՌՔԻ

Դուք մէջէն ես քովէն,
Անցնինք գիմաց փոխենք տեղ .
Նոյն ձեւով տեղերնիս,
Դառնանք միատեղ :

Ալեծածան մէկ մ'առաջ,
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք .
Ապա տանք ալ 'ի յաջ,
Կլոր մը ճեմենք :

Օ'ն ձեռք ձեռքի բարեկամք,
Ընկեր թեւ տուր շուրջ դառնանք .
Արդ կրկին մեր նախնի,
Ընկերին երթանք :

Հապա ոտոտտենք գիրկ գրկի,
Երթանք անդին պարելով .
Ետ դառնանք նոյն ոտքով,
Կայնինք քովէ քով :

Բ. ՁԵԻ

Մէկ մը առաջ երկուքնիս,
Մէկ մ'ալ դառնանք տեղերնիս .
Իսկ այս անգամ դուն ասդին,
Ես գիմաց անցնիմ :

Մէկ մը ալ երթանք հիմակ,
Մէկ մ'ալ ետքը գէպ 'ի ձախ .
Ասկէ մեր տեղն ընթանանք,
Զուարթ կայթեմք և ուրախ :

Ալեծածան մէկ մ'առաջ,
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք .
Հիմայ ալ տանք ալ 'ի յաջ,
Կլոր մը ճեմենք :

Զորսս ալ արդ առաջ խաղանք,
Կրկին տեղերնիս դառնանք .
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք,
Դիմացը կայնինք :

Գ. ՁԵԻ

Քալենք հիմայ դէմ գէմի,
Հապա բռնենք թեւ թեւի .
Յետոյ մէկ մ'ասդին դառնանք,
Մէկ մըն ալ անդին :

Մէկ մը յառաջ դէմ դէմի,
Պարենք երկուքս ու դառնանք.
Մէկ մ'ալ պարենք նոյն ձեւով,
Երթանք ընկերնուս քով:

Կապենք շղթայ չորսերնիս,
Մէկ հոս մէկ հոն ծածանինք.
Ապա ամենայն ընկեր,
Դիմացի կողմն անցնինք:

Չորսս ալ արդ առաջ խաղանք,
Կրկին տեղերնիս դառնանք.
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք,
Դիմացը կայնինք:

Դ. ՁԵՒ

Դէպ 'ի առաջ քով քովի,
Հիմակ երթանք դառնանք մերովի.
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք,
Դուն հոն ես հոս զատուինք:

Արդ ես մինակ զողեմ ճեմեմ,
Մէկ ոտք մը հոս մէկ հոն նետեմ.
Կայթեմ ոտնու՞մ զերթ մ'ուրախ,
Ըլլայ հանդէս ուրախ:

Արդ նոյն քայլով յիս եկէք,
Երեքդ մէյ մ'ետեւ գացէք.
Կրկին ամենդ դէպ ինծի,
Յետոյ նոյնպէս դէպ ետի:

Չորսս կէս կլոր արդ դառնանք,
Յետոյ քիչ մը հեռանանք.
Ետքն ալ ասկէ հոն անցնինք,
Մեր բուն տեղիկը կայնինք:

Ե. ՁԵՒ

Հիմակ ալ առաջ քով քովի,
Երթանք դառնանք մերովի,
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք,
Հոն հոս բաժնուինք:

Աւերածան մէկ մ'առաջ,
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք.
Հիմայ ալ տանք ալ 'ի յալ,
Կլոր մը ճեմենք:

Ընկերք իրար քալեցէք,
Հոս եկէք մէկ մը դարձէք.
Մենք ալ ընկեր ընդ ընկեր,
Յետոյ օտարն երթայ ետ:

Չորսս ալ արդ առաջ խաղանք,
 Կրկին տեղերնիս դառնանք.
 Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք,
 Դիմացը կայնինք :

Զ. ՁԵԻ

Անցնինք երթանք շիտակ առաջ ամենքնիս,
 Գառնանք դիմենք այր և ընկեր տեղերնիս.
 Թեւ թեւ դէմ դէմ երկանաքար դարձնենք,
 փոխենք ձեռքեր այս կողմ ալ չըրջենք :

Չեռք ձեռք տանք ընկեր թեւ տուր շուրջ
 դառնանք,

Հոպա ոստոսանք դիրկ գրկի հոն անցնինք.
 Անկէ դարձեալ մեր ընկերին քոյն երթանք,
 Ձետոյ նոյն ոտքով պարելով ետ քաշուինք :

Գ. ՁԱՓՐԱՍՏՅԵԱՆ



ԱՐՏԱՍՈՒՒՔ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ես դալար ծառ մի տնկեալ 'ի Հայկայ,
 Պողարերու թեամբ ինձ նրման չկայ.
 Չեմ ես սնափառ՝ իբրեւ սարդենի,
 Հողմն ատելութեան փշեաց՝ ես անկայ :

ՅՈՐԴՈՐԱԿ

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր զի նորոգեցայց :

Քաղցրահամ պտուղ իմ է՛ր անքանակ,
 Զաշխարհ լիացոյց երկար ժամանակ.
 Ոստք իմ և արմատք 'ի բնէ խզեցան,
 Գառն ատելութեամբ՝ անսուր՝ անդանակ :

Տերեւք իմ կանաչք վաղ թառամեցան,
 Երակք անդամայս 'ի ջրոյ քամեցան.
 Կեղեւն իմ՝ քնքուշ որդնակեր եղեւ,
 Գույն այգեպանք այսպէս կամեցան :

Ի դալ ամարան ազգ իւրաքանչիւր,
 Յնծալով՝ փութա քաղել զայգին իւր.
 Իսկ ազգն Հայկայ ձեռն 'ի ծնօտի,
 Աւաղէ, հոսէ արտասուեաց աղբիւր :

Սէյեադն ազգասէր յազգէն բամբասէր,
 Գիշեր և ցորեկ ողբալով ասէր.
 Հայք զիմորդ կարեն ճաշակել զպտուղ,
 Ձի չունին հաստատ հաւատ, յոյս և սէր :

ԱԷՅԱԴ



Կ Ի Լ Ի Կ Ի Ա.

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.
Չքնաղ երկինս մերս Արմենիոյ,
Երբ վայլէ իւր քաղցրիկ օգեր:
Երբոր ծիծառն 'ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հախքնին տերեւ.
Յանկամ տեսնել զիմ կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Ռնուրիոյ,
Լեռն լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկինս իդալիոյ,
Վենետիկ և իւր կոնստանդներ:
Կզղի նման չիք մեր կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.
Յանկամ տեսնել զիմ կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հէգին 'ի տենչ.
Յիշատակայ իւր կարօտի:
Յորժամ քնարս իմ ցրտանայ,

Սիրոյն տալով վերջին բարեւս.
Երթամ ննջել իմ կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:



Ե Ր Պ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Գ Ա Ր Ձ Ի

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Իջաւ յԱրարատ հասաւ 'ի Տիգրիս,
Դարձաւ դաղ-րեցաւ կեցաւ 'ի Մասիս:

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Չայն մի թորդոմայ որդւոց:
Որ մերկանան դցուրաւ ձմեռն վարագոյր:

Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր.
Տամք Սիրոյ համբոյր:
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան,
Սահմանադրութեան:

Եւ շեջեւափառ Հայրենեաց խորան ,
 Բացաւ տխրագին զիւր քող ճգնութեան .
 Հասին հոն Մուսայք , և Յուսոյ հրեշտակք ,
 Ախորձ երգեցին խնդութեան նուաղ :

Եւ սիրտ տուին անկէ Հայոց ,
 Սիրտ մի թորգոմայ որդւոց :
 Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր :

Ժամ է արդ Հայեր ,
 Ընկեր առ ընկեր .
 Տամք Սիրոյ համբոյր :
 Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան ,
 Սահմանադրութեան :

Ելաւ Հայաստան նոր գարնան 'ի տես ,
 Դարձայ 'ի շքեղ իւր փառաց հանդէս .
 Դարձիր բաղդակոծ ֆնարդ իմ հողւոյն ,
 Դարձէք աւուրք կենաց , դարձէք յայդ յուսոյն :

Եւ լոյս տուէք անկէ Հայոց ,
 Լոյս մի թորգոմայ որդւոց :
 Որ մերկանան մութ դիշերին վարագոյր :

Ժամ է արդ Հայեր ,
 Ընկեր առ ընկեր .
 Տամք Սիրոյ համբոյր :
 Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան ,
 Սահմանադրութեան :

Ս. Ն. ՅԵՆԿԵԱՆ



Ե Ր Գ

Մ Ի Ո Ի Թ Ե Ա Ն

Եղբայր , մինչեւ երբ այսպէս լուռ տըխուր ,
 Չերթ թշուառ պանդուխտ հեծեծես վիշտ ,
 վիշտ .
 Սէ՞րն ու դո՞ւթ Ազգիդ խանձէ սիրտըդ միշտ ,
 Գիտեմ . . . արդ ցրուէ ցաւդ . զուարթ օ՛ն
 ձեռքդ ինձ տուր :
 Ա՛ռ քեզ նոր ողջոյն Սահմանադրութիւն ,
 Զոր շնորհեց Հայուն թուական վաթսուն .
 Սիրենք Ազգութեան կեանքն ու միութիւն ,
 Սիրենք , որ ապրի Սահմանադրութիւն :
 Այն անմահ օրն երբ մեր սրտերուն մէջ ,
 Սահմանադրութեան ոգին արծարծեց .
 Եւ մինչեւ դաշտերն անոր վառքն երդեց ,

Մեր, երիտասարդ, մանկտին յել և էջ :
Այլ ո՞ր չազգի ձեռք դիմէ զայն ջնջել,
Հայուն աւերմանն անգուծ, անաարբեր :

Սիրենք Ազգութեան . . .

Հերիք չէ՞ լուսոյ դեմ ապրիլ զերթ կոյր,
Անտես վարչութեան Ազգի մը թշուառ .
Համազգի անուամբ պառակտել իրար,
Իրաւանց ձայնին դեմ մընալ միշտ խուլ .
Տեսնել սա դարուն փոյթն, ընթացքըն յառաջ :

Դեռ բիրտ կամաց հետ յամել անամաչ,

Սիրենք Ազգութեան . . .

Մոռնա՞նք երեկուան ոխն ատելութիւն,
Մերժելով վըրէժն պաշտենք Ազգի Սէր .
Մարին Հայ սրտէն սեւ կըրից բոցեր,
Գիրկընդխառն, համբոյր, և ուխտ հաշտու-
թեան .
Ի փառս մեր յուսոյն Սահմանադրութեան,
Որ պաշտպանէ՛ մեր հաւատքն, Ազգութիւն .

Սիրենք Ազգութեան . . .

Հերիք չէ՞, որ ծաղր ըլլանք օտարին,
Ուշ չէ, որ կ'զգանք Ազգութեան պարտքեր :

Երկինք ձայն կուտայ, մենք դեռ չենք լսեր,
Այլ վըրէժ ձայնենք եղբօր ականջին .
Մէկ արեան կաթիլ, ծնունդ մէկ հայրենեաց,
Չ'ուզենք հնազանդիլ Ազգիս Օրինաց :

Սիրենք ազգութեան . . .

Վ կայեն մեզի մօտ օրերն անցեալ,
Թէ քանի անգամ ազգի բաժանում .
Հայ երակներու մէջ լեցուց դառն արիւն,
Փորձուածը կրկին փորձողն է յիմար .
Օ՛ն, սրբենք այն խորթ աւուրց արատներ,
Որ մեր ազգութեան տունն ու տեղըն աւերեր :

Սիրենք ազգութեան . . .

Աստուած Հայութիւն աշխարհին վըրան,
Որոշ ժողովուրդ մ'ազգի անունով .
Ընտրեց, որ կ'ապրէր ազատ օրէնքով,
Իրեն ազգութեանն յարմար և պատկան .
Եւ զոր բազմ գողցուց դըժխեմ ձեռքերուն,
Պէտք չէ՞ արդ անոր տալ կենդանութիւն :

Սիրենք ազգութեան . . .

Միխնաւոր Հայ ձեռքն 'ի ծնօտ մինչ ցարդ,
Կապատուեր միակ Սահմանադրութեան .
Ողջոյն տալ գարձեալ և երրորդ անգամ,

Սիրելով անոր սկզբունքն հաստատ .
Արդ ուրախութիւն , անցաւ փոթորիկ ,
Որ սպառնացաւ անձրեւել սաստիկ :

Սիրենք ազգութեան . . .

Մինչեւ երկնից տակ ապրի ազգութիւն ,
Ճշմարիտ Հայերն օրհնեն յաւիտեան .
Հազար ութն հարիւր վաթսուն թուական ,
Ուր սովորեցաւ մեր ազգին վարչութիւն .
Օրինօք գործել և հաստատ հիման
Վըրայ զետեղել Հայ պարտուց պայման :

Սիրենք ազգութեան . . .

Օ՛ն արդ , ո՛վ Հայ կղեր , աւուրն ականջ տուր ,
Հաւատոյ դրօշակ ձեռքդ և սուրբ խաչն յոյս .
Սիրոյ խոստումներ քանդակո՞ծի կուրծքս ,
Քարոյէ ժողովուրդդ որ գընայ յառաջ .
Չեռք տուր ազգային բարեկարգութեան ,
Գիտցի՛ր , որ պաշտօնդ է պարտք սրբազան :

Սիրէ՛ ազգութեան . . .

Ազնուական Հայ լսէ ժողովուրդին ,
Որ պատրաստ յարգել քեզ միշտ իբրեւ հայր .
Եկու՛ր ազգութեան մէջ ըլլանք եղբայր ,
Չայնակցէ՛ , ո՛վ մեծդ , փոքրերուն ձայնին .

Հոն է քու պատիւդ , հոն քոյդ ճոխութիւն ,
Նր պատմութեանց մէջ տան անմահութիւն :

Սիրէ՛ ազգութիւն . . .

Հայ երիտասարդք ցրուենք այն խորհուրդ ,
Չոր մեր դաշտին մէջ սերմանեցին շուտ .
Ապագան այնպէս բարօրենք ՚ի փոյթ ,
Ուր չար դրացիներ լըգտնեն յագուրդ .
Ասկից ալ յարմար օր կըլլայ Հայուն ,
Ճանչնալ իրաւունք , Օրէնք , Ազգութիւն :

Սիրենք ազգութեան . . .

Մարդկութեան պարտքը հոս կուզէ օրհնել ,
Վեհափառ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ԱԶԻՁ ԽԱՆ
Արքայն Օսմանեան հրգօր Տէրութեան ,
Որ է փառք Ազգին և ինքնազօր Տէր .
Գովենք , որ շնորհեց Սահմանադրութիւն ,
Իր հաւատարիմ հպատակ Հայուն :

Սիրենք ազգութեան . . .

ՆԵՐՍԷՍ ՄԷՂՊՈՒԹԵԱՆ

Էյ սերվէրի կէրտուն մէգամ ,
Վէյ տավէրի տարա զիւլամ .
Մայէի ատլինտէ ճիւմէ ,
Միւք ու միլէթ պուլտի նիզամ :

Ապտ-իւլ-Ազիզ Շահի ճիհան ,
Օլտուն ճիհանտէ քեամիրան .
Շեվքեթիլէ հեմ պէր տէվամ ,
էյլէ եարապպը միւսթեան :

Շան ու շեվքեթիլէ հեր ան ,
Թապ'ը Շահի օլա ֆերհան .
Պէօյլէ ըխաս իլէ հեր կիւն ,
Օլուր էվլատը պէնտէկեան :

Ապտ-իւլ-Ազիզ . . .


Մէքտէմիլէ սէնին Շահա ,
Ճիհանի կիլէտին իհեա .
Իշթէ միլլէթէ եեկզէպան ,
Իթմէքտէյիլ շիւքըին կիֆա :

Ապտ-իւլ-Ազիզ . . .

Քըրուպ օլ տավէրի սէյիւտ ,
Նիզամը միլլէթի թէճտիտ .
Հեման օլ Շահը զիյշանըն ,
Օլա հեր բուզի եեվմի կիտ :

Ապտ-իւլ-Ազիզ . . .

Օ. Ք. ՇԱՀԱՆՅԱՆ



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Երգ սիրոյ , երգ Հայրենի , քեզ կուղուի
Հայաստան ,
Հոն , ո՛ւր Հայք ամեն դիէ մի հազուէր կը
խայտան .

Այն երկնից դատավըճիւ դառն անէճք
հընդդարեան ,
Դադրեցաւ ըսե՛նք արգեօք՝ թէ մեր մեղաց
չափ լըցան :

Չայն տուր ըսէ Հայաստան ,
Նախնեաց մեր սուրբ օթեւան .
Մարդկութեան կրկին օրրան ,
Վկայդ երկնից հաշտութեան :

Ծեր , տղայ , երիտասարդ , հարուստ , աղքատ ,
անխտիր ,
Օրիորդ մատաղերամ . ամենքն անկեղծ ան-
պատիր .

Ամենուն մի է արիւն ամենքն ունին մէկ եր-
կիր ,
Երասխայ ձորն հաւդուած կարծես թէ չեն
տարազիր :

Չայն տուր ըսէ . . .

Բայց՝ սիրոյ ըսենք արդեօք . թէ՛ աշնանն
 հողմոց պէս ,
 Մէկ մ'ասկէ մէկ մ'ալ անկէ փշոզ կոյտ մ'է
 աս հանդէս .
 Ո՛հ . . . չէ՛ , չէ՛ , Հայրենի սէրն է շարժառիթ
 պարզապէս ,
 Որ եղբայր եղբօր դիմած սուրբ սրբտով կու-
 դան 'ի տես :

Մխիթարուէ Հայաստան ,
 Նախնեաց մեր սուրբ օթեւան .
 Մարդկութեան կրկին օրրան ,
 վկայդ երկնից հաշտութեան :

Նախնի՛ վեհք , գըլուխ բարձէք ձեր փոշերից
 տապանէն ,
 Ու տեսէք Հայերն ինչպէս զիրար եղբայր
 կ'ողջունեն .
 Դիւցազուն իրենց նախնեաց յիշատակաւ սիրտ
 ամէն ,
 Լըցեալ , 'ի Սէր անբաժին և միութիւն սերտ
 կուխտեն :

Հապա հրրճուէ Հայաստան ,
 Նախնեաց մեր սուրբ օթեւան .
 Մարդկութեան կրկին օրրան
 վկայդ երկնից հաշտութեան :

Բարձրացան յերկինս 'ի վեր ձայն կռկռանայ
 Հայորդւոյն ,
 Բարձունքէն դիտեց տեսաւ աննիրհ աչաց
 Տէրն արթուն .
 Ժպտեցան դէպ 'ի երկիրն որ նախ օրրանն էր
 մարդուն ,
 Այցելուն անմիջապէս խըրկեց Սէրն իր զու-
 արթուն :

Խայտա խնդա Հայաստան ,
 Նախնեաց մեր սուրբ օթեւան .
 Մարդկութեան կրկին օրրան ,
 վկայդ երկնից հաշտութեան :
 Ա. ՖԵՎԱԿԻՅԵԱՆ



Զերկնաբերձ գլխով սառնապատ լերին ,
 Ուր դադար առնու նախնակերտ տապան .
 էր զի՞ սաւառներ հայադրոջ արծուին ,
 Զգեւ շուք ստուար ցճորայ կապան :

Այլ ուր արփին լուսատու , ուր պողպատին
 փայլատու ,
 Յոր թագ կապեր Այրարատ , 'ի թագադիր
 Բագարատ :

Ո՛վ թորդումանեա աղարծի մանկունք,
 Հարկ 'ի վերայ կայ փոխելոյ ընդ փոյթ .
 Զգօն լուրջ յոգի սուր յակն յուշ և յունկն,
 Առ 'ի ժամանել 'ի կատար անքոյթ :


Զի լեառն ահա արիածին
 Որոյ բարձունք փայլ հատին
 Յորդեալ զիւրն բիւր վտակ
 Նոր աւետէ եղանակ :

Ի գողարիկ ծայր մատին
 Թմբկահար պանծացին
 Ընդ նմին անգաղար
 Քերեւով զկիթառ :

Բազկացի 'ի շաղկապ
 Բերկրեսցուք ծափ 'ի ծափ
 Զբաժակ թաթաղուն
 Քամելով մեք հողոյն :

Համարին կեցցեն Հայք
 Միշտ Մասեաց գոռոզ կայք,
 Եւ 'ի նոր Բագարատ
 Յնծացէ Այրարատ :

Թ. Մ. Գ.



ՆԱԽԵՐԳ

ՅԵՐԿՐՈՐԴ ԵՐԶԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ

ՅԱՄԱՆԱԿՆ

Էր դու այսպէս . ո՛ սեաւ Գիշեր,
 Զուարթ բնութեանն աղնիւ պատկեր .
 Տըխրանդկար գունով ներկես,
 Սըգատեսիլդ ի՞նչ այս հանդէս :

Ո՛վ անարեւ տըխուր Ոգի,
 Դու էիր ինձ միակ համատի .
 Երբ բեղմնաւոր բնութեան արգանդ,
 Շըքեղ ծննդովք չէր արգաւանդ :

Թէ իմ շրջանս մերթ տեղի տայ՝
 Որ քու խաւարդ երկար մնայ .
 Ունիմ անկէ և ես բաժին՝
 Իմ անցելոյս յիշատակին :

Երբ ժամս հասաւ՝ եկան 'ի տես,
 Հին անցքերուս ինչ ինչ հանդէս .
 Էր սեւորակ քոյնն ըստուեր,
 Արդ վառվառն քողէ աչեր :

Ի՛նչ այս դողդոջուն վրսեմակայն ձայն ,
 Ինչ քաղցրիկ մրմունջ . . . և օտար չէ այն .
 Վեհ ալեւորն է , պատկառելին ծեր ,
 Որ հոն միայնակ կ'երգէ իւր գիշեր :
 - Յոյսդ եղաժբլիտ , դիմենք անոր արդ ,
 Դու որ պճնեցիր մեզ երբեմն 'ի վարդ .
 Չայն տուր այժմ ազէ՛ . խրախոյս կարդա նոր ,
 Ձի հասաւ ահա այն երջանիկն օր :

ՅՈՅՄ

Օն՛ յառաջ , մանկունք , նոյն ինքն է՛ տեսէք ,
 Անհամբեր ոգւով որուն կըսպասէք :

- Տես և դու , հինաւուրց ծերունի ,
 Մանկըտին՝ որ դիմօք սիրանիչ .
 Կարօտով քու տեսողդ Հայրենի ,
 Գալստեանս կը մնային ակնապիչ :

Սոյն խմբիս պարտաւոր կանգնած աստ՝
 Գեղազուարճ դամ ահա խոստմնալիր .
 Մինչ ակումբս հանդիսիդ քու պատրաստ ,
 Անցելոյդ են եկած 'ի խնդիր :

Քաջ իսկ արժան , մինչ իմ անցեալս յորդա-
 ուստ ,
 Է փորձառու ծեր իմաստնոյ բիւր խըրատ .
 Մէն մի թերթ են ճակոխս կնճիւք բարդ 'ի
 բարդ ,
 Ուր խառըն զուարթ տըխուր անցքեր տեսնէ
 մարդ :

Ձի խիստ օտար են մանկութեան ինձ օրեր ,
 Յաւիտենից եմ՝ ծնունդ , և ծեր անծեր .
 Այլ ապագայս անվերջ՝ թ'է իբր անփուշ վարդ ,
 Այն քու շնորհիւդ է , Օրիորդ գեղազուարթ :

- Ապա և դուք , Յարկիս մանկունք սիրական ,
 Որ հընացեալ անցից տաք նոր կերպարան .
 Լըսուին դարձեալ հաճոյական ձեր ձայներ ,
 Մովրին լըսողք փորձառութեան միշտ դասեր :

ՅՈՅՄ ԵՒՍ ԶՈՒԳԱՆՈՒԱԳ

Լուսապանձ նոր հանդէս ,
 Ալ գիշերըն անտես .
 Կիսալոյս արշալոյս ,
 Ամպոց մէջ տայ իւր խոյս :

Ողջունիւ Արեւուն ,
Մինչ ժպտի բնութիւն .
Ժամ է ձեզ , մի՛ դըլաք ,
Առէք զայն ձեր նուազ :

ԽՄԲԵԱԿՆ

Ո քաղցր Արիի , մինչ կը բերես առաւօտ ,
Ո՛հ նախարձակ շառաւիղօքդ անաղօտ .
Ոսկենկար ցոլան լերինք նախալոյս ,
Միմեանց համբոյր տան ցողալիւր բոյսն ու լոյս :

Այլ քաղցրագոյն ես դու այսօր Աչք անքուն ,
Որ ջերմ լուսովդ ակնարկելով Անցելոյն՝
Կը վերածնես յիշատակաց ածիւններ ,
Հանդիսադիր բլլալ՝ կուտաս մեզ հրաւէր :

-Ապաքէն մեք աշխոյժ սրտով ,
Քեզ ընդ առաջ արշաւելով
Չուարթ դիմօք 'ի դուլին նարօտ ,
Շըքեղ տեսոյք անձկակարօտ :

Փութամք աստէն միահողոյն ,
Անհրաժեշտ մեր նախողոյն .
Վեհ ծերունւոյդ տալ 'ի նուէր ,
Ձի դու տուիր մեզ քաջալեր :

Ե Ր Գ

Մ Ո Ն Թ Ո Ն Ի

Ընկերք յաղթութեան ժամն արդ հաս է ,
Մեզ կ'սպասեն փնօք առնունք քաջալեր .
Արեան ծարաւի մեր հատու սոսեր ,
Կենաց թշնամւոյն թող կտրին թելեր :

Ո՛հ մեր ախոյեան թողին 'ի տաղնապ ,
Չբլլանք ահափեկ մենք 'ի զէն , շտապ .
Փութամք արշաւել այր մի վեհերօտ ,
Մին օն անդր 'ի բաց սիրտք վատ և երկչոտ :

Ի զէն 'ի զէն , օն անդր 'ի բաց ,
Սիրտք վատ և երկչոտ :



Թէ իմ՝ ալեւոր հերքս սեւնային ,
Ոյժս ինձ յեա դար , կտրիճ դառնայի .
Նժոյդ ձի նստած , բեխըս ոլորած ,
Չեռըս թուր առած ես դաշտ կերթայի :

Ես դաշտ կերթայի դաշտ Աւարայրի ,
Ողողած ցօղած Հայոց արիւնով .

Ազգ իմ սիրական , դու ազգ թորգոմեան ,
Քու կորցրած թաղը քեզ յեա կուտայի :

Կ'ասէի Հայոց օրիորդներին ,
« Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը .
Թողէք պաճուճանք , զարդ , մարգարիտներ ,
Ժանգոտած ու դուլ են մեր թըրերը :

Տուէք բեհեղեայ մեզ ձեր շապիկը ,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը .
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից ,
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը :

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընտուկները լի բսկով արծաթով ,
Շատերու նման ես չէի լինիլ ,
Երբէք ազգասէր ունայն խօսքերով :

Շամպանեա գինու Աննա խաչի տեղ ,
Կառնուի առատ դնտակ ու վառօդ .
Արձակ համարձակ կերթայի հանդէպ ,
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով :

Թէ ես լինէի մի երկրի իշխան ,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման .
Շուտաքայլ երթալ դէպ 'ի Հայաստան ,
Խղճուկ Հայ ազգին լինել օգնական :

Եւրոպ' Ասիա արեան դետերը ,
Կը վազցնէի հեղեղի նման .
Մինչեւ որ թաղ , գահ ու ազատ կրօն ,
Ինձնից չստանար թշուառ Հայաստան :

Բայց՝ եթէ մի օր , մի ժամ , մի ըոպէ ,
Աստուած լինէի մեր հողազնդին .
Ի՛նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի ,
Մեր արենարբու թշնամեաց գնդին :

Նենդ մոլի , Պարսիկ ոխերիմ՝
Դարեւոր ոսոխ դու Յոյն կրօնամոլ .
Գիտցիք որ՝ իմ սուր երկսայրի սրից ,
Անպիսա չէր մնալ ոչ մի ձեր որդին :

ԳԱՄԱՐ ՔԱԹՈՒԳՈՍ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Թէ իմն Հայրենեաց քնար սգաւոր ,
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն .
Թէ նորա բեկբեկ թեւեր վշտաւոր ,
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն :

— Թէ Հայ մուսային սրտառուչ նուազ ,
Դեռ կ'եղերերդէ՝ հառաչանքս է այն .

Թէ Հայաստանիս սեւ բախդին հագազ ,
 Լայ աղնկառուր՝ հեծեծանքս է այն :

— Թէ իմն Հայրենեաց կիսամեռիկ շունչ ,
 Դեռ լրսի տխուր՝ իմ ողբերս է այն .
 Թէ լսիկ մնջիկ հեծէ անյըշունջ ,
 Ո՛հ անկարեկիր իմ լալիքս է այն :

— Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն ,
 Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն .
 Չորս հազար տարուան պարծանաց դարուն ,
 Արձագանգ տուողն աղաղակս է այն :

— Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր ,
 Ահա այս մաշած իմ կուրծքս է այն .
 Սեւ սեւ թերթերուն էջ սրտակոտոր ,
 Արտասուօք գրաւած՝ իմ աղիքս է այն :

— Թէ բանաս կարգաս արիւննոտ դաշտեր ,
 Վարդազոյն ներկուած՝ իմ կողերս է այն .
 Թ՛աչքէ անցընես շամփրած նիղակներ ,
 Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն :

— Թէ Հայկ և Արամ, Վարդան Վահաններ ,
 Ինկած տեսանես՝ իմ ուժքս է այն .
 Թէ զէնք թէ դրահ թէ սուր թէ սուսեր ,
 Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն :

— Թէ արեամբ ներկեն ախունք Եղեմին ,
 Նշխար քաջերուն՝ իմ բիրերս է այն .
 Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին ,
 Լեզի են դարձեր՝ արտասուքս է այն :

— Թէ վճիտ դետերն աղբերքն արծաթի ,
 Լալիք առուակեն՝ երակներս է այն .
 Թէ Տիգրիս Գեհազն փխոն մունջեն ,
 Թէ պղտոր դնան՝ իմ արիւնս է այն :

— Թէ սառնամանիք ձմռան բքարեր ,
 Լեռներն է պատեր , իմ դագաթս է այն ;
 Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր ,
 Տրտագին փշեն , իմ շնչիկս է այն :

— Թէ վտակ վտակ ցողէ զյիշատակ ,
 Զայս տրտմամբատակ , աչքերս է այն .
 Թէ սրտածայնիկ երգէ զՀայաստան ,
 Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն :

— Թէ մթին խորշերն ու ձորեր լուին ,
 Սեւերով ծածկին , մենաստանս է այն .
 Թէ ողբ կը կարդան վայրերն Եղեմին ,
 Ճնշած լերդերուս արձագանդն է այն :

— Եւ հայաստանիս հողերը ուխտիւ ,
 Պինդ սիրով դրկողն՝ իմ ձեռքերս է այն .

Թէ կը համբարեն կաթողին խմբիւ ,
Ո՛հ մայրակարօտ շրթունքներս է այն :

— Եւ Հայոց լեռանց ցուրտ շուքերուն տակ ,
Ընկած ապարազդ՝ իմ ճակատս է այն .
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ ,
Դրած սգաւոր դլուխիկս է այն :

— Եւ կիսակործան տաճարն Հայրենի ,
Սեւ սուգ է պատեր՝ տաղաւարս է այն .
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւժէ ,
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսս է այն :

— Ուր տխուր նստեր մազերն են ծածկեր ,
Իւր սեւուկ աչքեր՝ սիրականս է այն .
Չեռքերն ՚ի ճակատ կռնակն ՚ի հողեր ,
Յուսով կռթներ՝ Հայաստանս է այն :
— Գերեզմանս է այն :

— Ուր երբ տեսանեմ զիմ հեզն Հայաստան ,
Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն .
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական ,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն :

ՄՄՈՆ ԶՁԳ Մ. ՁԵՂԵՍՏ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Թէպէտ ես մեծ տան նշան եմ ,
Ամենից ազնիւ իշխան եմ .
Ո՛չ մեռած եմ , ո՛չ կենդան եմ ,
Օգնական չունիմ , ի՛նչ անեմ :

Ով անցաւոր , ինձի նայիր ,
Անբախտութեանս ինայիր .
Ի՛նչ կուլինէր՝ փոքրր մնայիր ,
Իմանայիր , թէ ի՛նչ բան եմ :

Թշնամիք մարդըս մեռուցին ,
Մէջքս ծանրութեամբ կեռուցին .
Որդիքըս ինձնեց հեռուցին ,
Այժմ այլոց ապաստան եմ :

Չեռումս կտորվեց սուրբս ,
Վնասուեցաւ առուտուրբս .
Լեղի դարձաւ քաղցր ջուրըս ,
Բաս ես ս՛նց չի հողւոց հանեմ :

Առաջ կէի անձամբ անձին ,
Այժմ կարօտ այլոց դանձին .

Սէյեադ , քեզ ասեմ առանձին ,
Այրիացեալ Հայաստան եմ :

ՍԷՅԵՅ



ՆՈՒԷՐ

ԱՌ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ՈՂՁ ԼԵՐ ՔՆԱՐ

Թէ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք
լըռեցին ,
Եւ թէ Հայուն անմխիթար հեծել պէտք էր ,
դարերով .
Ալ թող դադրին արցունք հերիք լսենք այս
նոր քնարին ,
Զոր նոր երկինք կը զարդարեն ուրախութեան
թելերով :

Ողջ լեր քընար ձայն տուր թշուառ Հայաս-
տանի զաւակաց ,
Որոնց քաղցր է և սրբազան մեր հայրենեաց
յիշատակ .
Հնչէ քնար և թող խայտան ոսկերք Հայոց
դիւցազանց ,
Լուր տար մեզմէ թէ հոս հոս ըսէ ողջ են
գեռ Հայք :

Հայկայ պանդուխտ զաւկըններուս կանչէ եր-
գերդ հայրենի ,
Թող յաւիտեան ձայնդ անուշիկ հնչէ Հայե-
րուն .
Եւ թէ լսեն ամեն աղգեր եթէ աշխարհքն ալ
անցնի ,
Ալ Հայաստան սուրբ Հայրենիք երգէ դուն :

Մենք այն երկրին ,
Զաւկըներն ենք .
Որուն նմանն ,
Ալ չկայ :

Երկրին որուն ,
Գլխուն եկածն .
Ուրիշին չէ ,
Պատահած :



ԽՐԱԽՈՅՍ

Ի ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Ժամ է , Հայեր , արիք ձեր բաղդըն ողջունել ,
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշու տակ .
Հայրենիք ձեր հրաւէր կարգայ դալ խմբել ,
Ուր ապագան ձեր գրուած կայ փառունակ :

Բայց են ասարեզք ազատ քայլերու ,
 եւ երկինք լըցող ըզգաստ ուխտերու .
 Մի ապա ճարակ մատնէք կոյր մըրցմանց ,
 Գիրան , արտասուք և տենջ ձեր Հայ դիւցա-
 ղանց :

Յառաջ , յառաջ ,
 Մեծ է ձեր կոչում .
 Քաջի ծնունդ քաջեր ,
 Մասեաց սարերէն :
 Ալեւոր դարեր ,
 Լուռ ձեզ կը դիտեն .
 Քայլերու շարժում ,
 Յառաջ , յառաջ :

Մայր ձեր սիրուն , մայր դարերու Հայաստան ,
 Ձեր է կարօտ , ձեր ժիր ու ազատ ջանքերու .
 Անոր լուսոյն խամբած դարաստ միաբան ,
 Ելէք պըճնել , Հայեր ժամ է քրտնելու :
 Ձեր ճակտին ցողով ջինջ պիտի ցոլան ,
 Սիւն , կոթող փոշոտ լուսոյ Հայութեան .
 Բաւ է ձեր զոհեր , բաւ ալ միացէք ,
 Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք :

Յառաջ , յառաջ ,
 Մեծ է ձեր կոչում .
 Քաջի ծնունդ քաջեր ,
 Մասեաց սարերէն :

Ալեւոր դարեր ,
 Լուռ ձեզ կը դիտեն .
 Քայլերու շարժում ,
 Յառաջ , յառաջ :

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան չըքեղ ,
 Թէ երգք թուչին սիրողարար .
 Մատունք կուսին ամենագեղ ,
 Թէ որ զարնեն փափուկ քընար :

Չունին ձայն մի այնքան սիրուն ,
 Քան զանձկալիճեղբայր ճանուն :

Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք ,
 Որ մըրրկաւ էինք զատուած .
 Բաղդին ամեն օր շարունենդ ,
 Ի մի համբոյր ցրուին 'ի բաց :

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն :
 Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայր Հայաստան ,
 Տեսնէ զորդիս իւր քովէ քով :

Մրտին խորունկ վէրքըն դաժան ,
 Գաղցր արտասուաց բուժին ցօղով :

Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն ,
 Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք 'ի հընում ,
 Եկէք դարձեալ յար անբաժան ,
 Խառնենք զարտօսր և ըզխնատում ,
 Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան :

Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն ,
 Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ հոգնինք մէկտեղ ցանենք ,
 Մէկտեղ թափին մեր քրտինքներ .
 Ըզհունձք բարեաց յերկինս հանենք ,
 Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :

Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն ,
 Քան զանձկալի եղբայր անուն :

Մ. ՊԵՏԻԹԱՆԵԱՆ



Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամպերն որոտացին ,
 Ու ամենուն սիրտ դող առաւ .
 Ի զուր Հրեշտակ Մասեաց սարին ,
 Հայոց բաղդին վրայ լացաւ .
 Սեւ փոթորկաց մէջէն սրավար ,
 Տեսէք ի՛նչպէս կ'ելլէ պայծառ :

Կուգայ ցնծալով ,
 Ընծայ բերելով .
 Բիւր երջանկութիւն ,
 Սահմանադրութիւն .
 Սահմանադրութիւն :

Ողջն աւուրն այն գերապանծ ,
 Ուր բարձրացաւ 'ի լոյս յաղթող .
 Արդարութեան և իրաւանց ,
 Եւ ազգութեան յաւերժ կոթող .
 Արկողն հիմունս անդնդալիւր ,
 Եւ մեծ գործոյն հանդիսադիր :

Կուգայ ցնծալով եւն :

Նա բարձրացաւ , ու սեւադէմ ,
 Ատելութեան խրոխտ ամբարտակ .

ինկաւ կործան, ու լուսաճեմ,
Թըռաւ առ մեզ սէր անուշակ.
Որ զամբարտակն այն խորտակեց,
Ու զսէրն անուշ մեզի խրկեց:

Կուգայ ցնծալով եւն:

Ո՛հ, բնագաւառ մեր Հայաստան,
Գերեզմանաց դու Հայրենիք.
Նոցա վերայ փրչոց փոխան,
Բուսնին զըւարթ հոյլ վարդենիք.
Ահա ցաւած ճակատէդ թառամ,
Կապել պըսակ մի անթառամ:

Կուգայ ցնծալով եւն:

Միթէ տեսնէք դուք հեռըւանց,
Հայոց սրաթեւ մեծ ազադայ.
Որոյ վերայ յերկնից բարձանց,
Փայլէ հրաշէկ աստղըն Հայկայ.
Յայն ասպարէզ մեզ տալ հրաւեր,
Եւ առաջնորդ աւետարեր:

Կուգայ ցնծալով եւն:

Մ. ՊԵՆՆԻՍՅԱՆԵՆ



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ Հայրենիքս զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայլէ
Հեռանալ Հայաստանէն:

Միթէ արծաթ, ոսկի, գոհար ք
Կ'սփոփէ Հայաստանը.
Այն որ կ'ողբայ որդւոց համար,
Խղճալի Հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր ք
Թագուհի Հայաստանը,
Բուժիկ ոտքով ազատ մնալով ք
Կ'արտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չըյիշեր,
Մոռցեր է Հայաստանը.
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր,
Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ թողէք զիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննըման Հայաստանը:

Արեւ ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը.

Հայոց արեւջալ մարեր է,
Սեւ հագեր Հայաստանը:

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛հ չիկայ Հայ, որ ըստփէ ✓
Նուազեալ Հայաստանը:

Թէ և կըտրի իմ վերջին շունչս,
Պիտի պողամ Հայաստան.
Պլուխմ մէյմ իմ Հայրենեացս,
Հապա մտնեմ գերեզման:

Անդորրութիւն ես կը խնդրեմ,
Սիրելի Հայաստանին.
Կտրել այս ձայնս չէ չէ կարող է
Սոսկումըն գերեզմանին 4

ս. ՆԱԳՆԱՆՅԷ

ԵՐԳ

ՅԱԻԱԳԻՆ

Իմ սիրելի դաւակունքս
կը թափառին օտար յաշխարհ.

Ես ո՛ւր դիմեմ, ո՛ւր փնտրուեմ,
կը ծառային այլոց խոնարհ:

Եկայք որդեակք իմ,
Զեր մօրն այցելութեան:

Դարեր անցան, լուր մը չառի,
Իմ քաջերս մեռան կորան.
Կ'ուլամ արիւնքս կը սառի...
Մէկը չ'ունիմ տայ ինձ դարման:

Եկայք որդեակք եւն:

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտոյն իմ որդեկաց, (Հարթորով)
Պիտի ինչնեմ սեւ գերեզման:

Եկայք որդեակք եւն:

Եւ դու հովիւ թափառական,
Կերդես տխուր ի մէջ հովտաց.
Ե՛կ արտասուենք թանկ կորստեան,
Տխուր մահուան մեր որդեկաց:

Եկայք որդեակք եւն:

Իսկ դ՛ու կռունկ իմ Հայրենեաց ,
Գնա՛ հեռու աչքէս ՚ի բաց . . .
Յեախն ողջոյնս տար զաւակացս ,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած :

Եկայք որդեակք եւն :



ՊԱՐԵՐԳ

ՎԱՄՅ

Ի խումբ ՚ի պար ,
Հայրենասէր պանդուխտ Հայք ,
Ի թիկնդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն :

ԱՏԵՂԱԳՈՂ

Առ Հայս հանուր տան դանգիւն ,
Հրաւէր կարդալ Հայ դիւցազներուն :

Ի խումբ ՚ի պար ,

Ո՛վ Հայրենեաց քաջ որդիք ,
Մեր ոտից տրոփիւն բարէ թնտացուց :

ԱԿՆԿԱԼՈՒ

Հայ սրտերն բոցակէզ ,
Յաղթական փառաց խմբել զհանդէս :

Ս. Գ. Գ. ՓԱՓԱՋՆԱՆ



ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ

ՍՍ. ՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Իջէք զուարթունք՝ և ՚ի Ձեր թեւս ապաստան ,
Յայց ելցուք այսօր յանձկալին Հայաստան .

Ըզժողկապսակդ ածէք այսր զքնար ,
Որ երգեր երբեմն ՚ի դրախտս Ադենայ .
Հանգուցեալ այժմիկ ՚ի յիրմաց սնար ,
Զայն տուք զարթուցէք զորդիս Արամայ :

Ստտի դիւցազունք ,
Թողեալ զգամբան .
Եւ անտի զուարթունք ,
Ողջոյն քեզ ողջոյն ,
Սահմանադրութիւն :

Ո՛վ որ յեցեալ ՚ի տխուր սափոր դիւցազանց ,
Գթով յերկինս ածես յաւէտ բիրս աչաց .

Ով հայաստանեայց ոգի սրբանուէր ,
Ահա հաշտ ակամբ ժպտի քեզ Աստուած .
Պարզի երգներանգ լար կապոյտ յեթեր ,
Դառնալ Աղաւնեակն ոստով ձիթենեաց :

Եփրատ առ Տիգրիս ,
 Որսեայն առ Սեւան .
 Տարով աւետիս ,
 Հնչեացեն միաբան .
 Ողջնքն քեզ ողջնքն ,
 Սահմանադրութիւն :

Ալ 'ի յաջ' սիրտ 'ի սիրտ' ոգի խառն յոգի ,
 Մատիք օն անդր յասպարէզ սիրտք հայեցի .

Ձի չքնաղ տեսիլ պարզի արդ յա'
 իմ .

Ահա յոյս և սէր՝ որպէս զոյգ հր
 տակք

Առաջնորդեն մեզ . . . ով Տէր . . . խա-
 բեցիմ . . .

Ո՛չ , զայդ վկայեն սիրոյ այդ բաժակք . . .

Հայկեանք առ Հայկեանս ,
 Դարք դարուց՝ որ գան .
 Տարով արձագանս ,
 Կրկնեացեն միաբան .
 Ողջնքն քեզ ողջնքն ,
 Սահմանադրութիւն :

Ք. ՅԵՐԶԵԱՆ

Ի ԳԵԶ ԱՆԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի քեզ անկայ Հայաստան ,
 Ի քեզ մընամ Հայաստան . . .
 Ապրիմ մեռնիմ քեզ համար ,
 Անձս ու հոգիս տամ յօժար :

Անք բացի չբացի, զքեզ Հայաստան ես տեսայ,
 Դեռ իմ երես ծաղր չեկած , ես ողբացի քո
 վերայ .
 Հաց և ցաւեր , վիշտ սաստիկ , զիս պատեցին
 չորս դիէն ,
 Ի Հայաստան գոչեցի , աւերակաց առի ձէն :

Մայրս ծընաւ զիս 'ի ցաւ ,
 Աչս յաւերակոդ լացաւ .
 Բերկրանք և մի ոչ տեսի ,
 Երբ Հայաստան զքեզ տեսի :

Ան Հայաստան , Հայաստան , անուանդ մեռ-
 նիմ Հայաստան ,
 Երբեմն բերկրանք ցնծութիւն . այժմիկ ան-
 կեալ կաս զընդան .
 Սրտիւ սիրով կարօտիմ , մատաղ լինիմ քո
 հոգւոյդ ,
 Որ զիս ծնար սնուցեր , և հաներ քաղցրիկ
 ծոցոյդ :

Այլ ես զքեզ միշտ լացի ,
Եւ յաւիտեան պիտի լամ .
Հողիս հողւոյդ փոխարէն ,
Տամ նազելի Հայաստան :

Իմ հայրենի Հայաստան ,
Ինձ ոչ երբէք դու
զուարթ ,
Երեւեցար միշտ անփառք՝
գետնին եղած հաւ-
սար հարթ .
Ինչ աչք տեսաւ չարտասուեց ,
քո հին աւուրց
աւերակ ,
Ինչ սիրտ չզգաց քո չէն
անչէն ապարանք :

Աչքըս թարթեմ ,
արցունք թափեմ ,
Աղի ջրով հողըդ թացեմ .
Մինչեւ մեռնիմ տապան
մըտնամ ,
Ոսկերտեօքս ողբամ ու լամ :

Ի քեզ անկայ ես յարգանդէ մօր
իմոյ ,
Սէր քո սաստիկ զիս տագնապէ
'ի ցաւ քո .
Օտար երկիր եմ տեսած .
'ի յաւերակս քո ծնայ ,
Նուիրական արիւնոտ
հողոյդ վերայ զարդացայ :

Տուն Աստուծոյ Հայաստան ,
Ա՛խ քո անուն հողիս
եհան .
Հայոց պարծանք քաջաց
մայր ,
Այժմիկ ունայն
և զրկեալ :

Երդնում 'ի Հայկ 'ի Մասիս
թէ դու փութով
նորոգիս ,
Եարժէ ուրեմն
և շարժիր ,
արի վեր կաց
զօ-
րացիր .
Սիրեմ ըզքեզ Հայ
անուն ,
աղանց քաջաց
պան-
ծալի ,
Դու Աստուծոյ սիրելի ,
աղբի մարդկան
ցան-
կալի :

Եհաս ահա դար խաղաղ ,
Աւերակներդ
կանգնին վաղ .
Որդիքդ լինին
լուսաւոր ,
Եւ զքեզ առնեն
փառաւոր :



ՔԵՐԵՉՄԱՆՔ

ՀԱՅՈՑ

Լուռ և տխուր դաշտեր
գեղեցիկ ,
Բաջ որերոյն
աճիւններով դեռահեղ .
Ուր սուրբ շիրմաց
ժածկէ տեսիլ
խաղաղիկ ,
Չարմենազան
հաղար ծաղիկ
դունադեղ :

Աւաղ Հայոց
արեւուն ,
Աւաղ Հայոց
քաջերուն :

Որոց կըրեմք մեք արիւն ,
Օրհնեալ է Հայք , Ձեր անուն :

Ո՛ վե՛հ նախնեաց , կտրի՛ճ երբարց սուրբ շիրիմ ,
Չայն մը տուէք , որ մեր արտասուքը ցամքի .
Վանկ մը հերիք ցաւած սրտիցս որ բերկրիմք ,
Մեզ ժըպտեցէք շիջեալ աստղ Հայրենի :

Աւանդ Հայոց և այլն :

Բացէք , բացէք մամուռ սափորք սրբակիրք ,
Յուցէք քաջացն ոսկերտտիքն համբուրեմք .
Եւ համբուրէ մեր և սգաւոր Հայրենիք ,
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգենք :

Աւանդ Հայոց և այլն :

Գետք Հայրենիք քանի 'ի Ձեզ կան ալիք ,
Եւ դուն , լուսին , քանի կանդեզդ վառ մնայ ,
Դուն ալ սոխակ քանի ունիս դայլայլիկ ,
Երգեցէք զՀայն , լըսեն սերունդք ազադայ :

Աւանդ Հայոց և այլն :

ՆՆՆ ՁՁՁՁՁՁ

Կար ժամանակ , որ և Հայերն ,
Արքայ իշխող ունէին :

Եւ զինավառ անթիւ զօրքեր ,
Իւրեանց երկրում պահէին :

Կար ժամանակ որ և նոքա ,
Նման ծաղկած ազգերի .
Չարդարելով աշխարհ Հայկայ ,
Փայլում էին անուանի :

Բայց այժմ անտէր , անթագաւոր ,
Գերի , ծառայ ցաւադին .

Այս տեղ այն տեղ խիստ չքաւոր ,
Չարչարվում են դժխովին :

Այժմ նոքա անմխիթար ,
Հայրենիքից զրկուելով .
Վայ են կանչում թշուառարար ,
Հալածանքներ կրելով :

ԵՐԳ

ՌԱՄԿԱԿԱՆ

Կրուունկ ուստի՞ կուգաս ծառայ եմ Հայնիդ ,
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .
Մի՛ վազեր երամիդ շուտով կու հասնիս ,
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Թողեր եմ՝ ւ՛եկեր եմ՝ մըլքերս ու այգիս՝
 Գանի որ ախ կանեմ կու քաղվի հողիս .
 Կըռունկ պահ մի կացիր՝ ձայնիկդ՝ ՚ի հողիս ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ ,
 Չայնիկդ անուշ կուգայ քան ըզճրբի տօլապ .
 Կըռունկ Պաղտատ իջնուս՝ կամ թէ՛ ՚ի Հալապ ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Արտերնիս կամեցաւ ելանք գընացանք ,
 Այս սուտ աս տընվորիս տէրտէրն իմացանք՝
 Աղու հացկեր մարդկանց կարօտ մընացանք ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Աս տընվորիս բաներն կամաց կամաց է ,
 Եթէ Աստուած լըսէ դռնակն բացցէ .
 Ղարիպին սիրտն է սուգ՝ աչերն ՚ի լաց է ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Աստուած՝ քեզնէ խնդրեմ՝ մուրվէթ ու քէրէմ՝
 Ղարիպին սիրտն է խոց , ճիկերն է վէրէմ .
 Կերած հացն է լեղի՝ ու ջուրն է հարամ ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Ո՛չ զլուր օրըն գիտեմ ո՛չ ըզկիրակին ,
 Չարկած է զիս շամիրուրն բռնած կրակին :

Այրիւ չեմ հողար՝ ձեզնէ կարօտ եմ ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Հաւատով պառկեր եմ , ներքեւ է Ֆըշխի՝
 Հոտոյն այլ չեմ գարշիր կը թըլի մուշկի .
 Շատ հասրէթ մընացանք անկողնու տօշկի ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Պաղտատու կուգաս՝ կերթաս ՚ի սէհրատ՝
 Թղթիկ մի գրեր եմ՝ տամ քեզ ամանաթ՝
 Աստուած թող վկայ լինի քո վերագ ,
 Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Գըրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի ,
 Օրիկ մի օրերուն զաչերս չի բացի .
 Սիրելիք ձեզանէ կարօտ մընացի ,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս :

Աչունն է մօտեցեր գնալու ես թէպտիր ,
 Երամ ես ժողովեր հազար և բիւր .
 Ինձ պատասխան չի տ՛ւիր ելար գընացիր ,
 Կըռունկ մեր աշխարհէն գընա՛ հեռացիր :

Այսօր զարիպութիւնն միակ միաւոր ,
 Հողւով և մարմնով ես եմ մեղաւոր :

Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիաւոր,
 Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունին:

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր դրախտալայր,
 Դու մարդկայնոյ ցեղիս որրան.
 Դու և բնիկ իմ հայրենիք,
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վեհ անունդ սիրտ իմ ո՛հ յոյժ,
 Ոգեւորի ՚ի նոր խրախոյս.
 Եւ անձկայրեաց ՚ի քեզ յուսամ,
 Ի քեզ, ՚ի քեզ յոյս՝ իմ միայն.
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան անուն փարեղի,
 Ի քեզ հանդիստ նոյեան տապան.
 Եգիտ և քեւ ապրեցաւ նոյ,
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Գետք քաջառաջք աղենաբուղիս,
 Զհողդ բարի առնեն յուռթի.
 Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
 Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն,
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան ճնող դիւցազանց,
 Եւ հրաշալեաց հանդիսարան.
 Քո զեփիւռին քաղցր է շքնիւն,
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
 Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան.
 Զոր շքնչեցին և զօրացան,
 Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ.
 Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
 Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յ. ՄԵՐԱՍ ՎԱՆԱՆԵՅԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՏԱՃԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն,
 Սաւառնաթեւ կը սրանայ սիրտ ՚ի խինդ.
 Սուրբ հրեշտակն աւետարեր արդ ճեպոյլ,
 Ողջունել զօրս այս միութեան Հայերուն.
 Չեզ աւետիս բերէ զուարթ բերկրութեան,
 Հայեր, ուրախ, ալ չէ տրտում Հայաստան:

Ելէք Տաճատեանք,
 Որդիք սիրարծարծ.

Տօնել քաղցր 'ի ձայն .
Զօրը ցնձազգեաց :

Ահա պայծառ կը շողշողի սուրբ աստղըն ,
Ի ջինջ բեւեռ մեր ցանկալի Հայրենեաց .
Հրճուի Մասիս , ցնձան Եփրատ և Տիգրիս ,
Ազնիւ Նախնեաց խայտան ոսկերքն 'ի շիրիմս .
Խրախոյս տալով Հայոց չքնաղ միութեան ,
Հայեր՝ ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . եւն :

Պրօշակն ահա՛ Սուրբ վարդանայ կը բացուի ,
Օն 'ի հանդէս ելէք , գօչէ ձեզ Տաճատ .
Օն 'ի հրճուանս , արդ մերժեցաւ սուգ և կոծ ,
Եւ Հայրենիք նոր ցնձութեան առաւ ձորձ .
Զեզ աւետիս կուտայ յաւէտ բերկրութեան ,
Հայեր՝ ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . եւն :

4. 4. ՊԱՂՏԵԱՆ

ՅԱԻՈՒՐ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր ,
Ի՞նչ կը յապաղէք ելնել 'ի հանդէս .

Ի՞նչ կը յապաղէք . - սիրտ կը դիմանայ ,
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ :
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ ,
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ .
Խեռ ատելութեան և չար նախանձու ,
Սերմերն ու ոգին հեռու մղենք Հեռու :
Սիրտ սրտի կապուած , թեւ թեւի տուած ,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած .
Օն վազենք յառաջ 'ի սուրբ խաչն վստահ ,
Օն երթանք յառաջ , և անձնանուէր ,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր :
Հայ մի վհատիր , սիրտ առ և սիրտ տուր ,
Տկարք զօրանան , քաջք խրախուսին .
Վատերը բացուին , վատերը զատուին ,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին :
Խաչ , սէրն են նշան ճշմարիտ Հայուն ,
Խաչ , սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն :


Սիրոյ դըրօշներ ,
Թող արդ պարզուին .
Հաշտութեան ձայներ ,
Թող արդ հնչուին :

Հայն մէկ սիրտ եղաւ ,
Սիրով միացաւ .
Սուտ են որ ըսեն ,
« Հայք զիրար կատեն » :

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը ,
Եկէք , հայկազունք եկէք միանանք .
Եւ սիրովենք մեր վշտացած մօր սիրտը ,
Օրհնելով Տէրը , որ մեզ պարգեւեց :

Մեր Ազգին կապն ու հոգին ,
Ազգային Սահմանադրութիւն .
- Յաւերժացի արգիւնաւէտ :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՅ



ԱՐՇԱԼՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՉ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց սեւ տխրողին օրերը ,
Փարատեցան , նոր հօրիզոն բացուեցաւ .
Մեզի համար չեն այն միջին ամպերը ,
Ձի արշալոյս պայծառ դարձեալ փայլեցաւ :

Յուրախութիւն , ո՛ հայեր ,
Որդիք Հայկայ ԼՍրամայ .
Չեզ փառաւոր պողոտայ ,
Հորդեն երկինք լուսաբեր :

Դուք գիւցաղանց ձեռ էք , Հայեր , քաջ եղիք ,
Յառաջ դացեք , յառաջ , ահա՛ ասպարեզ .
Մայր Հայաստան ձեզ կը նայի աւասիկ ,
Մեզմացուցէք իր արտասուքն աշեկեզ .

Թշուառութեան բաժակը ,
Մինչեւ տակը քամեցինք .
Արդ ուղարկեց մեզ երկինք ,
Աւետարեր հրեշտակը :

Այն հրեշտակը որ վարդանայ վեհ ոգին ,
Ի՛նչպէս նահատակաց սուրբ գունդը .
Ներկայացոյց Ամենակալ Արքային ,
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր անգունդը :

Արդ՝ ձեզ կուգայ , հայկազունք ,
Նոր աւետիս բերելով .
« Ձէ այլ ձեզ բաղդըն խռով ,
Դուք քաջարեաց , ո՛ մանկունք » :

Օ՛ն խայտացէք , Գողթան երգեր թնջ հնչեն ,
Թո՛ղ արձագանք տան և հովիտք , բլուրներ .
Մեր սիրտերը , որ սուրբ սիրով կը տրոփեն ,
Թո՛ղ միանան ու կորնչի անսուրբ հեռ :

Ի՛նչ ամեն տարի ցնծութեամբ ,
Մեք այս շքեղ հովտին մէջ .
Հեշտին պարուց ելեւեջ ,
Ընեմք դարձեալ միութեամբ :

ՄԻՄՈՆ ՀԱՅՎ Մ . ՖԷԼԻԿՍԱՆ



Ի ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏՍՐԵԴՍՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հրեշտակ Մասեաց մրտենիներ 'ի ձեռնին ,
Մրդ մեղ ձօնէ համբոյր սիրոյ կաթողին .
Մեղըր հոսին իր գեղեցիկ շրթունքէն ,
Վարդեր ծրլին իր զուարթագին ժրպիտէն :

Իւր մատունք կը հիւսեն ,
Դիւցաղանց պերճ պսակներ :
Հայ բաղդին վրայ սփռեն ,
Յուսաշող նշոյլներ :

Յաւերակաց Հայաստանի երգ հնչենք ,
Տան արձագանք այն սրտերուն որք քաջ են .
Ալիք՝ զալիս հեղահամբոյր ողջունեն ,
Մաղիկք՝ ծաղկանց թեթեւ թեւօք կը դգուեն :

Այն քնքոյշ վարդենիք ,
Զոր երկինք մեզ տըւին .
Ո՛հ եղան հովանիք ,
Անմեղաց սեւ բաղդին :

Հայուն սրտին խորին վէրքերն թաղուեցան ,
Ժամանակին հզոր ձեռօք 'ի դամբան .
Հայուն աչքին ալքաղցրանան դառն արցունք ,
Սէր կը հնչեն սինչդեռ իրեն պարզ շրթունք :

Վարդանայ վեհ դավնիք ,
Թո՛ղ նորէն ալ ծրլին .
Մինչ Հայկայ քաջ որդիք ,
Զուարթ երգեն Հայրենին :

Մեր արտասուաց մէջ մարեցան ո՛վ Հայեր ,
Աստուածային այն ահաւոր կայծակներ .
Երբ հաշտութեան ձայնք կրկնեցին արմն սիրտ ,
Երբ քաղցր աչօք մեզ ժպտեցաւ ո՛հ երկինք :

Անդ դարձաւ Աղաւնեակն ,
Տարով մեծ աւետիս .
Զուարթ բերաւ յաղթանակն՝
Հաշտութեան վեհ Ազգին :

Զարթնուն քաջերն 'ի բնագաւառն 'ի հանդէս ,
Ո՛ւր պերճ փառաց եղեւ որրան և՛ առպարէզ .

Հրճուի երկիր, ցնձան երկինք զուարթագէմ,
Մինչ դայ յուսոյն չքնաղ հրեշտակ երկնաճեմ:

Երկնային զուարթունք,
Ո՛հ սիրոյ երգերով.
Կը նետեն մեղ ծաղկունք,
Անուշիկ նայուածքով:

Անհուն վշտացը մէջ տես Ոգիդ կուսական,
Որդիքդ ինչպէս արցունքդ սրբեղ խոտանան.
Լանջք Հայկազանց քաղցրիկ երգերդ կը կըրկ-
նեն,
Հայոց կուսանք քայլերուդ տակ վարդք սրբ-
ուն:

Բրաբրին մանուշակ,
Ո՛վ սիրուն Հայրենիք.
Պիտ՝ հիւսուին քեզ պսակ,
Մինչ հաշտ են մեզ երկինք:

Ա. Յ. ԱՅՎԱՋԵԱՆ



Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք,
Հերիք լացաւ, հերիք հեծեց իւր բաղդին:

Հայն իւր վշտերն մուցած տայ ընկերին,
Սիրոյ համբոյր, սիրոյ ժրպիտ և ծաղկունք:

Նոյեան աղանին,
Չիթենեաց ճիւղեր.
Սփռելով գետին,
ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԲԵՐԷՐ:

Ահա՛ և այսօր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ,
Իբրեւ աղանին բերաւ Հաշտութիւն.
Ոսկի թելերն թնղ հնչէ հայ քնար,
Որոց ննջեն ընդ հովանեաւ սուրբ շիրմաց.
Համբոյր սիրոյ դրօշմեն յերեսս իրերաց,
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թնղ աշխարհ:

Չայն տուք դիւցազանց,
Որ յԱրտաղ ննջեն...
Աստեղք Հայկազանց,
Նորալոյս փայլեն:

Աչէ՛ սիրա սրտի խառնէ միութիւն,
Չի յաւերժացի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.



Ե Ր Գ

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Ո Ր

ԿԱՏԱՐԵՅԱԻ Ի ԴԱՇՏՆ ՍԻՍՐԱՅՐԻ

Հուր բարկութեան համայն հայոց,
 Բորբոքեալ զերդ բոց բարկաճայթ.
 Ու կայծականցըս բիւր բիւրոց,
 Չարթոյց 'ի մարտ սարս սառնապատ:
 Չի վարանիմք արդ աստ եղբարք,
 Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.
 Չեռամբ յարտազ տղմուտ օն դրոյդ 'ի դրոյդ,
 Ի դրոյդ թռչիմք սրանամք, սրանամք,
 րանամք:

Հուր զէն 'ի ձեռին
 Ու վրէժ ահագին
 Սպասեն և կան
 Քաջք Արշակունեան:

Եւ յոր երկինք հանդիսատես
 Չաշխոյժ նախնեաց հեղու 'ի մեզ:

Հապ օն քաջք քաջաց
 Ընդ սասան կուրծս
 Մխեսցուք մկունս
 Ուժդին 'ի հարուած:

Ռ. ՄԵՏԵՅՅԱՆ

ԱՆՁՈՒԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ա.

Հայաստան քաղցր իմ Հայաստան,
 Ողիքս յանուշ հալեցան.
 Մինչեւ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
 Ոգւոյս իմ ե՞րբ լըցցի ուխտ:

Արդեօք աչքս անցկալից,
 Երբեմն ըզքեղ տեսցե՞ն.
 Աչքս այս արտասուալից,
 Երբեք դադարեսցե՞ն:

Շուրթն իմ 'ի հողդ կենսաւոր,
 Տացէ՞ զհամբոյրն ուխտաւոր.
 Արդեօք դլուխս վըշտակո՞ծ,
 Հանդիցէ՞ քոյդ 'ի ծոց:

Հայաստան սէր իմ Հայաստան,
 Ողիքս 'ի տենչդ հալեցան.
 Մինչեւ ցե՞րբ 'ի քէն պանդուխտ,
 Սրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ:

Բ.

Հայաստա՛ն, պերճ իմ Հայաստան,
 Ո՛վ երկիր նուիրական.
 Հընոց կենաց և սրորան,
 Հաշտարար երկնից խորան:

Ի քո սուրբ հովանիս ,
 Ո՛ր զնրժգեհն տանէր զիս .
 Ո՛ր ՚ի ստուերսդ երազմայն ,
 Ըզնախննացս հեղցէ քուն :

Անմահութեանց վեհաբուն ,
 Մըծել անդ զօդ և զաւիւն .
 Եւ զաստեացըս վըշտաց ,
 Գըտանել կատարած :

Հայաստան իմ քաղցր Հայաստան ,
 Ոգիքս յանունդ հալեցան .
 Մինչեւ ցե՞րբ ես ՚ի քէն պանդուխտ ,
 Սրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ :

Գ .

Հայաստան , սիրուն Հայաստան ,
 Յուսոյ խարխիս մարդկութեան .
 Դու ու իմ ըկ ակընկալեաց վայր ,
 Յոր աչք իմ ձըգին յամայր :

Ո՛ր զմին գէթ տայր լընուլ ,
 Զիմս ըզճից ՚ի քեզ հոյլ .
 Ո՛ր զփափաքս յարատեւ ,
 Իբր ըզսիւգ մի թեթեւ :

Հասուցանէր մինչ առ քեզ ,
 Եւ զայս ողջոյնս սրտակէզ .
 Եւ զհառաչս ոգւոյս բիւր ,
 Յոր ընդ բլուր տայր ՚ի սփիւռ :

Հայաստան քաղցր իմ Հայաստան ,
 Ոգիքս ՚ի տենչդ հալեցան .
 Մինչեւ ցե՞րբ ես ՚ի քէն պանդուխտ ,
 Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

Դ .

Հայաստան , իմ վեհ Հայաստան ,
 Երանութեան օթարան .
 Ո՛ր տայր զաւուրս իմ ցաւալիս ,
 Փոխել ո՛հ երանելիս .

Ոչ փառօք փայլելով ,
 Վաղանցուկ ոչ ոսկւով .
 Այլ ՚ի զքեզ տեսանել ,
 Սուրբ ըզսարսդ ողջունել .

Զաւերակօք քո փարել ,
 Եւ զհարցս անդուստ ձայն լրսել .
 Եւ զնոցին հետս անանց ,
 Համբուրել գետնամած :

Հայաստան քաղցր իմ Հայաստան,
 Ոգիքս յանունդ հալեցան,
 Մինչեւ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
 Սրտիս իմ երբ լըցցի ուխտ:

Ե.

Հայաստան անոյշ Հայաստան,
 Դու զողիս լընուս համայն.
 Դու խրախոյս, փառք իմ և վիշտ,
 Յոր սիրտ իմ թըռանի՛ միշտ.

Ես պատիւ, զինչ և զերկ,
 Խանդ, ըզշունչ և սին զերդ.
 Ի բագինդ արգադիր,
 Կախեցից լիաձիր:

Մի լոկ խնդրեալ փոխարէն,
 Ձի ըզքեզ աչք իմ տեսցեն.
 Ձի մի՛ ցմահ անձկալից,
 Ձերդ սերկեան դոչեցից:


Հայաստան իմ քաղցր Հայաստան,
 Ոգիքս յանունդ հալեցան,
 Մինչեւ ցե՞րբ ես 'ի քէն պանդուխտ,
 Սրտիս իմ ե՞րբ լըցցի ուխտ:

Պ Ա Ր Ե Ր Գ

Հայկազունք պար բունենք
 Թեւ 'ի թեւ օն ելնենք
 Յնծութեան ձայներով
 Եւ զուարթ սրտերով.

Ձի ահա 'ի նոր բաղդ
 Ձայն կուտայ երկինք արդ
 Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ
 Անձնուէր գոլ պատրաստ:

Ս. Գ. Գ. ՓԱՓԱՉԵԱՆՑ



Համոն ու սէնա օլ խիւտայի գատիրէ,
 Բի սէմատէն լուծֆ իլլէտի ալէմէ.
 Չիատարի էնտէր ճիհան քէրէմիրիզ,
 Թաճտարի սուլթան Ս.ՊՏԻԻԼ-Ա.ԶԻԶ-ԽԱՆ:

Շէհրի իգպայլ իլէ ատալթֆեարի,
 Օլսուն սէրիր սալթանաթտէ էյեամի,
 Բի խուսպ պէնտի շէֆաաթլէ գուլլէրի,
 Բայէթ խտէր մէշադգաթտէն հէր պլրի:

Էյ շակիրտան քեաֆֆէմիրտէն եէք տիհան,
 Հագդ աղիզէ շիւքր խտէլիմ պի փայան.
 Դըլսըն հիւսնի նազար իլէ ֆիրալան,
 Պէօյլէ եէվմի ֆիւրուզայի սայէպան:

ՆԱԳԱՐԱԹ

Խմբանկյէթ պախչէնտէյի հագդ ճէլիլ ,
Շահրմըզըն իթսին էմրիւնիւ թավիլ :

ՅՐԻՆՆԱՅ Կ. Գ.

ԵՐԳԵԱՅ Ա. Յ.



ԵՐԳՔ

Գ. ՏԱՐԵԴԱՐՉԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ


ԺԱՄ ՈՒՐԱՌՈՒԹԵԱՆ

Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց ,
Գողարիկ պատկեր իմ Հայրենեաց .
Երրորդ անգամ սիրոյ նուագ ,
Քեզ դայ ձօնել Հայ պատանեակ :
Օ՛ն երգեցէք Հայկեան զուարթունք ,
Սիրոյ է ժամս , դադրին արցունք :

Հրեշտակն Հայոց յերկնից սլանայ ,
Նայուած քներէն ժրպիտ շողայ .
Եւ անդ ժպտեն վերականգնին ,
Համբ աւերակք Հայաստանին :
Հայկեան կուսանք զ՛ն փութացէք ,
Նորածին վարդըս սփռեցէք :

Փայլուն աստղեր ահա շողան ,
Երբ հաշտութեան երկնից նըշան .
Հայկեանն փառաց՝ նոր զարդարել ,
Հայկեան քընար՝ նոր երգք տաւղել :
Հայ պատանիք զ՛ն ձայնեցէք ,
Գողարիկ ձայնով ՕՐՍ օրհնեցէք :

Ո՛հ Հայրենիք ալ թո՛ղ չի լան ,
Մաեեաց սարեր արձագանք տան .
Առ Եփրատէս , Տիգրիս գետեր ,
Ո՛ւր կան թաղուած քաջաց ոսկերք :
Հայ ծերունիք վիշտ ձեր մոռցէք ,
Մանկանցդ ճակտէն ըզյոյս տեսէք :
ԱՐՐԱՆՄ Յ. ԱՅՎԱԶՆԱՆ



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ասփերով ,
Քայլամուրր գնում եմ .
Հին հին դարուց յիշատակ ,
Ալեաց մէջը պըտրում եմ :
Բայց նոքա միշտ յեղյեղուկ ,
Պզտոր ջրով եղերքին .
Դարիւ դարիւ խփերով ,
Փախչում էին լալագին :

Արաքս՝ ինչո՞ւ ձկանց հետ ,
Պար չես բռնում մանկական .
Դու դեռ ծովը չը հասած ,
Սգաւոր ես ինձ նման :

Ինչո՞ւ արցուք ցայտում են ,
Քու սէգ հպարտ աչերից .
Ինչո՞ւ արագ փախչում ես ,
Այդ հարազատ ափերից :

Մի պզտորիլ յատակդ ,
Հանդարտ հոսէ խոյտալով .
Մանկութիւնը քու կարճ է ,
Շուտ կը հասնիս դէպ 'ի ծով :

Վարդի թփեր թնոյ բուսնին ,
Քու հիւրընկալ ափի մօտ .
Սոխակները նոցա մէջ ,
Երգեն մինչեւ առաւօտ :

Մշտադալար ուռիներ ,
Սառ ծոցի մէջ քու ջրին .
Ճկուն ոտըն ու տերեւ ,
Թնոյ թնոց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու ,
Հովիւք թող դան համարձակ :

Գառն ու ուրը քու վճիտ ,
Զուրը մտնեն միշտ արձակ :

Մէջքը ուռցուց Արաքսը ,
Փրփուր հանեց իւր տակից .
Ամպի նման գոռալով ,
Էսպէս խօսեց յատակից :

« Խիղճիս , անմիտ պատանի ,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր .
Վրդովում ես նորոգում ,
Իմ ցաւերը բիւրաւոր :

Սիրելի մահից յետ ,
Ե՞րբ ես տեսել , որ այրին .
Ոտից ց՛գլուխ պճնուի ,
Իւր զարդերով թանկագին :

Որի՞ համար զարդարուիմ ,
Որի՞ աչքը հրապուրեմ .
Շատերին՝ ինձ ես ատելի ,
Շատերին՝ ես օտար եմ :

Իմ ազգակիր զի՞ծ Գուռը ,
Թէ և այրի ինձ նըման .
Ըստրկօրէն տանում է ,
Գայթակղիչի կուռ շղթան :

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես Հայ հայիս կը ճանչնամ.
Օտար փեսայ չուղեւով,
Ես միշտ այրի կը մընամ:

Կար ժամանակ, որ ես էլ,
Շքեղազարդ հարսի պէս.
Հազար ու բիւր պըրանքով,
Փախչում էի ափերէս:

Յատակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն.
Լուսաբերը մինչեւ ցայգ,
Ջրիս միջին էր լողում:

Ի՞նչս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս.
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս:

Տուրքը ջրի ամեն օր,
Իր սուրբ ծոցէն Արարատ.
Մայրախընամ ինձ սնունդ,
Պարգեւում է լիառատ:

Բայց ես այն սուրբ ջրերով,
Մուրը Ակոբի աղբիւրին.

Պիտի ցօղե՞մ արտօրայքն,
Իմ ատելի օտարին:

Կամ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կըկզած.
Իր աղօթքը կատարէ,
. . . կամ . . . հոտած:

Մինչ իմ որդիք (ո՞վ գիտէ),
Ծարաւ, նօթի, անտէրունչ.
Օտար աշխարհ յածում են,
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . .

Հեռու հեռու քնիցին,
Բնիկ ազգը իմ Հայկեան.
Նոցա տեղը ինձ տուին,
Անգութ խուժանըն Պարսկական:

Դոցա՞ համար զարդարեմ,
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ,
Ճպտոտ, պլշած աչերը:

Քանի՛ որ իմ զաւակունք,
Էսպէս կու մընան պանդուխտ,
Ձիս միշտ սգաւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ . . .

Էլ չխօսեց Արաքսը ,
 Յորձանք տուեց ահագին .
 Օղակ օղակ օձի պէս ,
 Առաջ սողաց մոլեգին :

ՔԱՄԱՐ ՔՕԹԻՊԱՅ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր , երազի նման (1) ,
 Անցաք զնացիք , այլ չէք դառնալու .
 Ո՛հ դուք երջանիկ , ո՛հ անհող օրեր ,
 Ընդունակ միայն ուրախացնելու :

Չեզանից յետոյ եկաւ գիտութիւն ,
 Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ .
 Ամեն բան ընկաւ մտածութեան տակ ,
 Բոպէ չըմնաց ազատ կամ ունայն :

Գիտակցութիւնը յաջորդեց սորան ,
 Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս . . .
 Ապոլլոն տուեց ինձ իւր քնարը ,
 Որպէս փարատիչ տրտում ցաւերիս :

Աւանդ , այդ քնարը իմ ձեռքում հնչեց ,
 Նոյնպէս լալագին , նոյնպէս վշտահար .

Ինչպէս իմ սիրտն էր , իմ զգացմունքը ,
 Ուրախացուցիչ չի գտայ մի լար :

Ես այն ժամանակ միայն զգացի ,
 Որ այդ ցաւերից ազատվելու չեմ .
 Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ ,
 Օտարների ձեռք անխօս տխրադէմ :

Մանկութեան օրերս , ինչո՞ւ այդպէս չուտ ,
 Թռաք գընացիք անդարձ յաւիտեան .
 Եւ այն ժամանակ անհող ու ազատ ,
 Կարծում էի ինձ աշխարհի իշխան :

Տէրութեան շղթան ինձ զգալի չէր ,
 Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը .
 Չեզանից յետոյ ծանրացան նորա ,
 Ո՛հ , անիծում եմ ես այս օրերը :

Լուռ կաց դու քնար , այլ մի հնչէր ինձ ,
 Ապոլլոն , յետ առ դարձեալ դու նորան .
 Տուր մի այլ մարդու , որ ընդունակ է ,
 Զոհ բերել կեանքը սիրած աղջկան :

Ես պիտի դուրս դամ դէպ ՚ի հրապարակ ,
 Առանց քնարի , անզարդ խօսքերով .
 Ես պիտի գոչեմ , պիտի բողոքեմ ,
 Խաւարի ընդդէմ պատերազմելով :

(1) Տե՛ս Հեռօրհասպալը 1859 թիւ 9:

Ներկայ օրերում ալ ինչ սեւ քնար ,
 Սուր է հարկաւոր կործի ձեռքին .
 Արիւն ու կրրակ թշնամու վերայ ,
 Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին :

Թող պատգամախօսը հնացած Դէլֆի ,
 Իւր եռոտանու վերայ փրփրի .
 Թող միջին դարու գաղափարներով ,
 Ամբոխը խաբել ճգնի աշխատի :

Թող նա թարգմանէ զրպարտութիւնը ,
 Թող մխիթարուի ծովի ափերում .
 Մենք ազատութեան ենք միայն թարգման ,
 Միայն այս խօսքըս ունիմք բերանում :

Ո՛վ Հայր , ո՛վ դու Հայր , որ երկնքում ես ,
 Խընայիր թշուառ մեր անտէր ազգին .
 Մի տար զո՞հ գնալ թշնամիների ,
 Նա ալ չէ լըսում Դելֆեան հարցուկին :

Կոհ Էմմանուէլ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱՐԱՆՊԵԱՅՑ

ՀՐԱԺԵՇՏ

ՔԱԶԱՍԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր Հայրենեաց փափուկ հողեր ,
 Արեան գետակ են դարձուցեր ,

Եւ այն դաշտերն Աղատութեան ,
 Թշնամեաց սուրք կը շողշողան :

Բռնաւորին սեւ թեւոց տակ ,
 Քանի դարեր հեծենք թշուառք .
 Արիւն արցունք գիշերն ամեն ,
 Հերիք իջան մեր աչքերէն :

Քաշած աղէտքըս ալ կը բաւեն ,
 Վրէժխնդրութեան հրաւերք հնչեն .
 Ալ չեմ կրնար չլիթայից տակ .
 Դերի տեսնալ իմ քորքն ու եղբարք :

Այսօր ինձի թող օր մ'ըլլայ ,
 Յաղթանակի և կամ մահուան .
 Դերի մնալէն քաղցր է ինձ ո՞հ ,
 Հանդչիլ փառօք նախնեացս ՚ի հող :

Զի որն արդեօք իմ հայրերէն ,
 Հանդիստ մահուամբ լուռ ննջած են . . .
 Այլ պատերազմ և յաղթանակ ,
 Միշտ թողուցին մեզ յիշատակ :

Օ՛ն խաչանիչ դրօշովս փութամ ,
 Հայրենավրէժ ՚ի պատերազմ .
 Վատ ազգեբուն դահն կործանեմ ,
 Եւ յաղթական նըւաղս երգեմ :

Չի խրախուսեն իմ Հարց ստուերք,
Ազգիս շղթայք ալ խորտակել.
Իմ Հայրենեաց քաղցր ապագան,
Սրտիս կուտայ ոյժ քաջութեան:

Այո, հոն տեղ մահն ինձ քաղցր է,
Ազատութեան երբ փողն հնչէ.
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր,
Պարզել յեթերս ազատ դրոշներ:

Հոն թշնամոյն արիւններով,
Դիականց վրայ անլինջ գրրով.
Իմ Հայրենի փառքըն դրոշմեմ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ:

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ.
Ազատութեան յաղթանակով,
Վերադարձն իմ սուրբ հարցըս քով:



Ա.Ռ.

ԱՍՏՂԸՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն հայրենեաց
Բեւեռը շողշողը.

Մեր սիրուն քաջազանց
Աճիւններն ցարդ հսկող,
Պայծառ աստղոր այժմիկ
Լոյսդ կընես թափանցիկ.
Մինչեւ Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց.
Ո՛վ քաղցր Յոյս, դու մխիթար
Տարագիր Հայոցս թշուառ.
Ի՛նչ աշխոյժ նոր ՚ի նոր,
Ի՛նչ աշխոյժ ոգեւոր
Կարծարծես սրտերնուս,
Ո՛վ Հայոցս միակ Յոյս:

Չէ, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Մեզ քաջալեր են Յոյս և Ժամանակ.
Չէ ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ յառանջ ընթանանք.
Յառանջ ընթանանք, հոն ուր հրաւէր,
Հրաւէր կարգան մեզ նախահարց աստղեր:

Թէ Հայկայ որդիք եմք,
Թէ Հայկայ արիւն կրեմք.
Ամենքս ալ ՚ի սուրբ սէր
Հայրենեաց ՚ի նուէր.
Քաջ որդիք պանծալի
Ըլլամք միշտ արժանի:

Ս. Գ. Գ. Փարսադուս

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ .

Ա Ձ Ա Տ ՈՒ Թ Ե Ա Ն

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին ,
Յարծաթեայ կառացն ժպտէր զուարթագին .
Ի բարձանց Երկնից սիրոյ հրեշտակներ ,
Մեզ կը սփռէին դափնեայ պսակներ :

Բանդուռնքն երգէին զվեհն Ազատութիւն ,
Որ մեզի բերէր փրկութեան ողջոյն .
Պճնէին ծաղկամբք դամբանքն լըռին ,
Ո՛ւր Հայ դիւցազանց ոսկերքըն հանգչին :

Երկնքէն ժպտին պաղպաջուն աստղեր ,
Երբ կը ծածանին Հայոց դրոշակներ .
Ազատ Մասիսի լեռանց ծայրերէն ,
Հայրենահրաւէր ձայներ կը հնչեն :

Դժոխոց դռներըն խորտակելով ,
Վարդան և Մեսրոպ ՚ի վեր վազելով .
Կանգնեն յաղթանակ պերճ Ազատութեան ,
Վերանորոգ են փառքեր Հայութեան :

Ո՛հ ինչպէս հրճուին Հայոց զաւակներ ,
Մինչդեռ կը տեսնեն նախնեաց հին փառքեր .
Լուռ կրնայ մնալ մեր սիրուն քընար ,
Մինչդեռ Աստղն Հայկայ շողայ լուսավառ :

Պ Ա Ն Դ ՈՒ Ի Ս

ԵՒ

Ա Ր Մ Ե Ն ՈՒ Հ Ի

Մինչ հայրենի զուարթ յափանց տարագիր ,
Պանդուխտն թշուառ հեծէ յաղէտս տրտմալիր .
Միայնութիւն սուգ և հառաչք անդադար ,
Նա յուսաբեկ դիտէ օտար 'ի յաշխարհ .

Բիւր սփոփանս ազդեն 'ի սիրտ թշուառին ,
Արմենուհւոյն աչերն 'ի գութ երբ ժպտին :

Ո՛հ , մինչ նախնեաց թշուառութեան յիշատակ ,
Բերէ 'ի տես ըզթշնամւոյն յաղթանակ .
Աւերակաց ահեղ բեկորք տխրական ,
Եւ մահաբոյր ցուրտ դամբանաց տեսարան .
Նկուն վիճակ եղբարց , սուսերն անխնայ ,
Թէ Պանդխտին չըթողուն յոյս դուզնաքեայ :

Բիւր սփոփանս ազդեն յայնժամ , եւայլն :

Թէ շարաշուք բաղդին 'ի ձեռս խաղալիկ ,
Վճիռ անդարձ են միշտ նմա ողբ լալիք .
Ճնշիլ ընդ ցաւօք , ծիւրիլ յանձուկ հայրենեաց ,
Մինչ ոգաւոր յաւարտ աւուրց իւր կենաց :

Բիւր սփոփանս ազդեն 'ի սիրտ , եւայլն :

Գարուն զուարթ հէք մահացուաց այցելու ,
 Ոչ Պանդխտին թուի այնքան կենսատու .
 Արմենուհւոյն քան զմիմունջ դողդոջուն ,
 Որ 'ի կիթառ երգէ զՍէր զուարթուն .
 Առոյգ 'նդ հուպարուցեալ յողբոց տխրանուէր ,
 Գոչէ Պանդուխտն Վերկնաղգեցիկ է քոյդ Սէր» :

Բիւր սփոփանս ազգես 'ի սիրտ թշուառիս ,
 Արմենուհի՛դ , մինչդեռ 'ի Սէր դու ժպտիս :

Բ. Կ. ԹԻԼԻՍԻ

Մ Ա Ր Շ

Մնացես բարեաւ սէր իմ սէր ,
 Հրաւէր մարտին որոտաց ,
 Թէ չեմ քաջաց ես ընկեր ,
 Չըկայ բաժին ինձ փառաց :

Մի՛ լար հոգւոյս իմ հատոր ,
 Գուցէ դառնամ ոհ մի՛ լար .
 Թ'անկայց մարտին ես 'ի գող ,
 Տեսցուք յերկինս մեք զիրեար :

Եղբայրագաւ չէ նախանձ ,
 Որ բորբոքեալ յիս վառի .
 Ի սուրբ հողոյ Հայկազանց ,
 Բառնամ զուժ օտարի :

Ա Ս Տ Ղ Ի Կ Ն

Հ Ա Յ Ո Ց

Մուսայք մասեաց ելէք 'ի դաշտ ,
 Հայել Հայոց յԱստղիկըն հաշտ .
 Ի դաշտ , յորում սիրով Հայեր ,
 Կարդան փառաց հըրաւէր :

Տեսէք Հայոց տանն հորիզոն ,
 Կոյս մի չըքեղ և ըզգօն .
 Աչք վառվառուն , դէմք գեղանի ,
 Հայուն սիրով նա ժըպտի :

Կեցցէ միշտ յաւերժ
 Կոյսն զուարթուն ,
 Վատին 'ի վըրէժ
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Տեսէք յաջմէ բոց սիրալոյս ,
 Վառենք պատրոյկ սրտերնուս :

Եւ 'ի ձախմէ սիրոյ դրօշակ ,
 Հայեր մտնանք անոր տակ :

Ճամանակին խորէն անբաւ ,
 Կուսին մատն էր երեւեցաւ .
 Յրուեց մտաց ամպեր մթին ,
 Բացաւ սիրոյ մեզ ուղին :

Կեցցէ միշտ յաւէրժ ,
 Կոյսն զուարթուն .
 Վատին 'ի վրէժ ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հայեր յառաջ , նենդ ոխ 'ի բաց ,
 Կուսին ելնենք արդ 'ի յայց .
 Եղբայր եղբօր ձեռք սիրտ տուած ,
 Համբոյր մի տանք սիրազգաց :

Կա'ց Հայ Աստղիկդ , կա'ց անսասան ,
 Շնորհիւ վեհին Օսմանեան .
 Եւ քեւ կեցցեն մանկունք Հայոց ,
 Ի սիրարծարծ քոյին ծոց :

Կեցցէ միշտ յաւէրժ ,
 Կոյսն զուարթուն .
 Վատին 'ի վրէժ ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հ Ր Ա Վ Ե Շ Տ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ

ՅԱԻԱՐՏ ԱՌԱՋԻՆ ԵՂԱՆԱԿԻՆ

ԽՄԲԵԱԿՆ

Մինչ ծովամաց կան 'ի խշտիս արփւոյն սլաք
 բոցեղէն ,
 Եւ սեւանկար ամպոց ծածկոյթ զաչկունս երկ-
 նից սքօղեն .

Արդ գիշերայն ,
 Մինչ լուեղայն .
 Նիրհէ բնութիւն ,
 Օ'ն մեք համբուն :

Ըզմանկական մեր չրթնեկաց ,
 Պարզեալ ըզծիրս յերդ նուագաց :

Ի սոյն ատեան , ուր բիւր մատեան ,
 Ճամանակին դան յերեւան :

Եւ ուր անցեալն 'ի հայելուջ ,
 Ի ներկային խուսափի ո'չ :

Օ'ն մեք զերկնից սքանչելիս ,
 Գեղգեղելով 'ի գրուատիս :

Չայնքս հնչեացեն յայս վայր յօրհներդ ,
 Զգանդ արձանաց տացեն այերք .
 Եւ ժպտեսցի Երկինք 'ի վեր ,
 Որ զտիւն արար և ըզգիշեր :

Որ զյաւիտեանցն զժամանակ ,
 Զափեալ տարւոյն 'ի յեղանակ .
 Պճնէ դարնամբ զուարթագեղ ,
 Պարուց հաւուց 'ի բիւր գեղգեղ :

ԺԱՄԱՆԱԿՆ

Ա. Իմբեայն

Եւ զի զուարթ ձայն մանկական ըզծերունւոյս
 խըռովէ նինջ ,
 Զոր քնէած զեփիւռ դարնան յիմ թարթեւանս
 սըփռէր այն ինչ . . .
 Մի , մանկունք , մի երգովք անժամ ըզժամա-
 նակս առնէք գնատ ,
 Թէ ձեզ դարուն , ձըմեռն յաւէրժ պատէ զան-
 շուքն իմ ցուրտ ճակատ :

Թողէք յայս վայր ինձ միայնոյ նուիրական ,
 Փակել զաչկունս , աւուրք անցցեն և աշնան .
 Այլ ձմերայնոյն հողմունք ուժգին թէ ան-
 գէն ,
 Ի խոր քնոյս ըզծերունիս զարթուսցեն .

Ի յեւս Արփւոյն Լերինք սպիտակ խառն ընդ-
 կարմիր մինչ շողան ,
 Յայն երբ աչկունքս ողջունեսցեն զԱրեւելեան
 տեսարան .

Օ
 Իցիւ յայնժամ և դուք 'ի նուազ գեղաւոր ,
 Ողջունէիք ըզժամանակս ալեւոր :

ՅՈՅՄՆ

Ա. Ժամանակն

Խուն ինչ այլ եւս մնասջիր արթուն . . .
 Ես աջակից յաւէրժ անքուն պսակեմ 'ի գլուխս .

Ի փունջ վարդից քաղցրաբոյր ,

Թմբիր յաչացդ այն ինչ անհետ , զՅոյս ընդ-
 սոցին 'ի համբոյր ,
 Գեղածիժաղ տեսցես հաշտ ,
 Քրնարանիդ քո 'ի դաշտ :

ԱՌ ԽՄԲԵԱԿՆ

Օ'ն երգեցէք ձայնիւ հեշտ ,
 Զալեւորին հրաժեշտ :

ԽՄԲԵԱԿՆ

Մինչ մահաստուեր որոյ թեւովք սեւա-
 թոյր ,
 Ժամանակին աչկունք ծածկի'նդ վարա-
 Գոյր .

Երբեմն զուարթ ,
 Վեհ ակնարկինք՝ ողջ 'ի սեւա .
 Յայտնեն մեղ արդ ,
 Ըզտխրալին « մնայք բարեաւ » :

ԱՌ ՅՈՅՍՆ

Օրհնեալ ես Յոյս ջահեալ յերկնից ,
 Որ ըսփոփես զսիրտ արտմալից .
 Եւ զտխրանաց խաւար անլոյս ,
 Փոխես խնդից 'ի յարշալոյս :

Դու հրաժեշտիս 'ի տխուր ժամէն ,
 Մեզ խոստանաս ըզդարձ անդրէն .
 Զուարթ աւուրց յորս քեւ ցնծան ,
 Իբրունք Յարկիս ասպնջական :

Ի Յոյսդ անլըթար ,
 Ժպտեոցուք մեք յար .
 Զի ուխտեմք մընալ ,
 Ի գիրկդ հիւրընկալ :

Քեւ առցուք խրախոյս ,
 Քեւ մեք ջահալոյս .
 Քեւ առցուք խրախոյս ,
 Ո՛վ քաղցրիկ մեր Յոյս .

Ե. Մ. ՄԵԼԻՔԵԱՆ

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

ՏՐԴԱՏԱՅ

ՅԵՏ ԲՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՍԱՍԱՆԵԱՆ

Յազատն 'ի վեր 'ի Մասիս ,
 Արեք որդիք Հայկեան .
 Տրուեալք 'ի մի խումբ պարու ,
 Քառից հողմոց փող ազդու՝
 Յաստուածախրախոյս ձայն :

Նախնի կամար բազմերփեան ,
 Ահա պատի զնովալ՝
 Ամպրոպայոյդ մըրըրկաց ,
 Հաշտարան պատերազմաց .

Տաքփալին ցոլացաւ :

Չայն որոտաց ձայն ահեղ ,
 Խորանածեւ յարկէն .

Արիագունդ տուն Հայկայ,
 Զտապալեալ գահիդ արքայ.
 Վերականգնեմ անդրէն :

Երդուեալ յաղեղն երկնածիր,
 Բարձի զբաղդ ձեր 'ի միտս.
 Թաթ ձեր յեթեր նըլացաւ,
 Հակառակորդըն սուղաւ.
 Վայր սանդարամետս :

Դիւցազանց պար թորգոմեան,
 Տըխրագգեաց յե'ղիսեանս.
 Ըզըրթագոյն դիմաց մէդ,
 Յաստեղաց բոց վառին շէկ.
 Յաւետեաց հրաւիրանս :

Արդ իմ արի սպառազէնք,
 Տուք կայթս հսկայաքայլ.
 Դաշտք 'ի պըղինձ բոցասցին,
 Լերինք 'ի նշոյլ շլասցին.
 Զոկատիցդ 'ի զեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնաճեմ,
 Հայր ձերում բանակի.
 Ասպարափակ հովանեաւ,
 Զձեօք 'ի բարձանց փարեցաւ.
 Անթափանց նիզակի :

Խումբ պար առեալ զարքայիւ,
 Զօրավարք Արամայ.
 Բողորեցէք համերամ,
 Պսակ փառաց անթառամ.
 Կեցցէ Տըդատ մեր արքայ :

1818/2

Բ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Է Ն Ք

ԿԱՄ

ՃԵՄԱՐՏԱՆՄԱՆ ՊՏՈՒՂ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ

Յաւուր միում մէկ քարահատ,
 Գնաց գործիքով յանապատ.
 Որոնելով՝ գտաւ մէկ քար,
 Որ վասն արձանի էր յարմար :

Սկիզբն արար նրան տաշել,
 Այս կողմից միւս կողմ քաշքաշել.
 Երբ որ քարըն յոյժ նեղացաւ,
 Կամաւ Տէրին լեղու ստացաւ :

Ասաց քարհատին, ո՛վ տգէտ,
 Ի զուր են քեզ կոչում վարպետ.
 Ընդէր ես չարչարում դու զիս,
 Ինձանից ի՛նչ շինել կուզիս :

Քարհատն տուաւ պատասխան ,
 Թէ՛ որքան որ արարածք կան .
 Ամենեքեան են պարտաւոր ,
 Լինիլ աշխարհին հարկաւոր :

Իսկ դու անկեալ ես աստ անշահ ,
 Իբրեւ յամառեցեալ ագահ .
 Աստուած ոչ ստեղծ անշահ բան ,
 Որ յաւերժ անպիտան մնան :

Վասն որոյ՝ երբ որ քեզ տեսայ ,
 Ինքքս ինձ խորհիլ սկսայ .
 Որ քեզնից մէկ արձան շինեմ ,
 Քաղաքի հրատարակն դնեմ :

Յայնժամ քարի պէս անլեզուն ,
 Իբրեւ լուսաւորեալ գիտուն .
 Ասաց . յիմար , դնա՛ բանիդ ,
 Զուր նեղութիւն մի՛ տար ջանիդ :

Առաջ քեզ շինի պիտանի ,
 Դու ես գլուխ անպիտանի .
 Քանզի արարածք ամենայն ,
 Իրանց նախկին դրութեան կան :

Միայն մարդըն իւր չարութեամբ ,
 Իսկն ասեմ , յոյժ տգիտութեամբ .

Յաւետ խոտորնակ հակելով ,
 Բնական օրէնքըն քակելով :

Ստեղծողըն ստրջացոյց ,
 Իւր երկար կեանքը կարճեցոյց .
 Նախ կապրէին ամբս հազար ,
 Այժմ՛ հարիւր ամ էլ դժուար :

Թէ՛ մարդն կեանք ունիլ կարէ ,
 Վասն զի միտքըն տկար է .
 Քարահատն՝ երբ այս լսեց ,
 Քարին աղաչել սկսեց :

Թէ՛ արի , ինձի ողորմիր ,
 Ասածներիդ միտքը պատմիր .
 Մի՛թէ մեր կենաց կարճութեան ,
 Պատճառն է օրէնքն բնական :

Այո՛ , պատասխան ետ քարն ,
 Մարդից խելօք է տալարն .
 Կամ իւրաքանչիւր անբանն ,
 Թուչունն՝ ձուկն՝ դազանն :

Տարին մէկ ընդ իգականի ,
 Պտղաբերութեան սէր կանի .
 Իսկ դուք դարձուցիք զայն՝ ի խաղ ,
 Թէ՛ ծեր և թէ՛ տղայ մատաղ :

Գիշեր՝ ցերեկ միշտ անդադար ,
 Նրանով էք անում մադար .
 Ընքան ճնշվում էք՝ թալկանում ,
 Մինչ ձեր նիւթըն շուր է դառնում :

Մին պտուղ որ ջրից լինի ,
 Նորա կեանքըն ի՛նչ կու լինի .
 Տասն , քսան կամ երեսուն ,
 Բառասուն , յիսուն կամ վաթսուն :

Ահա տեսեր , որ ազգ մարդկան ,
 է անբանից գլուխ անբան .
 Իսկ դու կամիս զիս տաշելով ,
 Յայսկոյս յայնկոյս քաշքաշելով :

Կանդնել հրապարակի մեծ արձան ,
 Որ ինքդ ես կօճղ անպիտան .
 Լաւ նայիր սերմանահանին ,
 Տես՝ ո՞րքան զգաստ է բանին :

Որ միշտ ցորենի լաւերն ,
 Կընարէ , ո՛չ թէ որդնակերն .
 Վասն զի սերմըն որդնակեր ,
 Ո՛չ կարէ լինիլ պտղաբեր :

Մոյնպէս թուլացեալ նիւթ մարդկան ,
 Պտուղ կուտայ նուաղական .

Չի լրացած հարիւր տարին ,
 Կը մնայ կենաց ճանապարհին :

Թէ կատարէք կարգն բնական ,
 Կապրէք որպէս Մաթուսաղան .
 Սէյեանդ ՚ի զուր մի բարբանջել ,
 Մարդից ի՛նչ կամիս պահանջել :

1857 մայիս 28 . Ի վայոց Ձորն Հայոց :

ՊԱՆԴՈՒԻՅՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Մուտեալ կենաց իբրեւ յոյս ,
 Մութ և տխուր ես ո՛ կոյս .
 Ել ել լուսին , ո՛հ և դուն ,
 Սիրտ մի ունիս զգայուն .
 Ազգ մի թշուառ Հայրենիք ,
 Որ քող առեր ես զամպիկ :

Բնութիւն գեղոյդ երաժիշտ ,
 Քեզ աստեղաց հոյք նաժիշտ .
 Ի՛անհուն սիրուն ժըպիտ մի ,
 Կարգեց դշխոյ դքեղ երկնի .
 Յօղէ նշոյլդ տխրանոյշ ,
 Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ :

Ո՛հ փշրեցան սիրտս ու քնար ,
 Ես ալ քեզի պէս զաշխարհ .
 Պանդուխտ քայլով չափեցի ,
 Ծաղկունք ծըլին սոսկ քեզի .
 Չեկաւ զեփիւռ մ'անուշիկ ,
 Շահեւ իմ դէմքս յուսալիք :

Հող մ'ունէի Հայրենի ,
 Դըրախտ չքեղ աշխարհի .
 Աւերակացն արդ պահպան ,
 Քիւրտն և անոր հրայցանն .
 Յուցուր ժանտից , ս լուսին ,
 Չազիր ոսկերք վասակին :

Ազդ մ'ունէի այն Հայն էր ,
 Որ երկրիս վրայ տարուբեր .
 Կ'երթար օտար ազգերէն ,
 Մուրալ լեզու և օրէն .
 Լուսին , ցուցուր Դու Հայուն ,
 Փառքն իւր նախնեաց շիրմերուն :

Սիրտ մ'ունէի , ան կոյսն էր ,
 Որ իմ հոգիս էր գրաւեր .
 Ծաղկէ հասակ ծաղկի դէմք ,
 Հուր աչքն առին շիրմաց վէմք .
 Մեր պանդուխտն ալ , լուսին ,
 Դու այցելու ել շիրմին :

Ս. ԿԻՐՄԵԱՆ

ԱՔԼՈՐՆ ԾՆԱԻ ԶԱՔԼՈՐ

Ի հանդէպ «Ա՛խ , Յովհաննէս վարդապետ .
 Ի՞նչ անեմ ձեր աքլորին» յԱշըգ Շիրինէ ասացելոյն

Նստիր , Շիրին , ասեմ քեզ . մէկ օր մեր տան
 թարքումը ,
 Մէկ այսմաւուրք ճարեցի հին գրքերի կար-
 դումը .
 Էս պատմութիւնս կարդացի աքլորների վար-
 քումը ,
 Ծափ զարկի ծիծաղեցայ զարմանք մնացի աք-
 լորին :

Բայց ինձ հաւատա՛ Շիրին , բովանդակ մէջ աշ-
 խարհին (1) ,
 Բայց յԱստուծոյ՝ մարդ չ'իտէ աքլորիս ծնած
 տարին (2) .

Աղամ երբ որ ստեղծաւ , սա տանուհինգ
 տարուան էր .
 Եղըն երբ տապան մտաւ , սա փղից մեծ հայ-
 վան էր :

Աշտարակի շինութեանն հազար սա նարդի-
 ւան էր ,

(1) և (2) Ամենայն տողին վերջումն կրկնեա զայսօրիկ տողս :

Մովսէս գրեց , հաստատեց թիւ ու տարի աք-
լորին :
Յիսուսն տարին մէկ անգամ նստած տեղեն կը
խաղար ,
Կուկլուկուկու կանչած ատեն երկինք՝ գետին
կը դողար :

Ովկիանոս ծովի մէջ ծընկներէն ցած կ'լողար
Ահագին էր տեսութիւնն զարհուրելի աքլորին :

Տեսքըն սիրուն , գեղեցիկ , ոսկեթել զուսմա-
շի պէս ,
Փառք ու պատիւն աւելի Մըսըր նստած փա-
շի պէս ,

Պոչումը կ'ար գերաններ՝ Սողանյուոյ մէջի պէս ,
Քոլոր գաղանք՝ անասունք էին գերի աքլորին :

Աւուր մէկը չափեցի կանգնած տեղէն գար
'ի վար ,
Ոտէն մինչեւ կաուցը երեք վերստէն աւել էր .
Գրճէճ ըրած ատենը , սարեր՝ ձորեր կ'աւերէր ,
Խելք չէր հասնիր հաստափոր՝ խոր ծերունի
աքլորին :

Աքլորիս գլխի վրայ քիրաճ ու քար հանեցին ,
Տասն տարի բանեցան՝ հազիւ մէկ բերդ շինե-
ցին :

Կակարթի քեարթերումն մեծկակ թօփեր հա-
նեցին ,
Վայ կուգար էն բերդին որ չէր խոնարհիլ աք-
լորին :

Փորումը՝ թէլցու էին , մեծ քեարվանն էր
Խանի պէս ,
Կիսէն շատը մուսկէր խարաբա վրանի պէս ,
Ոտների հաստութիւնն էր ձիթհանքի գերանի
պէս .

Ամեն բանն էր կարգէ դուքս այս անճոռնի
աքլորին :

Աշխարհս երբ որ բաժանեց մեծ թագաւորն
Վաղարշ ,

Աքլորս ոտով գլխով վանքին ելաւ բաժին մաս .
Էջմիածնայ ամբարից , Աստուծոյ օր , ճաչէ ճաչ ,
Կուտ կուտային ութ սօմար խաչած գարի աք-
լորին :

Երբ որ ինձ նոր վարդապետ , տարան , ձեռ-
նադրեցին ,

Դիր՝ կտակով միաբանք աքլորս ինձ յանձնեցին .
Երբ Մկրտիչ վարդապետը Տնտեսապետ կար-
գեցին ,

Շատ ժլատ էր , վայ եկաւ ծեր խղճալի աք-
լորին :

Աբլորս այսպէս քշակեր քանի մ' տարի ապ-
րեցաւ ,
Ամսէն աւել թեւ կախած՝ կուտ ու ջրէն կըտ-
րեցաւ .
Յանկարծ այս առաւօտուս չուստեցաւ՝ սատ-
կեցաւ ,
Քիչ մնաց՝ որ ասէի , Տէրն ողորմի աքլորին :

Շուտով մեր սպասաւորք հարիւր մշակ բռ-
նեցին ,
Ամենքն առան մէկ մէկ ութ փըթանոց սուր
կացին .
Մինչեւ հիմա հազիւ թէ յստակեցին՝ ջարդե-
ցին ,
կշռեցին , հազար փութ եկաւ կաշին աքլորին :

Բժիշկներն ինձ ասացին՝ աքլորէն ո՛վ որ ուտէ ,
համ ծերութեան , համ ցաւի ամեն կերպով
օգուտ է .

Միտք արի յիմարի պէս , թէ չ'առնեմ ինձ ա-
մթ է ,
Կանչեցի միաբանից անփորձ ճաշի աքլորին :

Առաւօտէն մէկ մշակ ձեռքը սուր սաթը մը
առաւ ,
Աքլորէս մէկ հոխա միս ծեծելով՝ հոգին ելաւ :

Պէտք էր՝ որ քոֆլթա լինէր , վերջը չոր կաշի
գաւառ ,
Բարկութենէս քիչ մնաց՝ որ թքէի աքլորին :

Վանքի աչուն ասացի . եահնուցը լաւ միս
հանէ ,
Սոաց . է՛ն լաւ կտորը խիստ թթուած ու
տտհամ է .

Էս էլ կացին չի կտրէ , ահուայ երբ կարնայ ծամէ ,
Վախտին ուրիշ միս ճարէ , յոյս մի անիր աք-
լորին :

Յոյսս կտրած աքլորից՝ ոչխար ու գառ մոր-
թեցի ,
Բովանդակ միաբանից ճաշ տուեցի , ճամբեցի .
Դարձայ՝ տխուր նստեցայ , շատ բարակ մտա-
ծեցի ,
Թէ արշխարհումս կայ արդեօք մարդ արժանի
աքլորին :

Միտքըս ընկաւ , որ ես քեզ գառ խոստացեր
եմ , Շիրին ,
Արի , գառի փոխարէն հաճոյ եղիր աքլորին .
կաշի տուր գաբբաղներին , պօլոճիկն աթտարին ,
Միսը ծախէ սապօնչոց , հախէն արի աքլորին :



Նուրու ֆերրի միհրումահըն ,
 Բույի մալի խաքի բահըն .
 Է՛յ Շահինշահի քերեմքեար ,
 Սատելէթ տիր պարի կեահըն :

Օլտու կեօնիւլէր քիւչատէ ,
 Խալքի ալէմ հէփ սէֆատէ .
 Ձէյպ ու զիյնէթին կէօրիւրլէր ,
 Սայէյի պէհճէտ ֆէզատէ :

Բաքս իտէր կէօքտէ մէլէքլէր ,
 Միւսթէճապ օլտու տիլէքլէր .
 Իչպու տէվրի նէվլուհուրի ,
 Կէօրմէմիշ չէշի ֆէլէքլէր :

Է՛յ շէհի սահիպ աթայա ,
 Մաղհէրի թէվֆիքի ալեա .
 Իտէր պիր լուղըն հէզար սալ ,
 Եուննիլէ հաղրէթի Մէվլա :

ՆԱԳԱՐԱԹ

Պուլտու տէվրի էմնիւ էման ,
 Սայէյի լու թֆուն՝ լա ճիհան :

ՅՈՐԴՈՐԱԿ

Է՛յ Խիւտալէնտի ճիհան ,
 Վէյ շէհին շահի զէման .

Էրմէնիյան Միլլէթի ,
 Լու թֆուն իլէ շատիւման :

Նաղմէյայի խօշ նէվա ,
 Հէմչիւ պիւլպիւլ տէր հավա .
 Փիւր թէրէննիւմ իլլէմէք ,
 Արըզու էթտիք Շահա :

Ճանի ալէմնին , սանա
 ճանըմըղ օլտուն ֆէտա .
 Հիւսնիւ էնզարըն պիղէ ,
 Քիմիայի պի պէհա :

ՅՈՐԴԱՆ Է. Դ.

ԵՐԿԵՆ Ա. Յ.



ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

X

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Բ Ո Ի Թ Ե Ա Ն

1862 ՄԱՅԻՍ 24

Ողջոյն քեզ ո՛ր դաշտ և սիրուն ավունք ,
 Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք .
 Հարց Հայաստանեայց սրբազան աճիւնք ,
 Թո՛ղ ցնձան Հայոց ՚ի սուրբ միութիւն :

Հէգ Հայաստանի եմք մեք զաւակներ ,
 Հայեր զձեզ հոս հոս կոչողն է սէր .
 Եւ հայրենիք սուրբ հայրենիք :

Հրեշտակն Հայկազանց ,
 Հոս կը սաւառնի .
 Յառաջ , պսակաց ,
 Ճակատք արժանի :

Սահմանադրութիւն ,
 Սահմանադրութիւն .
 Յորչափ մնայ երկիրս և դու ,
 Կեցցեն :

Առ հայրենեաց սէր ,
 Որդիք անձնանուէր .
 Ի շինութիւն տանն Հայկազանց ,
 Կեցցեն :

Ոգին միութեան
 Որ զմեզ միաբան
 Հոս գումարեց սիրոյ հանդէս ,
 Կեցցէ :

ՆԵԱՆ ԶՈՂՄԱՊԵԱՆ

Ի ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐԶ

ՍԶԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ոչ զուարթ գարուն , ո՛չ օր մի սիրուն ,
 Եկաւ ու պարզեց մեզ այդն Հայութեան :
 Որ գեղաժիծազ ժպտէր խնդադոյն ,
 Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան .
 Որ առաւօտեց Հայոց սրտերուն
 Սէր և միութիւն :

Ոչ Արարատայ աւերակներէն ,
 Սիրավառ արեւ ծագեց կենսական .
 Ոչ Մասիս հնցած ձերուկ ծոցերէն ,
 Քան զանբիծ արեւ Սահմանադրութեան .
 Որ ելաւ ծագեց Հայոց սրտերուն
 Սէր և Միութիւն :

Յայն արիւնաներկ վայրերն ուր մէկիկ ,
 Մէկիկ անկան փառօք Հայոց Աղգութեան :
 Ոչ շնչեաց հովիկ մի սրտազովիկ ,
 Քան զանոյշ զեփիւռ Սահմանադրութեան .
 Որ հեշտիկ փչեց Հայոց սրտերուն
 Սէր և Միութիւն :

Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ,
 Որ 'ի սրգապատ հովիտն Աթինեան.
 Ո՛չ երգեաց բնաւ թռչնիկ մի զուարթ,
 Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան՝
 Որ իջաւ երգեց Հայոց սրտերուն
 Սէր և Միութիւն:

Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն,
 Չ'իջան առուակներ արծաթանման.
 Ո՛չ վճիռ գետեր հեզիկ խոխոջնէն,
 Քան զովուկ նեկտար Սահմանադրութեան.
 Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն
 Սէր և միութիւն:

Գարուն է եկեր Հայութեան 'ի գաշտ,
 Մլեր ու ծաղիկեր Սէրն ու Միութիւն.
 Ում Աստուած վերէն ժպտելով 'ի հաշտ,
 Տուաւ պարգեւեց Սահմանադրութիւն.
 Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն
 Կեանք ու զօրութիւն:

Գ. Վ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

ՊԱՐԵՐԳ

Ո՛հ ի՛նչ անուշ ի՛նչ գեղեցիկ,
 Մեր Հայրենեաց զեփիւռիկ.
 Ենչէ զուարթ մեր սրտերուն,

Տալով աշխոյժ զօրութիւն.
 Առ ինքն կոչէ զմեզ Հայեր,
 Գգուել յիւր ծոց ծնելասէր.
 Պար խմբելով երթանք լեռ ձոր,
 Համբոյր սիրոյ տալ մեր մօր:

Հոն պարզ վճիռ և գեղեցիկ,
 Մեր Հայրենեացըն աստղիկ.
 Հորիզոնէն արդ բարձրացած,
 Կուտայ Հայոցըս յոյս փառաց:
 Անոր ուղղենք արդ մեր աչեր,
 Անոր վարուինք ո՞վ Հայեր:
 Պար խմբելով երթանք լեռ ձոր,
 Համբոյր սիրոյ տալ մեր մօր:

Ս. Պ. Պ. ՓԱՌՆԱՍԵԱՆ

ԳԱՐՈՒՆ


Ո՛հ ի՛նչ անուշ և ի՛նչպէս զով,
 Առաւօտուց փչես հովիկ,
 Ծաղկանց վրայ գուրգուրալով.
 Եւ մաղերուն կուսին փափկիկ,
 Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
 Գնա՛ անցիր սրահս 'ի բաց:

Ո՛հ, ինչ աղու և սրտագին,
 Ծառոց մէջէն երգես թռչնիկ .
 Սիրոյ ժամերն 'ի յանտառին,
 Ըզմայրեցան 'ի քո ձայնիկ .
 Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
 Գնա՛ թռի՛ր սրտէս 'ի բաց :

Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես վտակ,
 Ականակիտ և հանդարտիկ .
 Քու հայերւոյդ մէջ անապակ չ
 Նային զիրենք վարդն ու աղջիկ .
 Բայց չես վտակ իմ հայրենեաց,
 Գնա՛, հոսէ սրտէս 'ի բաց :

Թեպէտ թռչնիկ և հովն Հայոց ✕
 Աւերակաց թռչին վերայ .
 Թեպէտ պղտոր վտակն Հայոց ✕
 Նոճիներու մէջ կը սողայ .
 Նոքա՛ հառա՛չք են Հայրենեաց,
 Նոքա չերթա՛ն սրտէս 'ի բաց :

Մ. ՊԵՇԿԵՐԱՇԵԱՆ



ԵՐԳ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջո՛յն ընդ քեզ Հայաստան,
 Մեր դիւցազանց գերեզման .
 Ողջո՛յն Հայոց թագուհի,
 Պսակեալ փառօք հայրենի :

Երկինք խրկէ ֆեզ հրեշտակ,
 Բիւր վարդք ծըլին ոտքին տակ .
 Իւր մէկ նայուածքն երկնադեղ,
 Քու արտասուացդ ըլլան դեղ :

Ո՛հ ինչ անուշ նրագներ,
 Պիտի հնչեն սոխակներդ .
 Երբ քու ճակատըդ պսակէ,
 Ծաղկէտնեան դափնիէ :

Մանուկն յորոց կը խայտայ,
 Եւ ծերունոյն սիրտ ջնծայ .
 Երբոր նշոյլք կը ժպտին,
 Հայ աստեղաց նորածին :

Ո՛հ շիրմացդ քով ա՛լ հանդէլի,
 Անմահութեան վեհ ոգի .
 Մինչ զուարթունք 'ի բարձանց,
 Պսակս սփռեն Հայկազանց :

Փափուկ մատունքդ թող դրոշմեն ,
 Այն տառերով ոսկեղէն .
 Մեր սրտին մէջ « սէր և լոյս » ,
 Մեր հոգւոյն մէջ « կեանք և յոյս » :

Քու վրջտերուդ փոխանակ ,
 Երկինք կանգնեց յաղթանակ .
 Քու վէրքերուդ ալ դարման ,
 Քեզի Օրէնք չնորհեցան :

Ա. Յ. ԱՅՂԱՉԵԱՆ

ԱՂԱՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ քաջազունք , ձեզ հրաւեր ,
 Փութալ առնուլ զմերկ սուսեր .
 Եւ հաստատել մեր Հայրենեաց ,
 Գահ սրբազան միշտ անմոռաց :

Ազատութիւն մեր Հայրենեաց ,
 Ազատութիւն մեր խեղճ եղբարց .
 Ազատութիւն Ձեզ , վառ սրտեր ,
 Ազատութիւն դեռ չէ՞ք լսեր :

Երկին , Աստուած տան հրաման ,
 Ա՛հ , հրաման ազատութեան .

Շուտ սթափինք , զինուոր դրուինք ;
 Եւ անվեհեր պատերազմինք :

Լեռներ , ձորեր , Մասիս անգամ ,
 Ազատութեան կուտան պատգամ ,
 Հապա երթանք 'ի Հայաստան ,
 Քաջ նախահարց հանգստարան :

Բաւ է այսչափ , ցած գերութիւն ,
 Օ՛ն , ո՛վ քաջեր , 'ի յաղթութիւն .
 Երկինք , Աստուած մեզ են պաշտպան ,
 Ազատ , ազատ , մեր Հայաստան :

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԵՍԵԱՆ

ՄԱՐԾ ՀԱՅԿԱԿԱՆ

Յառա՛ջ , յառա՛ջ . — Ո՛վ հայկազունք ,
 Յառա՛ջ յառա՛ջ . — Ո՛վ քաջազունք :
 Օ՛ն , դիմենք շուտ — 'ի Հայրենիս ,
 Եւ գունդագունդ — Ընենք գերիս :
 Հայկեան դիժն — Առած վահան ,
 Եւ կրօնքն — Նաեւ պաշտպան :

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԵՍԵԱՆ

Մ Ո Ւ Ս Ա Յ Ն

Ո՞ սգատերեւ յեցեալ նոճոյս 'ի ստորոտ ,
 Զաղիս Հայոց լարեալ 'ի քնար տխրանուէր .
 Աջն իմ 'ի լար , աչկունքս 'ի վեր մերթ յարօտ ,
 Յե՞րբ հնչեցից 'ի վանդ ողբոցն իմ զայեր :

Ո՞հ ժպտեսցի՛ն աչկունք բաղդին յիս արդեօք ,
 Թէ որպէս ցարդ՝ նոյն և յապայն անողոք .
 Ե՞րբ ծագեսցէ երջանկութեան քաղցր արեգ ,
 Եւ փոխեսցի տխրանըւագ ողբս յօրհներգ :


Է՞ր ոչ , լուսնեակդ , վառ 'ի վառ ,
 Կիսով յամպոց դողացեալ .
 Եւ զերթ կանթեղ իւղասպառ ,
 Մերձ 'ի խաւար դող շիջեալ :

Ո՞հ միայնիկ և մնչիկ ,
 Ողբամ՝ ըղբաղդ խաբուսիկ .
 Եւ թէ լրուէ իմ հագագ ,
 Լսեմ՝ ձայնիս զարձագա՛նդ :

Հեճէ սրտիս իմ խոռոչ ,
 Մատունքս 'ի լար հըպին ոչ .
 Այլ զի՛ տեսիլ անսովոր . . .
 (առանց եղանակի)
 Մինչ կամ աստէն մենաւոր :

Աչկո՞ւնքս արդեօք զիս խաբեն ,
 Այլ ո՛չ , դոքա հրեշտակք են .
 — Ողջոյն երկնից զոյգ տատրակք ,
 — Ողջո՛յն կրկին աղաւնեակք
 Սէ՛ր եւ ԳՈՒԹ :
 — Ողջո՛յն , հրեշտակդ ողբերգակ ,
 — Ահա՛ դու չես միայնակ :

Մի արդ խոովիր , չեմք խաբուսիկ երեւոյթ ,
 Նա քեզ ծանօթ . Սէր իմ անուն , իսկ սա Գուժ .
 Կաց դու պահ մի , արխուր ողբոյ տու՛ր աւարտ ,
 Լուր զոր երգեն զաւակք երկրին , ուր կաս արգ :



Ա Ռ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1. Ո՞վ մեծասքանչ դու լեզու ,
 Ո՞վ հեշտ բարբառ մայրական .
 Փափկահնչիւն բառերուդ ,
 Նման արդեօք այլ տեղ կա՞ն .
 Դու նախ ինձ հնչեցիր ,
 Նախ սիրոյ , ս՛հ , հեշտ խօսքեր .
 Այն նախ զքեզ թո՛թովելս ,
 Դեռ իմ մտքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեանց անսասան , կեաց յաւէտ .
 Կեանց միշտ լեզուդ հայկարժան ,
 Կեանց ծաղկալից ծաղկաւէտ :

2. Ի՞նչ դառն վիշտ է սրտիս ,
 Երբ օտար տեղ ու լեզու .
 Բռնի իրեն զիս քաշէ ,
 Սրտէս արիւն կը հեզու .
 Ո՞հ զայն օտարն ես սիրել ,
 Բնաւ չեմ կարող 'ի սրտէ .
 Չէ այն չէ քաղցր իմ լեզու ,
 Որ սիրով զիս կ'ողջունէ :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեանց անսասան , կեաց յաւէտ .
 Կեանց միշտ լեզուդ հայկարժան ,
 Կեանց ծաղկալից ծաղկաւէտ :

3. Լեզու համակ սիրաչարժ ,
 Քանի ճոխկպերճ ու պայծառ .
 Մինչ կը հնչես դուն քեզի ,
 Սրտերն ամեն գողացար .
 Հնչէ հնչէ յաւիտեան ,
 Վեհ՝ դիւցազանց պերճ երգ դու ,
 Թոթուէ փոշիդ խոր մութէն ,
 Եւ երեւան պերճ երգ դու :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեանց անսասան , կեաց յաւէտ .
 Կեանց միշտ լեզուդ հայկարժան ,
 Կեանց ծաղկալից ծաղկաւէտ :

4. Յաւերժական Սուրբ Կրոց մէջ ,
 Կեաց միշտ նորէն ու նորէն .
 Կշռեալ անոյշ քու տողերդ ,
 Թող ամեն սիրտ արծարծեն ,
 Շնորհ ունել Արարչէն ,
 Կամ պէտք ըլլայ աղօթել ,
 Շրթունքս սրտէ բորբուքած ,
 Կաղաղակէ անարգել :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեանց անսասան , կեաց յաւէտ .
 Կեանց միշտ լեզուդ հայկարժան ,
 Կեանց ծաղկալից ծաղկաւէտ :

Ի Վ Ա Հ Ա Ն

Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ե Ա Ն

Որդիք Հայկայ , որդիք փառաց ,
 Զարթիք կռէ ըզճեղ Աստուած :

Տեսէք Մասեաց 'ի գլուխ ազատ ,
 Ըզբազր Հայոց նորահրատ .
 Աչք ձեր 'ի գոյն լուսասցին բոց :

Սիրտք վառեացին սիրտք Հայոց ,
 Եւ մխեացին կուռ բազուկք .
 Քան 'ի հնոց գեղարդունք ,
 Յազատութեան ասպարէզ .
 Թափել շանթիս աստեղծութ :

Օ՛ն փողեցէք . ելէք 'ի գորդ ,
 Աստուած է ձեր առաջնորդ .
 Լուսոյք , փառք ձեզ կարդան հրաւերք ,
 Տեսէք անդուստ հարց ստուերք .
 Անվրէժք առ ձեզ կարկառեն ձեռս :

Որդիք , խո՛ւլ հարցդ էք յաղերս ,
 Արիք ընդ ձեզ դաշնաւոր .
 Արդարութիւնն է հրօր ,
 Եւ զլայնալինն առեալ Հայկ .
 Էջ քաջորդւոցն 'ի բանակ :

Օ՛ն . . . ոյք 'ի Հայս մըտին զերդ Բել՝
 Ուսան սա վայր է անել .
 Ըզսուր մահու ած շուրջ պահպան ,
 Տէր յեղեմեանն Հայաստան .

Ատէ . Ո զտոյն կոխէ սահմանս ,
 Մի՛ ողջ դարձցի յիւրն 'ի վանս .
 Որ վանն Հայոց ած երկաթ՝ .
 Ինք պնդեացի յայն կաշկանդ .
 Եւ զոր կոխել գայր անահ ,
 Համբուրեացէ թոպամահ .
 Արիք իմ քաջք , որդիք Հայկայ ,
 Վրիժուց ձեր օր հասեալ կայ .
 Երկինք զինեալ են՝ դատել հուրք ,
 Պրղծողն ըզձեր երկիր սուրք .
 Թէ զձեր խնդրեն արդ տէգ , աղեղ :

Տուք , թափեցէք կարկտի տեղ ,
 Յասումն արդար է ձեր Հայք .
 Անցեալ դոչէ , Մի՛ դըլայք ,
 Ազատութեան օր սա ձեր .
 Նոցա՝ անտիւն հաս գիշեր :

Արիք , ծաւալ տուք բարձր յայեր ,
 Քրիստոսապսակ ըզդրօջ ձեր .
 Չէնք ուր փրկչին նշան կայ կուռ՝
 Միեւս անկցի կոր յաթուր .
 Օ՛ն զաջդ 'ի վեր ձրգէք յերկին՝

Երդումին տուք ահագին ,
 Մի՛ ձեռքդ իջցեն՝ մի սուսեր .

Դարձցի հանդչել 'ի յաղդեր ,
Յորչափ գեռ շիթ մի վերջին ,
Մընայ յերակս ոսոխին :

Հնապա իմ քաջք , օն անդր յառաջ ,
Ձեզ հովանի կայ սուրբ խաչ .
Բըթեացին յայն տեգք և վըքքին ,
Չոր լարեսցէ թըշնամին .
Վնչ , ոյց հասին փառք 'ի վըսեմ :

Թըռչիլ գահէդ յերկնից սեմ ,
Ահեակ ոտամբ գլուխս ոսոխս .
Թոպել գլորել 'ի դըժոխս ,
Մուծանել զաջն յերկնից սահման .
Ազատ թողեալ ըզհայաստան :

ԽՈՐԷՆ ՎԱՐԴՈՅՏ

Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն

Չէն օրերս մեզ օր խնդութեան ,
Օն եկէք մեք միաբան ,
Երբ արդէն եմք բաղմամ սեղան ,
Երգենք զարնենք նուագարան :

Կաղմենք երգոց ժողով սիրուն ,
Նուագենք գինիս այս պաղպաղուն :

Տես սիրուն սա փրփուր ,
Ընկեր դուն ալ լեցուր :

Ա՛ռ , բարձրացուր գինոյդ բաժակ ,
Ահա իմն ալ բարեկամ .
Չարնենք բաժակ տանք երկար կեանք ,
Սեղանակցացս հաղար ամ :

Չուարթութիւն սա կը բերէ ,
Գինիս տըխրած ոգիներէ .
Մարդիկ կընէ զուարթ ,
Աղէ ընկեր խմէ արդ :

Տեսա՛ր ուրեմն , խնտումբես ,
Թախձութենէդ ելար արդ .
Գինիս կելլէ ուր ասպարէզ ,
Խըրախութեանց կըլլայ զարդ :

Հնապա մանուկ լեցուր նորէն ,
Սեղանակցացս համօրէն .
Արդ վայել է խնդալ ,
Ընկեր պարպէ մէյ մ'ալ :

Տ Ա Ճ Կ Ե Ր Է Ն

Պիր թագըմ սատէ եիւրէք մուստուն փաքի
սիւպեան ,
Տէր ինամընէ կէլտին տէյէրէք եւս Ռահման .
Օլտու ապի իլէ ալէմ հէմէ Միլլէթ սէրպէսթ ,
Պու նէ ինսաֆ վէ նէ նիյմէթ վէ նէ լութֆ ու
ինայէթ :

Կիւն կիպի սողտուղու ան հիւսնիւ միւրվէթ-
քեանըն ,
Վէրտի ֆէրմանը իլէ ճիւմէ սէղիմէ տէրման .
Էօմրիւնի շէվքէթինի պի ատէտ իլլէ եւ Ռապպ ,
Տիւնեա սուրտուգճէ , սուրա Տէվլէթի Ա-
լի-Օսման :

ՆԱԳԱՐԱԹ

Ենզտանի սիւպհան ,
Սէն իլլէ իհսան .
Եաչասըն պինլէր ,
ԱՊՏԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ :

ՅՐԻՆԱՅ Է. Գ.

ՆՐԻՆԱՅ Ա. Ե.



Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Սա տխուր վիճակ տարաբաղդ Աղգիս ,
Ինչ արիւն արցունք կը հոսեցնէ .
Նոր նոր յոյս տաճող Հայոցս աչերէ :
Սա մեր անողորմ բաղդին հարուածներ ,
Քանի սրտառուչ հառաչանքներով .
Ճմլեն Հայ սրտերն , դող տան ու երեր ,
Ո՛վ Տէր , բաւ չէի՞ն ինչ որ մինչեւ ցարդ :
Կրեցինք սուր , ցաւ , աւար ու աւար ,
Ո՛չ դու հաշտութեան ծիածան զուարթ .
Մեր սուրբ Հայրենեաց երկինք պարզեցեր ,
Եւ դեռ չնորհած զԱրեւն Հայրենի ,
Կը զրկես զմեզ Աստղէն հայրենի :
Մէկ սիրտ , մէկ ոգի , ամենքս մէկ անուն ,
Մէկ յոյս , մէկ հաւատք կըրող մէկ արիւն .
Մէկ ապագայի և ակնկալու ,
Ինչո՞ւ չմիանանք 'ի մի յօգ սիրոյ :
Մի՛ զմեզ , Տէ՛ր , մի՛ պատժեր անաչառ ,
Կեցուր քու շանթերդ բարկութեան արդար .
Չիրար սիրելու , օգնել իրարու ,
Կուխտեմք աւատիկ ուխտ սուրբ 'ի սրտէ՛ ,
Եւ խաղաղութեան թող դայ հրեշտակ ,
Միութիւն և սէր պահել 'ի սիրտ մեր :

Ս. Գ. Պ. ՓԱՅԱԶԵԱՆԵ



Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Վ Ա Մ Ն Ա Չ Գ Ի Ն

Տէր կեցո գու զհայս ,
Եւ արա զնոսա պայծառ ,
կեցո զհայս .

Զողորմութիւնդ վերին ,
Հաճեաց ձօնել նոցին .

Զի նովիմք մարդասցին ,
Ապրիլ յաստիս :

Ով տէր մեր , տէր փութա ,
Զազգ մեր համայն փրկեա ,
ի թշնամեաց .

Կափո զաչս նոցուն ,
Հատ զարմատոյ զբուն .
Եւ զազգ մեր արտասուն ,
Արա հզօր :

Աջովդ համատարած ,
Զազգ մեր արտահալած .
Փոյթ գումարեա .

յԱշխարհ արարատեան ,
ի վայր մեր ծննդեան .
Ուր այժմ է սեփական ,
Օտար ազգաց :

Ի քո իջեալ տեղի .
Զաթոռ հայրապետի ,
Մեր հաստատեա .

Զերկարութիւն կենաց ,
Հօր մեր աստուածազգեաց .
Շնորհեա պետին մեր հարց ,
Որ զմեզ հովուէ :



Ի Ղ Չ Ս Ր Տ Ի Ս

Տուք ինձ ճերմակ ճախրասրլաց ,
Օղապարիկ երկվար .
Տուք , զի սլացեալ թռեայց 'ի բաց ,
ի Չքնաղիկն իմ աշխարհ :

Այո սլացայց յիմ հայաստան ,
Յերկիր յաւերժ ծաղկազարդ .
Ուր խոխոջան անմահութեան ,
Գեաթ եղեմայ ալեզարդ :

Ուր բարձրանայ խրրոխտ 'ի վեր ,
Արարատն իմ որդրան .
Ուր հոտ բուրէ խրնկանուէր ,
Հոս զուարթարար հայութեան :

Ուր և երբեմն պայծառացեալ,
 Քաջ բանաստեղծք թորդովեան .
 Քնարօք իւրեանց ոտկելարեալ,
 Գեղգեղէին սրբաբան :

Ո՛հ, ածէք ինձ զիմն սիգաքայլ,
 Սիրտ իմ մաշեալ նուազի .
 Քանի անք են՝ զի չեմ տեսեալ,
 Ըզհայրենիս ցանկալի :

Հայաստան իմ, սուրբ Հայաստան,
 Հոգւոյս պայծառ յիշատակ .
 Է՛ր թողէր զիս ՚ի բացական,
 Վայրս դառնաշունչ, դժնդակ :

Մաշիմ մաշիմ ես աստանօր,
 Ընդ աստեղօք հիւսիսի .
 Հալիմ . . . աւանդ ես չբաւոր
 Ո՛հ, Հայրենիք քաղցրելի :

Ս. ՇԱՆՏԻՉԵԱՆՅ

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Տարի մ'ալ անցաւ,
 Գնաց սահեցաւ .
 Այլ դու Հայ զինուոր,

Թախառական մնաս .
 Յերկիր հեռաւոր,
 Սուգ անմխիթար .
 Ձքեղ շուրջ պատած,
 Եւ դժբաղդ սիրտդ ալ,
 Յուսարեկ եղած,
 Սուրդ ու քու տէգդ,
 Ժանգոտ վար դրած .
 Եւ զօրեղ արմուկդ,
 Տիգիդ յեցուցած .
 Դիր դու Հայ զինուոր,
 Քու յոյսդ առ Աստուած .
 Վեր վերցուր գլուխդ,
 Տես, ով է կանգնած .
 Առ քեզ կ'ակնարկէ,
 Աղափիչն Աստուած .
 Յաղթութեան պսակ,
 Իւր սուրբ ձեռքն բռնած .
 Առ ուրեմն նիզակդ,
 Ոտք ելիր կանգնէ .
 Եւ սրտիդ խորէն,
 Անոր փառք խրկէ .
 Վհատիր մի բնաւ,
 Քաջ զինուոր դու Հայ .
 Ձի այսուհետեւ,
 Ին Աստուած դժած,

Ընդ քեզ է յաւէտ ,
Յազգասէր միցանող .
Կուտայ քեզ պտակ ,
Բոլոր ճգանցդ փառք .
Յանկալին ազատութիւն :

Մ. Մ. Յ. ԱՆՂՐԻՊՆԱՆՆԵՑ

Ի ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ՎԵՐԱԴԱՐՁՆ

ՅԵՒՐՈՊՍՅԷ

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ

ԱՐՔԱՅԻՆ

Տանն Օսմանեան արեւ պայծառ ,
Մեր Շահնշահ Արքայն արդար .
Գայ հասանէ զուարթ զիմօք՝
Յիւրն 'ի յաթոռ բազմիլ փառօք :
Անդրէն դարձին թագաւորիս ,
Զբերկրառիթ նաւակատիս՝
Ալիք ալեաց խրախոյս կարդան ,
Մեզ աւետեն կարկաչաձայն :

ՅՈՐԴՈՐԱԿ

Գոռան թնթանօդք , փայլակին վառօդք ,
Բարախեն անիւք , կարկաչեն ալիք .
Հնչէ փող սրինդ , որոտան լերինք :

ՀԵՏԵՒԱԿ

Շէվքէթլու Սուլթան ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ խան ,
Կեցցէ 'ի դահուն փառօք մշտնջեան :

Անտառացան սուինք զորաց ,
Բանակ ստուար քաջ զինուորաց .
Աւազանին վեմափայլ՝
Յոսկեճամուկ համազգեստեալ :
Թափորակապ և խմբովին՝
Զծովեզերք դան դումարին .
Միրաք 'ի թնդոջ աչկունք 'ի ծով ,
Զոտիւք վեհիս փարեւ անձկով :

ՅՈՐԴՈՐԱԿ

Ելէք ընդ առաջ ինքնակալիս քաջ ,
Վեհք աւազորեար՝ արքունեաց կաճառ .
ՂՏէր մեր բարեփառ ածէք յիւր տաճար :

ՀԵՏԵՒԱԿ

Շէվքէթլիւ . . .

ՆՊԳՆԱՅ Մ. Յ.

ՅՈՐԴՆԱՅ Յ. Մ. Մ.



Բարձացո՛ Տէր 'ի յերկրի զփառս Օսմանեան ,
 Զօգոստափառ մեր իշխան .
 Պահեա որպէս բիր ական :

Պաշտպանեա զմեզ ընդ բազկաւ Արքայիս գը-
 թած ,

Ինքնակալ մեր վեհափառ ,
 Կեցցէ 'ի գահուն բարեփառ :

ՅՈՐԴՈՐԱԿ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ արքայ Բարեխնամ ,
 Պսակ Օսմանեան հզօր Պետութեան .
 Հատու արա Տէր՝ զսորին սուսեր ,
 Բազուկ թշնամւոյն եղիցի նկուն :

ՅՈՐԴԱՅ Յ. Մ. Մ. ԵՐԿԱՅ Ա. Յ.



Ի Ս Գ Ա Լ Ի Մ Ա Հ

ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր վա՛հ , կայ թող-
 ուած ,

Առոյգ հասակդ և սրտիդ հուր երկնապլաց .
 Չէ թէ միայն սիւսենք ծաղիկք լի ձեռքով ,
 Չէ թէ միայն արցունք անհուն ցաւերով :

Այլ և ձօնենք վշտահար ,
 Երգերն անոյշ ֆընարին .
 Որոյ փափուկ թելերը ,
 Դու հիւսեցիր սրտագին :

Այն նըրագներն որ քու բերնէդ սըլացան ,
 Երթալ յողջոյն աւերակաց ցիր և ցան .
 Լըսեց զանոնք 'ի դամբանացն Հայրենի ,
 Եւ սփոփեցաւ Հայաստանեայց վեհ Ոգի :

Լսէ զանոնք և դու ալ ,
 Մահուան քունէն արթնցիր .
 Այն քնարին թեւերով ,
 Յանմահութիւն ե՛լ թռի՛ր :

Մ. ՊԵՏԻՊՈՍԵԱՆ



Ա Ռ

ՄԷՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած ,
 Անքուն աչօք կամ ցաւած .
 Իմ սիրելւոյս կարօտցած ,
 Չկայ մէկն որ կարեկից .
 Ըլլայ ցաւած իմ սրտիս :

Ո՛վ հայրենիք իմ սիրուն ,
Ահ , սուշորէ զիս անունդ .
Արդեօք պիտի չըտեսնեմ ,
Քու լուսափայլ զուարթ դէմքդ :

Հառաչանք բիւր 'ի սրտէս ,
Արտօսը հեղում աչերէս .
Իմ սիրելոյս կարօտցած ,
Չեն ինձ երբէք մըխիթար .
Ոսկի պատիւ սէր օտար :

Այլ ես անոր սիրուն զոհ ,
Կընեմ զամենքն սրտով զոհ .
Միայն թէ յոյս մ'ունենամ ,
Իմ սէրս տեսնել միանգամ :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՉԻԱՆ

Դ Ա Շ Ն Ա Կ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՄԱՆ

ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ

ՈՐ Ի ԽԱՍԳԻՒՂ

Օ՛ն մեր նախնի դարուց կարգամբ հըրաւէր ,
Նախնի դափնեաց՝ սուրբ ձեռաց հիւս պսակօք :

Մեր հայրենի փառաց մանկունքն անվեհեր ,
Գան յերեւան գեղեցկահիւս գիսակօք :

Գունդ 'ի գունդ ,
Սիրտք 'ի թունդ :

Ժամանակաց՝ անցից՝ վսեմ կըրթարան ,
Եւ նոր դիպաց՝ նոր գեացմանց կարգադիր :
Ահա մեզ նոր՝ արդ կը կանգնի տեսարան ,
Թէ՛ կըրթութեան՝ թէ՛ հաճոյից արգադիր :

Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից ,
Հայաստանի սուրբ դաշտերուն .
Եւ կը ցրուի սրտիս թախիժ ,
Երբ հայրենեաց յիշեմք զանուն :

Ո՛վ սուրբ Հայաստան ,
Փառաց օթեւան .
Որք զաւկըներդ հոս ,
Քեզ պիտի ողբան :

Հոս երազ՝ անմահ ,
Քո նախնի փառաց .
Մեզ պիտի վառէ ,
Ի սէր հայրենեաց :

Մայրիկ Հայաստան ,
Փառաց գերեզման :

Որք որդիքդ՝ այրիդ,
Հոս պիտի ողբան:

Մէկ մայր մ'ունինք մերն Հայաստան և հողին,
Եղբայրութեան սրտերնուն մէջ կը սոնգայ.
Օ՛ն չարադէպ մեր բաղդն ու սէր կաթողին,
Հոս միութեան ուժոյն ընենք ենթակայ:

Եւ ձեռք, ջանք,
Միմեանց տանք:

Ընդհանրական սէրն և հողին հայութեան,
Մեզ մուսայից օթեւանիս նուիրի.
Հնչեն Հայ փառք՝ անուն՝ նոր՝ սուր յաւիտեան,
Նորէն Սիսակ, Գեղամ՝ի կեանս հրաւիրի:

Կը վերածնին հոս ոսկի դարք,
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ.
Կը շտկուին հոս անկիրթ բարք,
Հոս և ծիծաղ կրնայ գտուիլ:

Ով սուրբ Հայաստան,
Քաջաց օթեւան.
Հոսկէ որդիքդ հոն,
Գիրկըդ պիտի գան:

Հոս ոճ Հայ լեզուին,
Նոր զարդ՝ ձեւ կառնու:

Կեանք անմեղ ւ'երկինք,
Կազդեն սրտերու:

Քաղցրիկ Հայաստան,
Մեր հարց օթեւան.
Ծոցդ որդիքդ որ դան,
Է՛ր պիտի ողբան:



ՀՐԵՇՏԱԿ ՀԱՅՈՍԱՆԻ

Ի ԲԱՐԵՆՑԱՆ ՕՐ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ն. Ո. Յ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՐԳ

Ողջոյն քեզ, ո՛վ երջանիկ Օր,
 Որ կը ծագիս մեզ ի յերկնից լուսաւոր.
 Քեզ Հայկազունք կըսպասէին մեծայոյս,
 Ե՛կ տալ նոցա կեանք և լոյս:

Խաւար օրեր, օրեր արեան,
 Շատ մեր թըշուառ հայրեր ո՛հ շա՛տ ունեցան.
 Մեզ երանի՛, Երկինք բաժին մեզ տուին
 Ըղքեզ, ո՛վ Օ՛ր կենսածին:

Օր՝ որ ՚ի թեւ բոցափետուր
 Բերիր Հայոց ազատութիւն երկնատուր,
 Եւ ժանգահար տըգիտութեան չըլթաներ
 Մեր ոգիէն խըղեցեր:

«Ամենքդ եղբայր էք հաւասար»
Մեզի պատգամ որոտացիր տիրարար .
Հայ երակաց մէջ վառեցաւ նոր աւիւն ,
Հալածեցա՛ւ բռնութիւն :

Մեզ վեհ Սահման բերիր Պարտքը ,
Եւ իրաւունք մեզ ճանչցուցիր մեր փառքը .
Արթընցան Հայ ոգիք այս մեծ բառերու ,
Զգալ իմաստ կենսատու :

Հայն ինքզրդինք և իւր պատիւ ,
Եթէ զգաց՝ և այն է քո՝ շնորհիւ .
Քա՛րճը ըզգացմունք , որ նո՛ր իրեն տուաւ յոյս ,
Եւ ազգութեանց մէջ խրախոյս :

Պա՛ւ ըզթեւեր քո լուսահեղ
Տարածեցիր մեր խաւարին մէջ ահեղ ,
Ըսիր . «Պոռցէ՛ք անցեալ ողորմ՝ ձեր պայման ,
Դարձուցէ՛ք աչքդ ապագա՛ն :

Ապագան ձեզ ծիրանազարդ ,
Ողջոյն կուտայ , յայն նայեցէ՛ք ոգեզուարթ .
Լալու սովրած այդ աչուըններ սրբբեցէ՛ք ,
Յուսոյ ձեր սիրտը բացէ՛ք :

Ձեր հեծութիւնք բազմադարեան ,
Յաւոց հովտէդ մինչ ՚ի բարձրեալն ամբարձան .

Զուարթնոց երգոյն մէջ ձեր հառաչ խառնեցաւ ,
Եւ Տէր ՚ի գո՛ւթ շարժեցաւ :

Ակնարկեց Ն՛առ Հրեշտակն Հայոց ,
Աւետաւոր ձեզ իջանել սիրարոց .
Մէկ ձեռք պըսակ , միւսով բերել լուսազգեաց ,
Ըզ Դաշնագիր՝ ձեր կենաց :

Հայեր , ելէ՛ք զըւարթագէմ ,
Ողջունեցէ՛ք ըզձեր Հրեշտակ սիրածեմ .
Նորա թեւեր Մասեաց սարէն ծածանի ,
Հայ ազգութեան հովանի :

Սըրտէդ լըքումը մերժեցէ՛ք ,
Հայ ըլլալնուդ պատիւն ո՛հ լաւ հասկացէ՛ք .
Ձեր իրաւունքն է սուրբ , ոգւո՛վ սիրեցէ՛ք ,
Ձեր պարտք վըսեմ է , լըցէ՛ք :

Վեհ Պարտք , ձեր սուրբ կըրօն պաշտել ,
Եւ Հայրենիք քան զամենայն վեր սիրել .
Իրեն տալ զո՛հ հանդիստ , պատիւ , մեծութիւն ,
Մինչեւ անգամ զեսութիւն :

Հայ Կրօնից նըշանն է Սէ՛ր ,
Հայ Օրինաց գիրք ՄիՌիթի՛ն տայ պատուէր .
Օ՛ն դուք Սիրոյ և Միութեան զինուորներ ,
Զարկէ՛ք նախանձն և ըզհեռ :

Ի՞նչպիսիք թիւն մի Հայկական ,
Հաստատեցէ՛ք դէմ անմիաբանութեան .
Ով որ ձեր հետ այս սուրբ մարտին չէ կրցորդ՝
Նա չէ Հայոց ժառանգորդ :

Հայեր , այսօր վրկայ երկինք ,
Ուխտեմք սիրել իրաւունք , Պարտք , Հայրենիք ,
Դոշեմք . Մեռնիմք մեք , բայց կեցցես
ՀԱՅԱՍՏԱՆ
կեցցէ ԱՊՏԻԿ ԱԶԻԶ ԽԱՆ :

24 Մայիս 1869

Խորհրդ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԵՏ

ԱԻԱԶԱՂԲԻԻՐԻ ԺՈՂՈՎՐԻԻ

ԽՂՃՈՒԿ ԶԵՆ

Ընցաւ տարին , Հայոցս էլ փառք ընցաւ հիետ ,
Իրախտի սարէն գարուն յետին բարիեւ ետ .
Կտրիճքն առան զէնքերն իջան տակ հողին ,
Վանս մըր գլխուն սեւ՝ մուր էկաւ էն օրին :

Հայու աչքիէր թող միէզ լան .
Ա՛խ միէզ լան , վախ միէզ լան :

Հայեր՝ գերի էղանք բաղդին անողոք ,
Աստուած՝ հրեշտակ՝ մարդ չլիէց մըր բողոք .

Մըր լաւերու ձէն ծածկուաւ Տարնոյ տակ ,
Մշու դաշտիէր պահին սրտիցս հառաչանք :

Հայու աչքդք թող միէզ լան ,
Ա՛խ միէզ լան , վախ միէզ լան :

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքեւ ,
Նստուկ մամ՝ պապ՝ ճժեր մանցին անարեւ .
Նօթի՛ տկող . ան չկայ տիէր տիրական ,
Անդու՛թ քրտու զլին եղած էնք խուրպան :

Խարիպ աղբերք թող միէզ լան .
Ա՛խ միէզ լան , վախ միէզ լան :

Մատղաչ աղջիկն՝ ու հարս հալաւ մի չունի ,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի .
Էնպէս դրած ձեռքերն աչից ամբլկոտ ,
Գու՛թի՛ Սիրու՝ Ողորմութեան է կարօտ :

Հայ աղջրկներ թող միէզ լան ,
Հայու հարսներ թող միէզ լան :

Կեցէ՛ք՝ Մշու դաշտի քամիք , քիչ մ՛կեցէ՛ք ,
Մըր ողբաձէն բարիեւն էլ ձըր հիէտ տարէք ,
Ու իէք ընցնիք ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ կամօրից ,
Հոնկուց ըսէք խարիպ մը Հայ աղբերից :

Մըր արտըսունք սրբիէն թող մըր աչվընուց,
Քընզի տատէն էլ չըլանք էլ չըլանք:

1870 մայիս 24



ՉԱՅՆ

ՀԱՅՐԵՆԵԱՅ

Օտար աիունք ցրուած 'ի սփիւռ,
Ով սիրատուն իմ զաւակունքս.
Չեր հայրենիք տրտում տըխուր,
Չեզ կը դիտէ արցունք յաչկունս:

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ:

Ոհ, այս քանի տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.
Ամուլ մըցում, հեռ, վիշտ և ցաւ,
Այս իմ բաժին, այս է ձեր ջանք:

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ:

Հնոց՝ ով դուք, որ օտարին է
Փառաց պատուոյ էք խնկարկու:

Անմահութեան դրոշմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք ծախած շքոյ:

Իմ տաճարներս դուք չէք կանգներ,
Իմ նախատինքս դուք չէք սրբեր:

Կանցնին այսպէս անթիւ օրեր,
Եւ յաւերակս նստած յերբեր.
Իբրեւ այրի հրոյ մաանած,
Կոյսոյր օժիտն է անարգուած:

Գոչեմ տաճարս ով կը կանգնէ,
Իմ նախատինքս ով կը սրբէ:

Ն. ՄՈՒՐԱՅԵՆ



ԱՐՏԱՍՈՒՔ ՀԱՅ ՄԱՆԿԱՆ

Ի ՄԱՀ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՎԱՐԴԱՆԱՅ

ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻԻՆ

Լացէք պատանիք և կուսանք Հայոց,
Սուղ առնու Մատիս, և Հայոց լեռնէր:

Ձի ահա՛ մահուան անգութ դերանդի ,
Որբացեալ թողու զաշխարհ հայրենի . . . :

Հայոց աշխարհիս քաջ բազկաւ որդին ,
Փռուած է Մասեաց շուքերուն ներքեւ .
Շնչառպառ լանջացն հառաջանք յետին ,
Գոչէ նա Աստուած , կրօնք ու Հայրենիք :

Իր սրտահառաչ ձայնից զուգակցին ,
Ահագնատեսիլ դրօշակակիրներ .
Սպիտակազգեաց չորս դին դեգերին ,
Գերեզմաններէն հազար դիւցազունք . . . :

Եւ արիւնլուայ մարմնոյն առնթեր ,
Սեւ քօղն երեսին լուռ մունջ շուարած .
Չեռն 'ի ծնօտ Ղեւնդ գաղանի կ'արտասուէ ,
Կը ճմլի Յովսէփ ցաւօք տրտմազգած :

Արեւն ու լուսին ամպի տակ փակուած ,
Լուսոյ ճակատնին 'ի մութ են ծածկեր .
Մասեաց արձագանգք կոծեն տրտմազին ,
Սիրուն Հայաստան սեւեր է հազած :

Հրեշտակն Հայրենեաց տրտում թախծագին ,
Իլած է այսօր Հայոց գերեզման .
Արիւն արցունքով տապաններ ցօղէ ,
Վարդանայ բերնէն խօսք մը կ'սպասէ :

Դրուժանըն վասակ վատ քան զկայէն ,
Պատրաստ Հայրենեաց տալ դառըն հարուած .
Սրբոյն Գրիգորի որդւոյն հարազատ ,
Փըշանիւթ պսակ հիւսեց վարդանայ :

Ապշեցան երկինք ընդ սեւ ոճիրն այն . . .
Լըռեցին անմահ կաճառք դիւցազանց .
Եւ սրտաբեկեալ Հայոց զաւակներ ,
Ի՛ղէն կ'դիմեն 'ի վրէժ լուտանայ :

Մասեաց ծիածան 'ի մութ կ'սքօղի ,
Մութ տիրէ Հայոց սրտեր հաւասար .
Յօղէ տրամութեան առատ անձրեւներ ,
Հապճէպ կ'խուսեն պարերն ու հրճուանք :

Բօթ դուժեց յանկարծ թէ մատնիչք գունդ
գունդ ,
Գան ասպարափակք և ըսպառաղէն .
Ո՛վ իմն Հայրենիք արեանըդ կարօտ ,
Կատղած գազաններ 'ի զէն կ'դիմեն :

Եւ գալարելով վիշապանըման ,
Կ'վաղէ Մատնիչն աշխարհը քանդել .
Կործանել տենչայ զԱթոռ և Սեղան ,
Եւ յաւերս նորա իր գահը կանգնել :

Տղաք ճիչ բառնան , կ'դողան մայրեր . . .
Ամենքն ալ կ'իյնան 'ի ծոց սուրբ փրկչին .

Յառաջ մատչելով ծերերն արեպսակ՝
կրկնեն պատանեաց ըզհին յաղթանակս :

Իսկ անդրդուելի պատուարն Հայկազանց ,
Ընտիր զօրապետն ախոյեան կանգնած .
Ահա թշնամին դուչե անվրդով ,
Հոն կ'սպասէ մեզ Մահ կամ Յաղթութիւն . . . :

Անուշ զաւկըներ՝ սիրուն մանկրտիք ,
Աղէկ է մեռնիք , արդ ձեր երկրին մէջ .
Քան թէ այն դաժան վայրի գաղանին ,
Անդութ ճիրանաց ճարակ փշրուիք :

Փութացէք հապա՛ , Հ'անցնի ժամանակ ,
Թողունք այս տեղեր վատեր չը հասած .
Բաբէ տխրութեան դառըն վայրկենիս ,
Ըսաւ ու սքօղեց դէմքըն տխրամած :

Եւ յիշատակներ յառնելով 'ի սիրտ ,
Իջուց այտերէն արտասուաց հեղեղ .
Օն առէք խրախոյս ո՛ առաքինիք ,
Ժամ է արդ արեան . . . և ահեղ վրիժուց :

Անօրէն Մուշկան դողաց դարկադէմ՝
Երբոր բանակին ջրուիլը տեսաւ .
Պահեստի զօրքերն օգնութեան կանչեց ,
Եւ յօրինուածովք սերտ ճակատեցաւ . . . :

Հոն ընկաւ Վարդան 'ի խռան սուսերաց ,
Մխուեցաւ պողպատն արի վեհ սրտին .
Կարծես կը լողար արեան ծովին մէջ ,
Պարսիկն ահաբեկ կար անոր տեսքէն :

Իսկ նա հեծելով կարեւիք սրտիւ ,
Ազգատեաց չարին Վասակայ դործեր .
Գուշեց Հայրենիք . . . Հայրենիք սիրուն ,
Առ զվերջին իմ շունչ . . . և զվերջին ողջոյն . . . :

Քաղցրիկ Հայաստան . . . Վարդանայ երկիր ,
Մի տար ոսկորներս 'ի ձեռս օտարին . . .
Ծոցիդ մէջ հանգչիմ՝ Մայր իմ Հայաստան ,
Մեռնիմ թողլով սիրտս Հայ զաւկըներուս :

Գողցես արեւէ խամրած մանուշակք՝
Կիսաբաց աչօք գեախնը բռուած . . .
Դարձուց քաջ Վարդան աչք Հայ զաւակաց ,
Զըրկուած տեսաւ իրենց արեւէն :

Ճմլեցան աղիք հօկային Հայոց ,
Ընդ ահեղ տեսիլ տիրապատ քաջաց . . .
Կարկառէ՛ երկինք , գուշեց , Չեռն Հայուն ,
Կամ կարճեցուր կեանքս , ա՛ռ շունչըս ազատ :

Շառաչիւնք զինուց , հարուածք սուսերաց . . .
Մեւեգնեալ զօրաց ահեղագոչ ձայն . . .

Հողմերէ դիզուած փոշոյ կարմիր ամպ . . .
Դիակներէ բլուր . . . Այս էր դաշտն ահա' . . .

Հոն , ահա՛ դիւցազն անվեհեր վարդան ,
Ընդունեց պսակ երկնային փառաց . . .
Եւ հրեշտակներու ՚ի թեւս ապաստան ,
Երկնասլաց Հոգին այսպէս կ'իօսէր . . . :

Ա՛լ մնաս բարով , Հայոց աշխարհի՛կ
Ահա՛ ես կերթամ ո՛վ իմ հարցս երկի՛ր . . .
Կուուեալ քաջաբար՝ անվեհեր մեռնիմ՝
Այս լոկ է իմ ցաւ՝ որ ֆեզմէ զատուիմ . . . :

Լացէ՛ք պատանիք , օրիորդք Հայոց ,
Մո՛ւգ հագնի՛ Մասիս , սո՛ւգ մտէ՛ք լեռներ . . .
Ո՛հ կ'իթողում ֆեղ անուշ Հայրենի՛ք . . .
Ահա՛ կ'սպասէ զիս մահուան ըստուեր . . . :

Ո՛վ կրնայ չ'ողբալ բաղդին այս հարուած ,
Մթնցաւ արեւս . . . պատեց զիս խաւար . . .
Ուրացող ձեռաց ճարակ պիտի մնայ ,
Վարդա՛ն զուգարադդ ընդ Հայաստանի . . . :

Թո՛ղ լայ տխրաճայն ողբանուագ կարապ ,
Ողբա՛ քաջազնիս աղիողորմ մահ . . .
Ա՛ռ երկի՛նք թշուառ Հայուն վերջին շո՛ւնչ . . .
Ա՛ռ ֆաջիս սրտիկն անարժան ֆեղ ո՛ւխտ . . . » :

Ըսաւ ու դոցեց վեհ արտեւանունքն ,
Յաղթանակին ծոցն ինկաւ լի փառօք . . .
Թաթխած մատուրներն կրակ արեան մէջ ,
Խաչանիջ կնքեց իր լանջքն և ճակատ . . . :

Մեռա՛ւ . . . մեռցնելով անթիւ վասակներ . . .
Անմահ Յիշատակ թողլով դարերու . . .
Եւ Մասեաց ՚ի ստոր մեծասասան Ստուեր՝
Դեռ կ'իթափառի Պաշտպա՛ն Հայերու . . . :

ՄԱՐՈՒՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ



Ա Ռ

ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկի՛ր քաջազանց , քանի՛ սուգ աչեր ,
Յողեցին լալեօք ֆու քաղցրիկ հողեր .
Քանի՛ լուռ հառաչք սըրտից խորերէն ,
Անձկաւ քեղ թըռան օտարաց երկրէն :

Դառն է , ո՛հ զաւկաց մօր գըրկէ կորզիլ ,
Եւ դառնագոյն մօր անզաւակ ծիւրիլ .
Այլ այն ձեռքն որ քեզ տապալեց գահէդ ,
Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Քամեցիր լռուիկ ՚ի սպառ դառն բաժակ ,
Լըրաւ երկնից կէտ ցամաճն վրիժակ :

Տես սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տըւած՝
Գնան յառաջաքայլ ուժով օրինաց :

Համբոյր սուրբ 'ի շուրթն , սէր վառ 'ի սրտի ,
Դիմեն սփոփել քեզ ո՛չ յուսով սնտոի .

Թէ սոյն ձեռքն որ քեզ տապալեց գահէդ ,
Կարող է գըլթով կանգնել անկումէդ :

Թ. ԱՁԱՐՆԱՆ



Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1. Ոչ այնպէս հրճուի յորրանի մանկիկ ,
Ի ծուծ մայրենի ըստեանց ուռուցիկ .
Եւ ոչ այնպէս զուարթ 'ի տես սիրելոյն
Բաբախէ կարօտ սիրտ կուսին զգայուն :

Որպէս մեք Հայերս որք մօրէ քաղցրիկ ,
Դարերով անգութ բաղդին խաղալիկ .
Մերձ 'ի շունչ յետին ոգւով սրտաթունտ .
Յընձագին խայտամբ 'ի քոյ վերածնունդ :

Ո՛վ յոյս միակ դու Հայուն ,
Սահմանադրութիւն .

Ի միութեան և 'ի սէր ,
Կեցցես աներեր :

2. Քեւ Հայոց լերինք դաշտեր արգասու ,
Ծիծաղին 'ի լոյս պայծառ արեւու .
Նենգ դաւ և զրկանք նախանձու ոգի ,
Իրաւանց սիրոյ քեւ ետուն տեղի :

Եղբայր ա՛րդ եզրօր ուխտ դընէ հաստատ ,
Սիրալիր շըրթամբ համբուրէ ճակատ .
Գեղմով միշտ ապրիլ և քեզմով գործել ,
Ըղբեզ իր խըղճին առաջնորդ ունել :

Ո՛վ յոյս
.



Փարատեցաւ երկնից կապոյտ ,
Ակն անմահին ակնարկեաց .
Յարին Հայկայ սերունդք ընդ փոյթ ,
Հընչել նուագս օրհնութեանց :

Խրախոյս Հայկազունք ,
Յաւէրժ փրկութիւն .
Օ՛ն երգենք , մանկունք ,
Սահմանադրութիւն :

Ժամանակին 'ի խոր յատակ ,
Արցունքն Հայոց սուղեցան .

Լռեաց ողբոց դառն աղաղակ,
Սըգոյ ծիծաղն աստ փոխան:

Խրախոյս . . .

Ամեն էին սրտեր թափուր,
Ճակատն՝ յամօթ աղղութեան .
Քա՛ւ . նուազեալ ժայթքեաց հուր,
Անյոյսք յանկարծ Հայք յարեան:

Խրախոյս . . .

Որ 'ի կամարն աստեղազարդ,
Հզօր բանիս ինքնիշխան .
Մեզ աուողին շնորհացն առատ,
Չաւուրս հայցեմք տուր երկայն:

Խորին մաղթանաց,
Ուղերձ միաձայն .
Առ պետն Օսմանեանց,
Ապտիւլ Աղիզ Խան:

ԵՐԳԵԱԼ Ի ԴԻՄԱՑ
Ա. ՆԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ



Ե Ր Գ

Ի ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԶ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1864 ՄԱՅԻՍ 24

Հրճուին երկինք, խայտայ երկիր անթերի,
Եւ Հայկազանցս դէմք կը ժպտին դեղանի .
Չի Տարեդարձ մեր փրկութեան նոր հասեր,
Դարձեալ հանգոյն Արուսեկին լուսարեր:
Յոր նորոգուին մեր սրտեր,
Կրկին 'ի յոյս և 'ի սէր:

Ազգասիրաց վսեմ ճակտին քրտնաթոր,
Այսօր Մասեաց հրեշտակն յաշխոյժս նորանոր .
Քառեակ պսակ մ'ալ դայ հիւսեւ ծաղկափայլ,
Չոր եթերին կաղմեն մատուռք բարեփառ:
Յոր խրախուսին մեր սրտեր,
Կրկին յողի անվեհեր:

Չայն հինաւուրց Քինախնդրին ալ ընդհատ,
Հնչեն փոխան բարբառքն Հայկեան անընդհատ .
Օրէ՛նք արդար և Միութի՛ւն երջանիկ,
Չոր «մայր բարեաց» դրեն անշուշտ անջինջ գիրք:

Յոր կը յնծան մեր սրտեր ,
 Կրկին 'ի խինդ անեպեր :

Հապ' օն որդիք հայկեան ,
 յայս պերճ Ասպարէզ ,
 Եկէք ածնել սերկեանս շքեղ մեծ հանդէս .
 Նուիրական ըլլայ մեզ օրս յարածամ ,
 Ուր միութեան ճանչցանք ոգին ու Ազգութեան :
 Եւ յոր լցան մեր սրտեր ,
 Կրկին 'ի լոյս անստուեր :

Թող հնչէ ազատ ,
 Միշտ վեհն Այրարատ .
 Ընդ նմին երգեն ,
 Դաշտք , լեռինք ամեն .
 Թէ բաղդն Հայերուն ,
 Դեռ ողջ է անբուն .
 Եւ մեք անդադար ,
 Չարենք Հայկեան քնար .
 Որչափ ապրի Հայն ,
 Կեցցէ՛ Միութիւն .
 Ու փառքն աննման ,
 Սահմանադրութիւն :

ԽՕՍԲ

ԱՄԱԿ Ա. ԻԱՆՃԱՆՆԻ

ԵՂԱՏԱԿ

ԲԱՐՔՈՂ Մ. ԹԱՓԱՐՆԱՆԻ

ԵՐԳ

Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազն որդիք հապ' օն 'ի դաշտ ,
 Չեռք սիրտ համբոյր եղբօր տալ հաշտ .
 Հապ' օն դէպ հոն' ուր միարան ,
 Մենք ուխտեցինք որ անբաժան .

Ըլլանք մէկ սիրտ մէկ ոգի ,
 ՀԱՅ ԱԶԳՈՒԹԵԱՆ տալ հողի :

Ամենքս մէկ սիրտ ոգի լ'անուն ,
 Ամենքս մէկ յոյս հաւատք լ'արիւն .
 Ամենքս զաւակ մէկ Հայրենեաց ,
 Ինչու այսպէս եմք օտարցած .

Եկէք ամենքս մէկ ոգի ,
 ՀԱՅՈՒԹԵԱՆ տանք նոր հողի :

Տեսէք Հայը Հայուն համար ,
 Կանգներ է հոն դափնի կամար .
 Մեզ կ'սպասեն Հայկեան կուսանք ,
 Վարդ մանիշակ ծաղիկք հազարք :

Օ՛ն ամենքնիս մէկ ոգի ,
 ՀԱՅՈՒԹԵԱՆ տանք նոր հողի :

Վարդից կոկոններ սէր բուրեն ,
 Կուսին մատներ սէր կը գրեն .
 Մանկտիք ուրախ սէր կը գոչեն ,
 Մուսայց քնարք սէր կը հնչեն .

Սիրով և մենք մէկ ոգի ,
 Առնունք մեզմով նոր հոգի :

Սիրով բացուած անմեղ սրտեր ,
 Գիտցէք Հայուն նշանն է սէր .
 Օտարին պէս չըլլանք դաժան ,
 Ի բաց մերժենք սիրտ Մերձ-ժան .

Ատեղութեան շար ոգի ,
 Թողունք առնենք Հայ հոգի :

Բաւ է ալ բաւ է եղբարք ,
 Հայն բաւ կրեց վիշտ տառապանք .
 Մինչ մեր թշուառ աւուրց յաւարտ ,
 Ծագի պայծառ արեւն զըւարթ .

Ըլլանք մէկ սիրտ մէկ ոգի ,
 ՀԱՅԱՍՏԱՆԻ տանք հոգի :



X ԵՐԳ

Թեւ ՚ի թեւ օն ընկերք ,
 Դէպ ՚ի հոն արշաւենք .
 Ուր մեր եղբարք մեղ համար ,
 Կանգներ են Դափնի կամար .
 Հոն գրկենք մեք զիրար ,
 Երգենք միշտ Լ'եղնենք պար .

Եւ երկինքէն յարատեւ ,
 Մաղթենք ՀԱՅՈՒՆ նոր արեւ :

Ալ հերիք մեր վշտեր ,
 Բաւ աչաց արտաունքներ .
 Ատեղութիւն հեռ նախանձ ,
 Թո՛ղ մընան մեզմէ ՚ի բաց .
 Եղբօր գիրկ միշտ սիրով ,
 Գրկըվինք հրճուելով .

Եւ երկինքէն յարատեւ ,
 Մեր կենաց մաղթենք արեւ :

Օ՛ն քոյրեր և եղբարք ,
 Հարեմք մեր սուրբ քնարք .
 Եւ մեր սրտեր անմեկին ,
 Անմաշ հոգւով թո՛ղ կապուին .

Մենք ըլլանք Հայութեան,
Նոր դիւցազն՝ և՛ խոյեան:

Եւ միշտ մաղթենք յարատեւ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ լոյս արեւ:

ԵՂԱՆԱԿ
Գ. ԳԱՀՐԱՄԱՆԱՆ

ԽՕՍՖ
Գ. Ա. ՀԻՏԱԼԻՐՏԵԱՆ



ԴԷՄԲ ԳՈ ԳԵՂԵՑԻԿ . . .
ԱԻԱՂ ԶԻ ԽՍՐԵՅՄ

Ա.

Հիատեսիլ դէմքիդ գեղոյն,
Աշխարհ ամեն սխրացաւ . կոյս .
Այդ բոցափայլ Աջիդ լուսոյն՝
Բողոք սրտից մէջ ծընաւ Յոյս . . .

Այլ աւանդ զի խամբեցար:

Ո՛վ ցանկալին այն թագ չքքեղ,
Որ սրբանուէր քոյոյ դլխոյն .
Զարդն էր անմահ շքնորհագեղ,
Ո՛հ ծածկեցաւ նա ընդ հողով:

Եւ դու աւանդ զի խամբեցար:

Դիւսոյդ . ո՛ր ձեռք ժպրհեցաւ,
Պայծառ դէմքիդ ձգեւ այդ քօղ:

Ու ոսկեծղի պարանոցիդ,
Այդ՝ թէ ոսկի՛ այլ վատ չդթայն:

Աւանդ զիարդ խամբեցար:

Եւ քո արեւն այն տենչավառ,
Որ Հայրենեաց կեանք՝ ոգի տայր .
Կոյս՝ պարմանի սքանչանայր,
Նըսեմացաւ, է՛ջ ՚ի շիրիմ . . . :



ՇԻՋԱ՛Ի ԱՐԵՒՆ ՀԱՅՐԵՆԻ . . .

Բ.

Բանաստեղծին քնարին թելեր,
Ողբացին յոյժ քո աղէաներ .
Սակայն ափսոս՝ — Երկինք ընդէ՛ր . —
Ի զուր հնչեց այն եղերքներ .

Շիջաւ արեւն Հայրենի:

Յուսոյ Հրեշտակ մերթ սըլանայր,
Այն քնարին աշխոյժ տալու .
Բա՛րէ և նա թըռաւ յերկինս,
Յիւր ոսկեհոյլ ամպոց խորանն:

Եւ քնարն արդ կայ անխօսիկ:

Ոչ եւս կուսանըն փափկամէջ,
 Յաւուրս տօնից մեր բերկրաւէտ .
 Ոչ եւս 'ի պար նօքա հրճուին,
 Հայ՝ լուսարփի աստեղց ներքեւ .

Անմխիթա՛ր Հայրենիք :

ՆՈՐ ԱՅԳ

Գ .

Ահա ցոլաց նոր առաւօտ,
 Դիմեալ 'ի ժպիտ գեղածիծաղ .
 Մեր նախահարց Ս. շիրմաց մօտ՝
 Այլ թէ ծագէ՞ նոր լոյս խաղաղ .

Յօղէ՛ շնորհքդ ո՛վ երկկնք :

Յաւերժացի մեզ ցանկալի,
 'Նդ ամանորիս՝ նոր կեանք ու ոգի .
 Չքնաղ անդրէն սէր ծաւալի՛,
 Եւ քաղցրալուր՝ 'ի Հայաստան .

Հնչէ՛ քրնար միութեան :

Եւ դու յայնժամ՝ կոյս գեղուհի,
 Յոյց ո՛հ քո դէմքըդ հրաշագեղ,
 Փշրէ՛ շղթայդ .

Ու աղատութիւն փայլեցուր Ասող .
 Ձի դու ինքն ես կեանք Հայրենեաց ;
 Գու ինքն ես փառք Հայաստանեայց :

ՄԻՂՈՅ

ՁԵՓԻՒՌ ՄԱՆԿԱՆՑ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
 Աղբերց վրայէն լուսակարկաջ .
 Անուշ հոտով ծաղկանց սփիւռ,
 Ի՛նչպէս թուչիս ինձ ընդ առաջ .

Ու խունկ և զով ընծայելով,
 Ձիս ողջունես հեղիկ շրնչով :

Ո՛հ կը սիրեմ գքեզ հողմիկ,
 Երբ կը փութաս ինձի գալու .
 Ի պար 'ի թուրչ 'ի սոյլ մեղմիկ,
 Այրած ճակտիս ինձ այցելու .

Ծաղիկ հողւոյս քեւ զովացած,
 Ծիւ ծիւ բացուի 'ի լոյս կենաց :

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
 Լուր տուր հովտին ու ծործորին .
 Ու անտառաց բարձրադիտակ,
 Ուր երանով սոխակք թառին .

Թէ մտերիմն իւրեանց եկաւ ,
 Բիւր զմայլմանց յիշատակաւ :

Ո՛հ կորուսած իմ հաճոյքներ ,
 Հոս վերստին գտնեմ զձեզ .
 Ծառոց չըքով էք ծածկուեր ,
 Ու փրփուրով առուակին հեզ .

Ահա կայտուէք 'ի յայս ծըմակ ,
 Ի յայս թըփուտ հուանոցակ :

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ ,
 Ճակտես 'ի բաց հեռանային .
 Եւ հոյլք ժամուց գեղապարիկ ,
 Սիրտս թեթեւ օրօրէին .

Եւ բնութիւն՝ մայր որդեսէր ,
 Քնքուշ գրկաց մէջ մեզ չես գդուեր :

Հոս ճեմէին երեկոյեան ,
 Ի զով ըստուեր պար մի կուսից .
 Մաղերը հովուն բազմաբուրեան ,
 Սիրտք ընծայուած հեշտ վայելից .

Եող , լուսնակին կոյսն ու ծաղիկ ,
 Զիրար շոյեն սիրատարփիկ :

Մըտերմութիւն , սէր կրակուբոց ,
 Ի՞նչ անուշ էք յայս տեսարան .
 Ուր դալարիք ձեզ հանգստոց ,
 Ու անհուն դաշտեր զբօսարան .

Մըտերմութիւն , ինձ երանի ,
 Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի :

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,
 Աղբերց վրայէն քաղցրակարկաջ .
 Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,
 Թըռիւր , թըռիւր ինձ ընդ առաջ .

Ու խունկ և զով ընծայելով ,
 Իմ շուրջ պատէ հեղիկ շընջով :



Հ Ր Ա Ի Ե Ր

Արիք ազատ կովկաս մասիք ,
 Արիք որդիք յաւիւն կրօնից .
 Միահամուռ մահ յաշտ գիք ,
 Յագուրդ վրիժուց դիւապաշտից :

Օն անդր յառաջ մանկունք հայկայ ,
 Օն վառ 'ի վառ 'ի նոր խրախոյս :

Ձի արդ՝ Գրիգոր ընդ Տրդատայ ,
Մալախմբից յառին 'ի խոյս :

Եատ ու շատ են մեր Հայրենեաց ,
Հայեր , աղէտ դառն ու վիշտ .
Առատ առատ հէգ հայկազանց ,
Աչերն արտառք հոսեց միշտ .

Խօսէ , հնչէ , անուշ կիթառ ,
Հայ սրտերուն մխիթար :

Մուրբ Հայրենեաց հին յիշատակք ,
Մեր սրտերը թէ վառեն .
Ա՛հ սրտերուն եթէ յատակք ,
Սեւ հառաչանք մը հանեն .

Խօսէ , հնչէ , անուշ կիթառ ,
Հայ սրտերուն մխիթար :

Վէպն այս ԱԶԳԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ,
կիթառ , հարցուր Արեւուն .
Հարցուր լուսնին . որ արդ պահպան ,
է Հայրենի շիրմերուն .

Հեծէ , հնչէ , անուշ կիթառ ,
Հայ սրտերուն մխիթար :

Հայրենախօս դու ո՞վ կիթառ ,
Հայոց ծիծռան տուր աւիւն .

Հայոց բաղդին տուր զուարթ լուր ,
Ժըպիս Հայոց սարերուն .

Երգէ նոր երգ , անուշ կիթառ ,
Մեր Հայրենեաց մխիթար :

-----*-----

Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք Հ Ա Յ Ր Ե Ն Ե Ա Յ
Ա .

Որպէս հէք ստրուկ , հայրենեաց կարօտ ,
Աղեկէղ սրտիւ նայի ծով և օդ .
Անհամբեր մընայ , հայրենի ասաղին ,
Նոյնպէս ես , որդեակ , հրսկեմ քո բաղդին .

Դու իմ հրեշտակ , ո՞ հոգի երկնատուր ,
Ի՞նչ վիճակ տ'ընտրես , յերկիր քեզ տրխտուր ,
Այր կրօնական՝ թէ պաշտօնաւոր ,
Գրագէտ կ'ըլլաս՝ ապա թէ ղինուոր :

Նիրհէ դու արդ՝ անուշ զաւակ ,
Նիրհէ դիրկըս սիրուն հրեշտակ :

Բ .

Քո փայլուն աչքերդ , ինձ աւետիս տան ,
Թէ ուղես կանգնիլ , հայրենեաց վահան .
Բայց , աւանդ , որդեակ , ո՞ւր է Հայաստան ,

Ո՛ւր մեր դահ, խորան, դարձան մահարձան .

Յաղթական ճակատիդ, ծաղկեայ պսակներ,
Չունի Հայաստան, այլ սգոյ փուշեր .

Դեռ նոր լոյս տեսած՝ դու ալ իմ հոգիս,
Տի թոթովես « մայր, տուր ինձ հայրենիս :

Նիրհէ դու արդ՝ իմ որբ հայկիկ,
Նիրհէ գիրկըս, անուշ թռչնիկ :

Գ .

Ի՞նչ ճակատագիր ունի Հայն յերկիր,
Այլ միայն աղէտք և սիրտ տարագիր .
Ձի օտար փառօք պանծող գլուխներ,
Չեն կարող ըլլալ որդւոյս քաջալեր .

Դու պիտի ծծես կաթով իմ յստակ,
Հայկական ողին որ ծնաւ Սահակ .
Դու պիտի փրկես մեր քաջաց դամբան,
Որ կայ գարէ դար հիներու կոխան :

Նիրհէ դու արդ՝ յոյս իմ հեզիկ,
Նիրհէ գիրկըս, սիրուն Յուսիկ :

Գ .

Գերագոյն էին հզօր հովանին,
Քեզ համար մաղթեմ, սէր իմ սրտածին .

Քո անբաղդ Ազգիդ աւեր խորանին,
Թո՛ղ քեզ նուիրեմ՝ մատաղ՝ լալագին .

Քո հարցդ վշտաց եղար դու ժառանգ,
Յաշխարհ քեզ համար կայ մի մեծ պարձանք .
Ապրիլ հայապէս, ըլլալ սուրբ պսակ,
Հայրենի սիրոյն մեռնիլ նահատակ :

Նիրհէ դու արդ՝ անմեղ դառնիկ,
Նիրհէ գիրկըս զուարթ Աստղիկ :



ԱՌ ԿՈՅՍԸ ՈՒԽՏԱԻՈՐ

Ո՛հ, քաղցր է քո սէր, ո՛ կոյս,
Խոնջ և լըքեալ սարէ սար .
Լեռ, ձոր և դաշտ և ճրմակ,
Ծաղկունք գեղոյդ սիրահար .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն,
Քո ինձ կրրկնեն քաղցր անուն :

Լոկ քո մեղուակն յիս նայուածք,
Չայն արծաթի և թըրթրուն .
Իմս զարթուցին նախկին սէր,
Ալ այն օրէն էք համբուն .

Հրեշտակդ ամբիժ իմ սիրուն ,
Քո ինձ կրկնեն քաղցր անուն :

Ի զուր հարցի գիւր սրբոյս ,
Ձով զեփիւռիս ու առուակաց .
Ճիւղմէլին լրուեց երգ ,
Եւ բնութիւն իսկ տրտմամ :

Հրեշտակդ ամբիժ իմ սիրուն ,
Քո ինձ կրկնեն քաղցր անուն :

Համբոյր հեղիկ , գեղ ժրպետք ,
Ուռուցիկ լանջ , գիրգ հասակ .
Չրտան ջընջել , ո՛հ , մրտքէս ,
Եւ գիտակաց վառ հիւսակ :

Հրեշտակդ ամբիժ իմ սիրուն ,
Արմենուհւոյդ քաղցր անուն :

Չը կայ տերեւ , վարդի թերթ ,
Խորհրդաւոր ծալք բնութեան .
Որոց վրայ կարօտով ,
Սրտիս հառաչք չը կարդան :

Հրեշտակդ ամբիժ իմ սիրուն ,
Արմենուհւոյդ քաղցր անուն :

Թէ աչերուդ սիրարկու ,
Խոստումն անշնորհ քեզ գրեցաւ .
Ո՛հ , գէթ սիրով ինձ ներէ ,
Հընչել առ իմն ցուրտ շիրմաւ :

Հրեշտակդ ամբիժ իմ սիրուն ,
Արմենուհւոյդ քաղցր անուն :



ԱՌ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐԸ՝

ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՕԼՍՈՅ

ՈՂՋՈՅՆ

Թէ 'ի հրացան դրօշ մահաբեր ,
Այլք ողջունեն իւրեանց տէրեր .
Կամ 'ի գողիւն թնդանօթաց ,
Ահեղ ողջոյն տան իշխանաց .
Մեք մեր սրբախց 'ի բարախին ,
Խոնարհ՝ այլ ջերմ տամք քեզ ողջոյն .
Եւ թէ չունիմք դրօշ արեան ,
Չեզ ձիթենիք և մեր նըշան :

Օն Հայրիկին ընդ առաջ ,
Երթամք հայեր քաջալանջ .
Հերիք կոհակք անջատեն ,

Զափըն որդւոց հօր լաստեն .
 Պատուեմք վոսփորն քաղցր 'ի ձայն ,
 « Ողջոյն ողջոյն քեզ ո՛ր խրիմեան : »

Հրեշտակդ յուսոյ , թըռի՛ր առ մեզ ,
 Ծա՛տ թառեցար , բո՛ւ սրտակէզ .
 Համբ 'ի նոճիս աւերակաց . . .
 Թէ բարեկամ ես ամայեաց .
 Մեր սիրտք ալ են աւեր , թափուր ,
 Լի՛ց դու զանոնք՝ ողւոյդ 'ի հո՛ւր . . .
 Բոցովք աչաց՝ սառն հրդեհես ,
 Անըզգայից սիրտն ե՛կ , վառես . . . :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ ,
 Դիմեմք , Հայեր , քաջալանջ :
 Հերիք կոհակք անջատեն ,
 Զափըն որդւոց հօր լաստեն . . .
 Պատուեմք վոսփորն քաղցր 'ի ձայն ,
 « Ողջոյն քեզ , ո՛ր խրիմեան » :

Քաղցր Աստուծոյ մ՛անոյշ պատգամ ,
 Դո՛ւ , խաչակիր խաղաղութեան .
 Ծանթից փոխան՝ մեզր հօսէ մեզ ,
 Հեղութեամբդ , ո՛հ , բարձրացո՛ զմեզ . . .
 Եւ մտթի մէջ , Հայաստանցին ,
 Թէ կորնչի հեծեծազին ,

Հասցուր անոր՝ ջահ լուսաւոր ,
 Չե՞ս մի լուսոյ դու վե՛հ զինուոր . . . :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ ,
 վազեմք , Հայեր , քաջալանջ .
 Հերիք կոհակք անջատեն ,
 Զափըն որդւոց հօր լաստեն . . .
 Պատուեմք վոսփորն քաղցր 'ի ձայն ,
 « Ողջոյն քեզ , ո՛ր խրիմեան » :

Քաղզն այս անգամ բանայ զայեր ,
 Մըթին արժէքն հանէ 'ի վեր . . .
 Եւ թէ թաւչէ տայ քեզ դահոյս ,
 Լօռուտ զաւերս ածէ 'ի յուշ .
 Եւ գաւազան թէ տայ ոսկի ,
 Դու նոյն հովիւն ես պարզ՝ Լարի .
 Որ ջազխեցիր 'ի ցուպդ անփուտ՝
 Դայլս վայրի , և զանարգ Քուրտ . . . :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ ,
 Թռչիմք , Հայեր , քաջալանջ .
 Հերիք կոհակք անջատեն ,
 Զափըն որդւոց հօր լաստեն . . .
 Պատուեմք վոսփորն քաղցր 'ի ձայն ,
 « Ողջոյն քեզ , ո՛ր խրիմեան » :

Մարդ, որ հըզոր է 'ի պատժել,
 Զի՞ անզոր է 'ի վարձատրել . . .
 Երկու տերեւք, մինչ մեծ արք կեան,
 Գար մ'երբ մեռնին, — այս իր վարձան,
 Այլ լոկ այս չէ, Հայրիկ, քո վարձ,
 Դէմ սլաքաց, զոր սրէ նախանձ .
 Գընդակաց . զոր ցուլէ խաւար,
 Սիրաք մեր լըցին քեզ միշտ ասպար . . .

Օ՛ն, Հայրիկին մեք առաջ,
 Սփռեմք մեր վիշտ, խղճ, հառաչ .
 Մեր երակաց գիլէ թինդ,
 Ճանչէ սրտից խոց ու խինդ . . .
 Պատուեմք վսափորն քաղցր 'ի ձայն,
 « Ողջոյն քեզ, ո՛ր խորիմեան » :



Ե Ր Գ

ՎԱՍՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԿԱՅՍԵՐ

Շէհինշահը զէման Ապտիւլ Ազիզ խան,
 Պիր աղ միւտտէթ նազարտէն օլտի բինհան .

Միւքէտտէր իտի ճիւժէ զիյրի տէսթան,
 Խսթամպօլ դալմըչ իտի ճիսմի պի ճան :

ՆԱԳԱՐԱԹ

Գուտուժիլէ հաեաթը թաղէ կէլտի,
 Նէշաթ ու շալքը պի էնտաղէ կէլտի :

Վ իճուտի կէվհէրի քեանի ատալէթ,
 Բէֆի տերեայի իհսան ու ինայէթ .
 Հէլէ էվսաֆընէ եօքտուր նիհայէթ,
 Պու քէրրէ երւմնի թէշրիֆինտէ էլպէթ :

Գատէմ պաստըգտէ օլ Շահը քէրէմքեար,
 Ատէմ ապատէտէք տէֆ օլտու իքտար .
 Լիսանը հալ իլէ հէր զէրրէ հէր պար,
 Խտէր ըխլաս իլէ պու պէյթի թէքրար :

Խիւտա իգպալ ու էօմրիւն իտէ միւզտատ,
 Մէմալիք սայէսինտէ օլտի ապատ .
 Սունուֆը զիյրի տէսթան օլարազ շատ,
 Խտէրէր շիմտի պու մանայի իրատ :



ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ոչ այնպէս հրճուի յորրանի մանկիկ,
 Ի ծուծ մայրենի բտեանց ուռուցիկ.
 Եւ ոչ այնպէս զուարթ 'ի տես սիրելոյն,
 Բարախէ կարօտ սիրա կուսին զգայուն.
 Որպէս մեք հայերս որք մօրէ քաղցրիկ,
 Դարերով անգուլթ բաղդին խաղալիկ.
 Մերձ 'ի շունչ յետին ոգւով սրտաթունա,
 Յընձաղին խայտամք 'ի քոյ վերածնունդ.

Ո՛վ յոյս միակ դու հայուն,
 Սահմանադրութիւն.
 Ի միութեան և 'ի սէր,
 Կեցցես աներեր:

Քեւ Հայոց լերինք դաշտեր Արգասու,
 Ծիծաղին 'ի լոյս պայծառ արեւու.
 Նենգ, դաւ և զրկանք նախանձու ոգի,
 Իրաւանց սիրոյ քեւ ետուն տեղի.
 Եղբայր արդ եղբօր ուխտ դընէ հաստատ,
 Սիրալիր շըրթամք համբուրէ ճակատ.
 Քեզմով միշտ ապրիլ և քեզմով դործել,
 Զքեզ իր խղճին առաջնորդ ունել:

Ո՛վ յոյս միակ :

ՍԱՀԱԿԵԱՆ ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի՛նչ քաղցր ու սիրուն մէկ մօր զաւակաց,
 Լըսել շուրթն 'ի շուրթն ուխտերն փոխադարձ.
 Մէկն իր աչերուն ժըպտող դարդերովն,
 Միւսն անխէթ սըրտին սիրոյ զարկերովն.
 Ի՛նչ քաղցր ու սիրուն տեսնել ձեռք ձեռքի,
 Լըքեալ Հայրենեաց մաղթել կեանք հոգի.
 Որ զիրենք ծընաւ սընոյց և գըրգուեց,
 Բնութեան էն չքնաղ ձիրքերով զինեց:

Ո՛վ մայրդ հանուրց մարդկութեան,
 Անձկալիդ մեր Հայաստան.
 Աւ թող սըրտիդ վշտալից,
 Դադրին հառաչք սուգ կըսկիծ.
 Ձի ձեռք սանուցս հարազատ,
 Կապին 'ի քո սուրբ ճակատ.
 Պըսակ սիրոյ անըսպառ,
 Թէպէտ ծաղկամբք քեզ օտար:

Օ՛ն սաներս Սահակեան,
 Բարեկամք Հայ անուան.
 Սըլանանք թեւ թեւի,
 Յաւերակս հայրենի:

Կանգնել հոն մեր դրոշակ,
Անկործան յիշատակ.
Միութեան սիրային,
Մեր ուխտի պրսակին:



ՍԳԱԼԻ ՄԱՀ

ԶԷՅԹ ՈՒՆՅԻ ՊԱՏԱՆԻ ՈՅ

ԵՐԳ

Դու զո՛վ խնդրես մայր իմ անուշ,
Ե՛կ մի՛ դողար, մտեցիր հոս.
Անլաց աչօք դիտէ զորդիտ,
Ու իւր վէրքերն արիւնհաս:

Թըրքաց մայրեր թող լան ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ի՛նչպէս երբեմն որբանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով.
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրեւ հրեշտակ նուազելով:

Զիս հանգչեցուր 'ի հող ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

«Նորեկ որդւոյս կենաց արեւ,
Չեզի համար փայլի Հայեր».
Այսպէս յայնժամ դու երգէիր,
Օրօրոցիս նստեալ քովեր:

Անոնց համար շիջաւ և դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մայր իմ, նայէ չորս դին.
Զարիւնը ուշտ քիւրտերն տես,
Հազարներով փռուած գետին:

Կերաւ զանոնք սուր մեր ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ինչպէս վիշապ մրռնչելով,
Յանկարծ մեր վրայ յարձակեցան.
Յընցեց Զէյթուն գլխն ժայռոտ,
Իւր վեհից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկան թորք մեր ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Ձի չէ մեռած Հայոցս կրակ .
Ու ցնծացին այնչափ զոհեր ,
Ձի լուծաւ վրէժ յարեան վտակ :

Խնդաց մասիս , մայր իմ և դուն ,
Ուրախ լուրեր տար 'ի Ձէյթուն :

Վ Երջին համբոյր տամ քեզ Մայրիկ ,
Հատուցանես զայն սիրուհոյս .

Վ Երջին անգամ գրկեմ մեր հող ,
Ոյր արդ կիջնեմ 'ի ծոցն անոյս :

Խաչ մի տնկէ վրբաս՝ ու դուն ,
Ուրախ լուրեր տար 'ի Ձէյթուն



ԹԱՂՈՒՄԵ

Ձ Է Յ Թ Ո Ւ Ն Յ Ի Պ Ա Տ Ա Ն Ի Ո Յ Ն

ՊՍՐ ՁԷՅԹՈՒՆՅՈՑ

Ոչ փող զարկինք, ոչ արձագանք լեռնասոյզ ,
Ծարէ 'ի սար չարաշըշուկ տարին լուր .
Ու չերգեցինք ողբից՝ երգեր սրտայոյզ ,
Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ :

Գիշերական մունչ ըստուերներ շուրջ կային ;
Երբոր սրբով բըրով վհող փորեցինք .
Լուսին միայն դողդող շողար մեր դլխին ,
Սուգ էր պատեր ըզգաշտ բըլուր և երկինք :

Պէտք չէր դագաղ , և ոչ ճերմակ պատանքներ ,
Որով գոցուէր ազատորդի զէյթունցին .
Նա յետ մարտին կարծես հողնած կը հանգչէր ,
Ու վերարկուն կարմիր , բաւ էր իւր անձին :

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց ,
Մեր քաջ տէրտէրն , զինուոր Հայոց 'ւստուծոյ .
Գովեց զմահն և զքաջութեան իւր օրհնեց ,
Թոյլ չի տուաւ հառաջ մ'ուճիկ հանելոյ :

Բայց երբ գըլուխն 'ի բարձ դըրինք հողաչէն ,
Տեսանք զգեղ ճակտին ու վէրքըն պայծառ .
Ո՛վ պատանեակ ըսինք ամենքս մէկ բերնէն ,
Վասն հայրենեաց մեռար , դու շատ ապրեցար :

Գընա՛ զրուցէ հայկազարմից մեծ ոգւոց ,
Որ կան այս տեղ ազատ ու քաջ դեռ հայեր .
Որոնք 'ի բիւր պատերազմաց թէպէտ խոց ,
Մէջ ամպրոպաց 'ի ժայռ կանգուն են կեցեր :

Մէյ մ'ալ քամի յանկարծ վըչեց ցրտաշունչ ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ .

Ու մեր սարերն զերդ ուրուականք անմրուունչ ,
Սեւ գրլուխնին անկած դիտեն ապշութեամբ :

Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան ,
Խաչ մի դրրինք , ինչպէս իւր մօր պատուէր ետ .
Ոչ այլ շքքեղ արձանագիր ոչ տապան ,
Չէնքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ :

ՄԿՐՏԻ Զ ՊԵՇԻԿՍԱՆԻՆԱՆ

Հ Ա Յ Ն Ի Զ Է Յ Թ Ո Ի Ն

Ե Ր Գ

Աստեղն Հայկին կրակէ հետքեր ,
Նշմարեցաւ յեթերն 'ի վեր .
Սաւառնաթեւ հուր հետ ունէր ,
Թուէր վարսամ օրհասարեր .
Ում ժողովուրդք ահիւ մընան ,
Կարծեալ հասեր զերկրի կործան :

Յիշեց զորդիս և հայեցաւ ,
Սիրտն և ազիք գայարեցաւ .
Դէմք բոցադոյն դարձաւ 'ի յայտ ,
Տիգով աչաց կարծակնացայտ .
Շամբուրքն նետ յաջ ձախ շարժեց ,
Եւ սօսափիւն յաստեղս հընչեց :

Ազատ մասեաց 'ի սար սրացաւ ,
ՂՀայաստան բոլոր տեսաւ .
Ի կովկասայ մինչ 'ի Տաւրոս ,
Եւ 'ի Կաղբից ցԱլիւս Պոնտոս .
Լեռներ , ձորեր , դաշտ ու գետեր ,
Դուն օտարին բաժին եղեր :

Չըկայր պատառ մի հող միայն ,
Ուր հանգուոցէ զգրլուխն Հայն .
Հարքըն թափուր , որդիք ցրուեր ,
Պարսիկն ու քիւրտ են տիրացեր .
Հողւոց հանեց սրտից խորոց ,
Հայոց աչեր քաղեց յիւր ծոց :

Հըրով բոցով հասաւ Զէյթուն ,
Սիրուն զաւկաց ընտրեալն 'ի տուն .
Կեցաւ կանգուն ժայռից վերեւ ,
Շաղեց իւրոց կենաց արեւ .
Եւ զխաւար դարձոյց դիմաց ,
Ժանտից որդւոց դէպ երեսաց :

Երբոր տեսաւ եկեր պատեր ,
Անթիւ անհատ վայրենիներ .
Չաղատութեան զՍուրբ լեռներ ,
Կուղեն դընել յաւար յաւեր :

Չէ այս մանկան չէ օրօրոց ,
Այլ առիւծուց է սա բայոց :

Ուստի օձի պէս սողալով ,
Եւ նենգաւոր վատ խորհրդով .
Չի զկարեանց ճիրան թափեն ,
Սրով յետոյ խաղ արասցեն .
Եթէ կամիք զհաշտութիւն ,
Թողէք զզէն և զօրութիւն :

Հոգիս թէ տամ զէնքս չիտամ ,
Չէնքն է կենաց մերոց պահպան .
Ի զէնս ծնած , 'ի զէն մեծցած ,
Չէն առ 'ի զարդ , զէնի կազմած .
Երդուեալ լերանցս 'ի ծոց երկաթ ,
Դայեակ հարսանց մարց սրտակաթ :

Նա իմ կորիւն , հա իմ եղբայր ,
Մընաս բարեաւ ծերուկ իմ հայր .
Մայրիկ մի լար զաչերդ սրբէ ,
Տուած կաթըդ հէլալ արէ .
Խօսեցեալդ իմ համբոյր մի քեզ ,
Քոյր չեմք մինակ Աստուած ընդ մեզ :

Երթամ խառնեմ քաջաց 'ի պար ,
Ոտից կոխան գընեմ հաւսար ,
Ապստամբից բիւր գըլխըներ ,

Գնտակ առնում տամ վար ու վեր .
'Դարիւն թաթաղ լեզուաւ սըրոյս ,
Զվրէժ երգեմ իմ հայրերուս :

Ահա երեսն սարերն 'ի վեր ,
Սովալըլուկ անյագ գայլեր .
Քիւրտն ու գողեր են ճաչակեր ,
Իբրու ժանտախտ մեր վրայ հասեր .
Լերանց կատարքն ամպեր վարեր ,
Մռայլ մորիկ մարտից փրթեր :

Որտացին լեռներ ու ձոր ,
Եւ արձագանք յանտառս 'ի խոր .
Յորժամ կրակէ կարկուտ տեղաց ,
Եւ կապարեայ երկին չեղաց .
Շուառեցաւ կաց թշնամին ,
Մահաշըլուկ փակեալ յամպին :

Հասէք հովեր , հասէք ծովեր ,
Առէք տարէք դուք մեր քայլեր .
Լեռներ դուք մեր վրայ ինկէք ,
Եւ քարանձաւք մեզ ծածկեցէք՝
Չի զէյթունցուց մէն մի գնտակ ,
Պաղ մի փռէ մինէ դիակ :

Ի՞նչ են ներկեր մեր սարն ու սոր ,
Է՞ր զայրացեր գետք ընդ ծոր ծոր .

Ա՛հ ի՛նչ աղուոր որդիքն հայոց ,
 Զծիրանին արկեալ կրկնոց .

Լերանց արևնն դետոց յորդեւ ,
 Նոցա զարարս են մեզ պատմել :

Ո՞վ զէ յթունցի կրտրիճուորայք ,
 Բարեաւ դնայցէք բարեաւ դառնայք .

Կարմիր ոտիւք ընդ մէջ արեան ,
 Իբր ՚ի հնծան դոփեն թնգան .

Եւ պարակից իւրեանց կարգան ,
 Զորդիս հայկայ տուն թորգոմեան :

Կեցցէ յաւերժ մեր վեհ Սուլթան ,
 Կեցցէ նա միշտ ՚ի յաւիտեան :

ԵՄՄԱՆՈՒՒՆ ԵՍՍՅԵԱՆ

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

ՄԱՅՐՆ Անուշ քնակն աչերն առեր ,

Անուշ հովերն ալ տարուբեր !
 Իմ տատրակիս քունն է եկեր ,
 Անուշ երգով ըսեմ՝ օր օր :

ՈՐԴԻՆ Ես քուն չունիմ անգութ մարիկ ,
 Հերիք աչքս կապես , հերիք .
 Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ ,
 Իս արձրկէ , մ'ըսեր օր օր :

ՄԱՅՐՆ Մինչեւ չի լան մատաղ մանկիկ ,
 Ծիծ չեն իտար անոր դաննիկ .
 Դուն չի լացած իմ մէկ հատիկ ,
 Ես ծիծ կուտամ , կ'ըսեմ՝ օր օր :

ՈՐԴԻՆ Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր ,
 Կը ճրվճրվամ , դուն չես լսեր
 Անուշ ձայնիդ ես ըզմայլեր ,
 Ես կուլամ , դուն կ'ըսես օր օր :

ՄԱՅՐՆ Արցունքներդ մարգարտի պէս ,
 Երեսդ ՚ի վայր ի՛նչ կը թափես .
 Մի լար ծագուկ , մի լար , մեղք ես ,
 Ո՞վ կ'ուզես , ան ըսէ օր օր :

ՈՐԴԻՆ Գիրկդ ինձի հանգստարան ,
 Ծիծերդ բերնիս անուշ ծորան .
 Իրիկուան դէմ պառկիմ օրան ,
 Աչքս կապէ , ըսէ օր օր :

ՄԱՅՐՆ Քընայնեմ իմ աղանիս ,
 Մեծացընեմ սիրով սըրտիս .
 Կարմիր վարդի նըման բացուիս ,
 Ծուքըդ նըստիմ , ըսեմ՝ օր օր :

ՈՐԴԻՆ Քիչ մը թուլցնւր թեւերս ոտքերըս ,
 Ալ թըմրեցաւ փափուկ մըսերս .

Անուշ մըրափն առնէ աչքերս ,
Հապա սըխմէ կարդան օր օր :

ՄԱՅՐՆ Այդ սուտերովդ չեմ խարուիր ես ,
Կ'ուզես որ զիս նըստեցընես .
Չի քընանաս , ծիծըս ուտես ,
Դատարկ տեղը ըսեմ օր օր :

ՈՐԳԻՆ Քիչ մը ճոր ճոր , քիչ մը ճար ճար ,
Քիչ մը տան տան , քիչ մը պար պար .
Քիչ մ'ալ պապան , սու հոպպա տանր ,
Քիչ մ'ալ մէն մէն , ետքը օր օր :

ՄԱՅՐՆ Ատ քու լեզուդ կուտեմ հիմայ ,
Քու կանգունովդ կըտու չի կայ .
Տան տան , մէմէ , ալ հաբարայ ,
Աչուկ պահ պահ , ըսեմ օր օր :

ՈՐԳԻՆ Սիրող քար է , ալ հասկըցայ ,
Լացի լացի , շահ չի դտայ ,
Ալ քնանամ , ճարը չի կայ ,
Երկան երկան ըսէ օր օր :



Մի ծաղրէք զիս՝ ով պարոններ ,
Հարցուցէք թէ ինչ եմ եղեր .
Անտանելի ժանտ ցաւէ մը ,
Հանգիստ չունիմ մէկ րօպէ մը :

Սոխակի պէս ձայն մ'ունէի ,
Ուրախ զուարթ միշտ կերգէի .
Քաղցրիկ ձայնիկս ո՛հ մարեցաւ ,
Ագռաւի ձայնին նմանեցաւ :

Թռուլլալա թռուլլալա լախտի ութէ լախտի ութէ
Թռուլլալա թռուլլալա լախտի ութէ լառութէ
Թռուլի ութէ թռուլլալա լալլալա թռուլի ութէ
Թռուլլալա լալլալա թռուլի ութէ
Թռուլլալա լալլալա թռուլի ութէ
Թռուլլալալալալալա թիմ , բիմ , հէփչիւ ,
Խէր ըլլայ ,
Թռուլլալա թռուլլալա լախտի ութէ լախտի ութէ
Թռուլլալա թռուլլալա լախտի ութէ լառութէ :

Վարդի նման աղչիկ մ'էի ,
Անուշ հոտեր կը բուրէի .
Վարդի մը պէս շուտ բացուեցայ ,
Վարդի նման ալ թուածեցայ :

Ո՛վ որ տեսնար զիս կ'սիրէր ,
 Հետս նստիլ խօսիլ կուզէր .
 Հիմայ երես կ'դարձնեն ,
 Քիթդ « զուռնա » չալէ կ'ըսեն :

Պարոնի մը շատ սէր տուի ,
 Հոգիիս պէս կը սիրէի .
 Նա ինձ համար ես ալ անոր ,
 Պատառ մ'էինք կըլոր աղւոր :

Պարոնը ինձ սրդողեցաւ ,
 Տուած երգումներն ալ մտցաւ .
 Ուրիշի մը դնաց փակաւ ,
 Քիթդ « տավուլ » չալէ ըսաւ :

Ափսոս սէրն ալ իմ կեանքիս պէս ,
 Գնաց անցաւ շուտ մը այսպէս .
 Առանց սիրոյ կին մը ինչ է ,
 Աղւոր տեսքով խակ տանձ մ'է :

Չիս սիրողներ խիստ շատ ունիմ
 Գործի գալիք մէկը չունիմ .
 Շատերն գիտեմ որ զիս կուզեն ,
 Սակայն քիթը կ'աւրէ կ'ըսեն :

Ես միշտ սիրել սիրուիլ կ'ուզեմ ,
 Խաղալ ինչպէն խիստ կը սիրեմ .

Գեղեցիկ մէկը որ տեսնամ ,
 Անոր համար հոգիս կուտամ :

Կը սիրեն զիս և կը գգուեն ,
 Աղւորիկ ես լաւ ես կ'ըսեն .
 Բայց մէյմը որ ձայնս լսեն ,
 Վայ վայ աս ինչ ձայն է կ'ըսեն :

Դրացիս օր մը զիս ստիպեց ,
 Իրեն տունը հրաւիրեց .
 Աղջիկ կնիկ լեցուեր էին ,
 Հոն ինձ երգ մը կանչէ ըսին :

Բայց երբոր ես բայի բերանս ,
 Եւ սկսայ հնչել ձայնս .
 Քա վայ ըսին աս ինչ ձայն է ,
 Կարծես քիթը « խավալ » չալէ :

Կաղաչեմ ձեզ ով պարոններ ,
 Ըսէք ինձ ինչ պէտք է ընել .
 Ոտքս ջուրը դնեմ ինչ ընեմ ,
 Թէ ոչ քիթէս արիւն առնեմ :

Ասանկ երթայ բանս դէչ է ,
 Վախնամ մէկը զիս չալտի առնէ .
 Խերն անիծեմ այս քիթին որ ,
 Յմեն ատեն դործս կ'աւրէ :

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԶԻՆՒՈՐԻ ՄԸ ԵՌԱՆԴԸ

ԶԻՆՒՈՐԸ Ահա մարտին փողը հնչէ,
Զիս պատերազմ կ'հրաւիրէ.
Երթամ նետուիմ բոցերու մէջ,
Զի իմ փառքս միայն այս է:

Կեանքս արիւնս անձկայրեաց,
Զոհեմ թափեմ վասն հայրենեաց.
Զարնեմ ջարդեմ վատ թշնամին,
Թող մարմինս բերուի մեռած:

ԿԻՆԸ Օն ընդ յառաջ երթ անվեհեր,
Տուր թշնամւոյն վէրս կարեվէր:

ԶԻՆՒՈՐԸ Թշնամին մեզ կը մօտենայ,
Քաջ արանցս դէմ կ'յոխորտայ.
Վայրազ դազանն արիւնարբու:
Մեր հայրենեաց մահ կ'սպառնայ:

Օն ընդ յառաջ դիմենք անխռով,
Յրուենք վանենք սուխններով.
Ռումբ և կայծակ տեղանք դլխուն,
Փախչի խապառ վատն ամթով:

ԿԻՆԸ Գնա քաջդ իմ վէհ անվրդով,
Վատ թշնամին վանէ փութով:

ԶԻՆՒՈՐԸ Չինուոր եմք մեք երկիւղ չունիմք,
Վասն հայրենեաց միշտ կ'զոհուիմք:
Արիւն և կեանք չեմք խնայեր,
Ազատութեան համար կ'մեռնիմք:

Հուր կը ցայտէ մեր աչքերէն,
Արիւն հոսի մեր սրտերէն.
Երբ սուրն շողայ մեր ձեռքին մէջ,
Կը սարսին անոր շողշողումէն:

ԿԻՆԸ Հայրենիքէ մեր պահապան,
Ազատութեան անխոց վահան:

ԶԻՆՒՈՐԸ Մեք հայրենեաց նահատակ եմք,
Թշնամւոյ դէմ կը խիզախիմք,
Պատերազմի երբ փողն հնչէ,
Սուր 'ի ձեռին հոն կ'վազեմք:

Վայ անոր որ կ'խրոխտայ,
Ազատ քաջաց կուրծք կ'բանայ.
Շանթածիդ մեր դնտակներէն,
Կ'սատկի շան պէս անխնայ:

ԿԻՆԸ Վայ վատին այն որ իբր երէ,
Առիւծ քաջաց դէմ խիզախէ:

ՁԻՆՈՒՈՐԸ Մնացիր բարեաւ քաղցրիկ սէրդ իմ,
 Չիս կը կոչէ հայրենիք իմ,
 Պատերազմի դաշտին վրայ,
 Յիշէ զիս միշտ թէ իսկ մեռնիմ:

Ազատութեան է մեր դրօշը,
 Հայրենիք է մեր կրօնքը.
 Մեռնիմք զոհուիմք ամենքնիս ալ,
 Թող փրկուի մեր վեհ ազգը:

Ի ՄԻԱՍԻՆ Հապ ՕՆ յառաջ 'ի զէն 'ի վրէժ,
 Հայրենիք մեր կեցցէ յաւերժ:
 Թ. ՆԱԼԵԱՆ

ՆՈՒԱԳ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ողջոյն հրեշտակդ աւետաբեր,
 Ողջոյն զուարթունդ երկնային.
 Սիրտք անձկայրեաց մեր անհամբեր,
 Քեզ ընդ երկար մնային.
 Խնդա Հայաստան,
 Հայոց որորան:

Լուսափետուր իջաւ յերկնից,
 Սէրն ի ժրպիտ հայրենեաց.
 Լցաւ քաղցրիկ յոյսեր ազգիս,
 Ծագեց արեւ խնդութեանց.
 Յնձա Հայաստան,
 Փառաց օթեւան.

Ահա այժմիկ վարդէ պսակ,
 Կը բողբէ քո ճակտին.
 Սիրտ առ և քայլ առ համարձակ,
 Առջիդ բացուած յասպարիզին.
 Ոյժ առ Հայաստան,
 Քաջաց գերեզման:

Հայեր՝ լուսոյ ժամն է հասեր,
 Օն՝ վառեցէք ձեր ջահեր.
 Չեր քով առատ իւղ ունեցէք,
 Չի խաւարին չի մնաք երբէք:
 Ալ եւ Հայաստան,
 Կանգնէ յաւիտեան:
 Ա. Մ. Մ.

Սիրոյ չքնաղ պերճ հրեշտակ,
 Չեռքն ի մատեան սուրբ օրինաց.

Անդրէն յերկնուստ դայ երկնառաք,
Մեզ պարգեւել սահման և կարգ .

Սէրն ու միութիւն,
Սահմանադրութիւն :

Ժպտի զուարթուն գեղածիծաղ,
Ես եմ, գուչ, ձեր փրկութիւն .
Ես Հայոց փառք, ես սիրտ խաղաղ,
Դարձեալ անդրէն դամ աւետել .

Սէրն ու միութիւն,
Սահմանադրութիւն :

Ա՛լ մերկացէք խեռ նախանձու,
Չար մախանայ կեղծ վերարկու .
Հեռու ոգին ատելութեան,
Եւ առաջնորդ թող ձեզ ըլլան .

Սէրն ու միութիւն,
Սահմանադրութիւն :

Փառք յոյս և լոյս Հայոց ճակտին,
Չերդ գարնայնի արեւ փայլին .
Հաշտ են երկինք ընդ ձեզ, Հայեր՝,
Չեր հեա ըլլան անձայր դարեր .

Սէրն ու միութիւն,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Ա. Մ. Մ.

Ե Ր Գ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԷԻ

Հիմի է՛լ լըռենք, եղբարք, հիմի է՛լ,
Երբ մեր թշնամին իւր սուրն է գըրել,
Իր օրհասական սուրը, մեր կըրծին,
Ականջ չի դնում մեր լայ ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թշնամին,
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ձընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խըլեց մեզանից թագ, և խօսք, և զէնք,
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թշնամին,
Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խօփը խըլեց,
Այդ սուր ու խօփից մեր շղթան կըռեց,
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք,
Հիմի է՛լ լըռենք :

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թշնամին,
Սոսկալի զէնքը բըռնած մեր գլխին,

Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարչ բողոք վարուց ապիրատ,
Մեր գլուխը լալու Եփրատ ո՞ւր պըտունք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին,
Լիբբ գուռզութեամբ լցրած էր հողին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխտ, հալածեակ, եղբարք, ո՞ւր դիմենք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիբբ, նըզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց,
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլաղգեստ գառին մեզ գըլուխ դըրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի է՞լ լըռենք:

Հիմի է՞լ լըռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չե՞ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ ստըրկական անարդ վիճակին,
Մեր սուրբ քաջ նախնեաց դորձերը գիտենք,
Մինչեւ ե՞րբ լըռենք:

Թո՛ղ լըռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հողի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք,
Ու այնպէս լըռենք:

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՄԱՍՆ Բ. ԸՆԿԵՐՔ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԵՐԳՈՅՆ

Հայ եմք մեք անուամբ դիւցազն սուրբ արեամբ,
Առինք մեք դրօշ արտասուք քաջութեան .
Յաղթենք զինահար երկչոտ դրացիք,
Ուր հոս այցելու են վատ գռեհիկ .
Մեզ կանանչ դափնի և ծաղկանց պսակ,
Հիւսին կարմրորայք, կռուեցէք տղայք .
Շեշտ սուր հարուածոյ կոտորեցէք նիզակք .
Ըլլայ վատին սիրտ լերդ խառնորակ :
Ի սուր, ՚ի սուր մղենք ի բաց,
Այն Պարսիկ յազգաց :

ՋԻՆՈՒՈՐԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Աս ի՞նչ կորուստ ինչ մեծ ցաւ ,
 Բանթէլոնիս կոճակը ,
 Կոճկեճիքէն բրթեցաւ ,
 Գնաց մտաւ որ ծակը :

Ա՛հ կ'աղաչեմ պարոններ ,
 Թէ որ տեսաք նէ տեղ մը ,
 Իմացուցէք որ ծակն է ,
 Երթամ հանեմ զայն շուտ մը :

Ոչ պզտիկ էր ոչ մեծ էր ,
 Չափաւոր ալ չէր ըսուէր .
 Ինչ գոյն ըլլալն ալ մուգայ ,
 Կարմիր էր թէ սեւի վրայ :

Ա՛հ մի՛ խնդաք պարոններ ,
 Այս կորուստս քիչ բան չէ ,
 Յիսնապետս իմանայ նէ ,
 Վերջը բանիկս բուսած է :

Գտէք գտէք
 Կոճակս գտէք
 Գտէք գտէք
 Կամ տաս փարա տուէք :

Միտքս կուգայ թէ վրան ,
 Արծիւ մը կար խոշորկէք ,
 Եւ կորուսեալ այս կորճան ,
 Գամկած էր հոս ամուրկէկ :
 Ա՛հ մի՛ խնդաք պարոններ , եւ լն :

Խանութները չեն ծախեր ,
 Եւրոպայէն չեն բերէր ,
 Շունշանորդի կոճակին ,
 Ծառն ու արմատն է չորցեր :
 Ա՛հ մի՛ խնդաք պարոններ , եւ լն :

Բրուսիացւոց կռիւր ,
 Իմ գլուխս ալ պայթեցաւ ,
 Քանզի Լօրէն և Ալշաս ,
 Կոճակիս հետ մէջ խաղայ ,
 Ա՛հ մի՛ խնդաք պարոններ , եւ լն :

Ձինափորձին ատենը ,
 Կը դիտեն մեր չորս կողմը ,
 Ոտքէս բռնէ մինչեւ վեր ,
 Կը խառնեն տեղ չեն ձգեր ,
 Ա՛հ մի՛ խնդաք պարոններ , եւ լն :

Կուտան ձեռքս հրացան ,
 Շալկէ կըսեն ուսիդ վրայ ,

Ի՞նչպէս կայնիմ դուք ըսէք,
Բանթէրնս վար կիյնայ:

Ահ մի՛ խնդաք պարոններ, եւ ըն:

Բարեկամացս հանդիպիմ նէ,
Հարկաւ պիտի բարեւ տան:

Չեռքս հոսկէ պակաս չէ,
Պիտի տեսնեն ու խնդան:

Ահ մի՛ խնդաք պարոններ, եւ ըն:

Աղջկանց ալ բան մը պէտք է,
Երբոր տեսնեն կը խնդան,
Ճամբաս հատաւ փոխելով,
Թուչելու է պալօնով:

Ահ մի՛ խնդաք պարոններ, եւ ըն:

Պառաւ կանանց բերանն ալ,
Կրնաս գոցեր նէ գոցէ,
Անանկ բաներ կը մաղեն,
Որ կոճակս բանբասեն:

Ահ մի՛ խնդաք պարոններ,


Սիրուհիս ալ Աստուած տայ,
Աս փորձանքս չիմանայ,
Քանզի դիտեմ վախկոտ է,
Պղտիկ բանէն դող կ'ելլայ:

Ահ մի՛ խնդաք պարոններ, եւ ըն:

Կեցէք միտքս բան մ'եկաւ,
Վաղեմ երթամ ճար չ'կայ,
Տիօթէնը ուր որ է,
Գուցէ կոճակս այն գտնայ:

Ահ կ'աղաչեմ պարոններ,
Չըլլայ երբէք զիս ծաղրէք,
Օր կ'ըլլայ որ բրբուռնէք,
Գուք ալ կոճակի տէր էք:

Գ. Լ. ԱՇՏՈՒՄ



ՅԱՆԿ ԵՐԳՈՅ

ԵՐԵՍ

Ս'իս Հայաստան , Հայաստան	7
Սրբիք Հայկազունք , յառաջ ընթանանք	9
Սղատ Աստուածն այն օրից	11
Ահա յերկնից ժպտի Աստուած քաղցր առ մեզ	15
Սկոռիին մեծ կարասին բոլորտիքն են բազմեր	15
Ահա բաժակ ուրախութեան	16
Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բար	18
Անի քաղաք նստէր՝ կուլայ	20
Առ ընկալ 'ի գիրիդ մայրդ Հայաստան	22
Սրբիք Հայկայ քաջ սերունդք	25
Սրկածք Հայոց ժամանակին ընդ անիւ	25
Սրթնցի՛ր ո՛ Հայ , նոր արշալուսով	26
Սհա աղաւնին , Նոյեան տապանին	29
Ահա ցոլայ նոր առաւօտ	196
Սրբք ազատ կովկաս մասիք	199
Ստեղն Հայկին կրակի հետքեր	216
Սնուչ քնակն աչերն առեր	220
Ահա մարտին փողը հնչէ	226
Աս ի՛նչ կորուստ ինչ մեծ ցաւ	254
Բա՛մբ . . . որոտան բարձուտ բոմբիւնք	31
Բանաստեղծին քնարին թեւեր	193
Գարուն Հայաստան դայ ծաղկապսակ	33
Գարունն էր կենացս դեռ	33
Գարանամուտ կամ վարուց ես լըռիկ	37
Գու փափկաթեւ մանկիկ զեփիւռ	197

Գու զո՛վ խնդրես մայր իմ անուշ	212
Գու նոր Հայրենիք , դեռ նոր ազգութիւն	38
Գուք մէջէն ես քովէն	40
Ես դաւար ծառ մի անկեալ 'ի Հայկայ	44
Երբոր բացուին դռներն յուսոյ	46
Եկաւ ժամանակ բարեկամ բազդին	47
Եղբայր , մինչեւ ե՞րբ այսպէս լուռ տըխուր	49
Երկի՛ր քաջազանց , քանի՛ սուգ աչեր	183
Երդ սիրոյ , երդ Հայրենի , քեզ կուղղուի	55
Զերկնաբերձ գլխով սառնապատ լերին	57
Էյ սէրվէրի կէրտուն մէզամ	53
Էր դու այսպէս . ո՛ սեաւ Գիշեր	59
Ընկերք յաղթութեան ժամն արդ հասէ	63
Ընցան տարին , Հայոցս էլ փառք ընցաւ հիւտ	176
Թէ իմ ալեւոր հերքս սենային	65
Թէ իմս Հայրենեաց քնար սղաւոր	63
Թէլայտ ես մեծ տան նշան եմ	69
Թէ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք	70
Թեւ 'ի թեւ օն ընկերք	195
Թէ 'ի հրացան դրօշ մահաբեր	203
Ժամ է , Հա՛յեր , արիք ձեր բազդըն ողջունել	71
Իրիւր ձայնից բնութեան շքեղ	73
Ի զուր ամպերն որոտացին	73
Իմ Հայրենիքս զիս կը կանչէ	77
Իմ սիրելի զաւակունքս	78
Ի խուճը 'ի սլար	60
Իջէք զուարթունք՝ և 'ի ջեր թեւս ասպս	81
Ի քեզ անկայ Հայաստան	85

Ինչ քաղցր ու սիրուն մէկ մօր գլուակաց . . . 211

Լուս և տխուր դաշտեր գեղեցիկ . . . 85

Լացէ՛ք պատանիք և կուսանք Հայոց . . . 179

Կար ժամանակ, որ և Հայերն . . . 86

Կրօնունկ ուստի՞ կուգաս ծառայ՝ եմ՝ ճայնիդ . 87

Հայաստան երկիր գրախտալայր . . . 90

Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն . . . 91

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր . . . 92

Հայաստանեայց սեւ տխրագին օրերը . . . 94

Հրեշտակ Մասեաց մրտենիներ 'ի ձեռին . . . 96

Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք . . . 98

Հուր բարկութեան համայն հայոց . . . 100

Հայաստան քաղցր իմ Հայաստան . . . 101

Հայկազունք պար բռնենք . . . 105

Համա ու սէնա օլ Խիւտայի գատիրէ . . . 105

Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց . . . 106

Հրճուին երկինք, խայտայ երկիր անթ երի . 189

Հայկազն որդիք հապ՝ օն 'ի դաշտ . . . 191

Հիատեսիլ դէմքիդ գեղոյն . . . 194

Հիմի է՞լ լըռենք, եղբարք, հիմի է՞լ . . . 251

Հայ եմք մեք անուամբ դիւցազն սուրբ ար . 255

Մայր-Արաքսի ափերով . . . 107

Մանկութեան օրեր, երագի նման . . . 112

Մեր Հայրենեաց փափուկ հողեր . . . 114

Մեր սիրուն Հայրենեաց . . . 116

Մի՛չ շուքո գիշերոյ խաղաղ թագուհին . . . 118

Մինչ Հայրենի զուարթ յախանց տարագիր . 119

Մի ծաղրէք զիս՝ ով պարոններ . . . 225

Մնասցես բարեաւ սէր իմ սէր . . . 120

Մուսայք մասեաց ելէք 'ի դաշտ . . . 121

Մինչ ծովամաց կան 'ի խշտիս արփուոյն սը . 125

Յազատն 'ի վեր 'ի Մասիս . . . 127

Յաւուր միում մէկ քարահատ . . . 129

Յառա՛ջ, յառա՛ջ. — Ո՛վ Հայկազունք . . . 149

Նուաղեալ կենաց իբրեւ յոյս . . . 155

Նստիր, Շիրին, ասեմ քեզ, մէկ օր մեր . . . 155

Նուրու ֆէրրի միհրումահըն . . . 140

Շէհինշահը դէման Սպտիւլ Սղիզ Խան . . . 208

Ողջոյն քեզ ո՛ դաշտ և սիրուն ափունք . . . 141

Ո՛չ զուարթ գարուն, ո՛չ օր մի սիրուն . . . 145

Ս՛ն ինչ անուշ ինչ գեղեցիկ . . . 144

Ո՛չ ինչ անուշ և ինչպէս զով . . . 145

Պղջոյն ընդ քեզ Հայաստան . . . 147

Ո՛վ քաջազունք, ձեզ հրաւէր . . . 148

Ո՛ սգատերեւ յեցեալ նոճոյս 'ի ստորոտ . . . 150

Ո՛վ մեծաքանչ դու լեզու . . . 151

Որդիք Հայկայ, որդիք փառաց . . . 155

Ողջոյն քեզ, ո՛վ երջանիկ Օր . . . 173

Ոչ այնպէս հրճուի յորրանի մանկիկ . . . 186

Որպէս հէք ստրուկ, Հայրենեաց կարօտ . . . 201

Ո՞չ, քաղցր է քո սէր, ո՛ կոյս . . . 203

Ոչ այնպէս հրճուի յորրանի մանկիկ . . . 210


Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյց . . 214

Ողջոյն հրեշտակդ աւետարեր . . . 228

Քե՛ն օրերս մեզ օր խնդութեան . . . 156

Քիր թագըմ սատէ եւրէք մուսաուն փաքի . 158

Սա տխուր վիճակ տարարողը Ազգիս	159
Սիրոյ չքնաղ պերճ հրեշտակ	229
Տէր կեցո դու զհայս	160
Տուք ինձ ձերմակ ճախրասրբաց	161
Տարի մ'ալ անցաւ	162
Տանն Օսմանեան արեւ պայծառ	164
Փարատեցաւ երկնից կապոյտ	187
Քուցուրտ շիրմիդ վրայ ուր վա՛հ կայ	166
Օտար երկիր թափառած	167
Օ՛ն մեր նախնի դարուց կարդամք հըրուէր	168
Օտար ափունք ցրուած 'ի սիրւո	178



20066

2013

